Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5547
5548

1902

9(47.925)
Л-44

304
V/310

9(479.925)
Ստ-44

Բաղ. Աստվածաշունչ!

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

ԲԱԳՈՒ

ԵՒ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1007
33228

Աշխատութիւն
Աբգար Աստաց Քահանայ Տէր-Յարութիւնեանցի.

34ԿՀ

ԲԱԳՈՒ
Տպարան Յ. Գ. Գիւլբասարեանի
1902.

Дозволено Цензурою 4 мая 1902 г., Тифлисъ

83109-ակ
947-90 գ
2004

Նորին վեհափառութեան

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Ի ՆՇԱՆ ԱՆԿԵՂԾ ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԵԱՆ

Ամենախոնարհ յարգանքով

ՆՈՒԻՐԵԼ

Աշխատասիրողը։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ,

Վիշտն անպակաս եղաւ սրբութեանդ տեղերով ու յոյսերով զեղուն սրտից. և արտասուում էիք հայրենի տունը կորցրած, աստանդական և սովալլուկ մնացած զաւակներիդ համար։ Սակայն վշտակից էր Ձեզ հետ Ձեր ամբողջ հօտը. վասն զի ցաւը, որ արտասուք էր պատճառում պաշտելի Հօրդ, կրումէին մեր արիւնակից և հոգեկից եղբայրներն ու քոյրերը։ Ոչ մի քարացած սիրտ չէր կարող չարտասուել, տեսնելով Ս. Լուսաւորչի զաւակներին Տիրոջ խաչը բարձած, թողած հայրենի տուն, հայրենի օջախ, թողած դարերով պաշտած նուիրական տաճարներ, անցած փլատակներ ու մոխրակոյտեր և ամենուրէք ձեռք մեկնած, մի տեղ, մի եաթաղ, մի հալաւ ու մի փշուր հաց՝ խնդրելիս։

Բաղուն հարազատ եղբօր ու քրոջ նման գրկեց, ամոքեց նրանց վիշտը և ոչ մի ջանք ու ճիգ չ'խնայեց թեթևցնելու նրանց դառնաղէտ վիճակը։

Սուրբ Օծութեանդ նուաստ ծառայս պատիւ ունեցայ այդ անբաղդներին Բաղումում խնամող մասնա-

ժողովներին նախագահելու. այլ և ի վերջոյ ճանապարհելու նրանց մինչև իրանց հայրենիքը։

Այդ պատճառով նրանց կացութեան մանրամասնութիւններին լիովին տեղեակ լինելով, աւելորդ չ'համարեցի նրանց՝ տեղն գալու, մնալու և վերադառնալու համառօտ, բայց ամփոփ պատմութիւնն 'ի լոյս ընծայելու. նաև համարձակուեցի սոյն դուզնաքեայ աշխատութեանս ճակատը պսակել Հայոց վեհափառ Հայրիկիդ պաշտելի անունով, իբրև նշան հաւատեաց մշտապատրաստ հնազանդութեան և անկեղծ անձնուիրութեան։

Ձեր Սուրբ Օծութեան միշտ ամենախոնարհ
և ամենահնազանդ ծառայ

Երգար առաջ քահանայ Տեր-Յարութիւնեան.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Աբրահամեան Առաքելական մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Արժանապատիւ Տ. Արզար քահանայի Տէր-Յարութիւնեան, միաբանի Ս. Ա-ծածին եկեղեցւոյ Բագու քաղաքի, հարազատ որդւոյ Մ. Աթոռոյ ողջոյն և օրհնութիւն։

ԸՍՏ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՈՅՍԵՐԱԿԱՆ հաճութեան ԹԱԳԻՒՈՐ ԿՈՅՍԵՐ ամենայն Ռուսիոյ հիմնեալ ի վերայ որոշման նախարարական ժողովոյ ի 26 Մարտի ներկայ ամի կարգադրեալ է յընթացս միոյ ամի վերադարձուցանել ի հայրենիս իւրեանց զգաղթականս Տաճկաստանի, որ յերից ամաց հետէ 'ի զանազան կողմանց գաղթեալ էին 'ի կողմանս Կովկասու և Ռուսիոյ։ Որոշումն այն գրութեամբ իւրով Տ. Կառավարչապետն քաղաքական մասին Կովկասու յայտնեաց Մեզ ի 11 Ապրիլի անցելոյ թ. 115, որով և զմերն աջակցութեան զպէտս զգացուցանէր առի դիւրաւ և յաջող վերադարձուցանելոյ զգաղթականս յիւրաքանչիւր տեղիս։ Եւ քանզի Մեզ ևս հաւաստեաւ յայտնի էր գրութիւն երկոցունց կողմանցն ևս թէ գաղթականաց և

թէ հիւրընկալաց նոցին Հայ-գիւղականաց, Մեք յարմար դատեցաք օգտիլ 'ի Բարձրագոյն որոշմանէն այնմիկ և որքան հնար է զձեռնհասութիւն Մեր չ'կամիմք զլանալ. ուստի և վասն ցանկացողաց յայսմ առաջին նուագի դաղթականաց, որք յօժարութեամբ ցանկան վերադառնալ յիւրաքանչիւր տեղիս և են թուով մօտ հազար անձինք ընդ այր և ընդ կին, Մեք այսու Հայրապետական կնդակաւ կարգեմք զքեզ առաջնորդող նոցին և խնամակալ 'ի ճանապարհի մինչև ի սահման Ցաճկաստանի 'ի Վան քաղաք, որ և վասն դիւրութեան քո և ազատ մուտ գործելոյդ 'ի Ցաճկաստան արդէն պատրաստի ունիս զարտաքսման-եան անցագիր։

Պարտիք քո լիցին ամենայն խնամով և հոգածութեամբ հասուցանել զթշուառ վտարանդեալս զայնոսիկ 'ի Վան քաղաք, որ կենդրոնավայր համարի յայսմ վերադարձող խմբի, ուրանօր յանձնարարեալ տեղական իշխանութեան աջակցութեամբ հիւպատոսին Ռուսաց, որ 'ի Վան, վերադարձցիս այսր։

Օրհնելով զճանապարհն քո և զյաջող վերադարձն՝ մաղթեմք յամենակալէն Ա՜յ հրեշտակի խաղաղութեան յանձն առնել զքեզ և խումբ գաղթականաց առ ի յաջող և ի հանգիստ հասանել իւրաքանչիւր 'ի բնակութիւնս։

Ողջ լեր և օրհնեալ յԱ՜յ Հօրէ և 'ի Մէնք. ամէն։

'ի 1-Յունիսի 1898 ամի և ըստ տոմարիս ՌՅԽԷ 'ի Հայրապետութեան մերում ե ամի
ՅԱրարատ-Մ. Աթոռ Ս. Էջմիածնի.
'ի Վաղարշապատ։ թ. 682.

Մ. Կ. Ա. Հայոց.

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

ԲԱԳՈՒ

1870 թուականներին Զամախուոյ երկրաշարժը մի կողմից, Ղարաբաղի սովը միւս կողմից, տեղական ժողովուրդներից հարիւրաւոր ընտանիքների ենթարկումն դառն աղքատութեան, որոնք դէթ մի կտոր չոր հաց ձեռք բերելու համար, չու

դէպի Բագու, որ նոր էր սկսել մեծ ապագայի գրաւականները տալ։ Այդտեղ շատերը մնումն ձեռնունայն և ճարահատեալ, որ գոնէ քաղցից չմեռնելու համար դիմումն վերջին միջոցին—մուրացկանութեան։

Տեղական ունևոր հայերից ոմանք ի նկատի առնելով որ կոպէկներով ողորմութիւն տալով հնար չի լինիլ մուրացկանութեան առաջն առնելու, այլ դորա համար հարկաւոր է մի օրինաւոր միջոց. ուստի վճռում են մի աղքատախնամ հոգաբարձութիւն կազմել, որի շնորհիւ կարելի լինի դրամական մի շօշափելի միջոց ժողովել։ Եւ որոշումն այդ միջոցը ձեռք բերել թէ անդամակցական տուրքով և թէ կամաւոր

նուիրատուութեամբ։ Եւ Բագու քաղաքում այդ նպատակի համար ընտրուած անդրանիկ հոգաբարձութիւնը կազմուում է 1872 թ. Ապրիլի 1-ն։

Այդ հոգաբարձութիւնը, որ կազմուում էր հինգ անձնաւորութիւնից, բացի անդամակցական տուրքից և կամաւոր նուէրներից, պարտաւոր էր ամէն կերպ դրամական միջոցը ընդարձակել և կարօտեալների համար գործ դնէր ըստ հայեցողութեան յարգելի անդամների։

Եւ նա շնորհիւ բժշկապետ Ռոստոմեանի, Ս. Բաղրեանի, Գ. Թումայեանի, Գրիգոր Ասլանեանի, Գրիգոր Դիլդարեանի և այլոց ջանքերի՝ ուղիղ 21 տարի գործելով, այն է 1872 թուականից մինչև 1891 թուականը կատարել է բաւական բեղմնաւոր գործեր։

Նա կազմել է կանոնադրութիւն և առաջարկել է պատշաճաւոր իշխանութեան կողմից հաստատելու, որ դլխաւորն է, անտուն և անտէր խեղճերի համար կառուցել է մի հոյակապ տուն, որ հինուած օրից մինչև օրս իւր յարկի տակ պատսպարել է հազարաւոր աղքատների։

Այդ տունը կառուցուել է հոգաբարձութեան հիմնադիրներից մէկի—պ. Գրիգոր Դիլդարեանի յատուկ վերահսկողութեամբ, որի բարի անունը կ'մնայ ընդ միշտ անմոռանալի այդ տան մէջ ամեն մի պատսպարուածի սրտում։ Պ. Գրիգոր Դիլդարեանի աղքատանոցի համար արածների մասին աւելորդ ենք հա-

մարում երկար կանգ առնել։ Ահա այդ տունը մի անընկճուն կոթող է նրա անուան համար և մի փառաւոր վկայ նորա պտղաւէտ գործունէութեան։*)

Թէ որքան ծառայութիւն է մատուցել այդ հիմնարկութիւնը հազարաւոր անբաղդների 1872 թուականից մինչև 1894 թուականը, այդ մասին մանրամասն իմանալու համար առաջարկումեմ պ. Ա. Գալստեանի կազմած «Բագուայ Հայոց Աղքատանոցի հիմնարկութեան պատմութիւնը» վերնագրով գրքոյկը. բայց որովհետև իմ նպատակնէ սոյն գրքի մէջ ամփոփել գլխաւորապէս, Ցանկահայաստանից այստեղ ապաստանած և ապա հայրենիք վերադարձած գաղթականների պատմութիւնը. ուստի պատշաճաւոր եմ համարում աղքատանոցի պատմութիւնը սկսել այն օրից, երբ նա յանձնուել է իմ խնամքին, մանաւանդ

*) Այստեղ պէտք է յիշել պ. Գրիգոր Ասլանեանին, որի առ թշուառներն ու աղքատներն ունեցած սէրը և հայրական ջերմագին դութը հիացումն էր բերում իւրաքանչիւր փոքր ի շատ է կենդանի սիրտ ունեցող մարդուն։ Բագուայ այս և այն ընկերութիւնների այդ պատկառելի վետերանը իւր հոգւոյ վեհութեամբը, իւր անդուլ գործունեութեամբը և անդադար հոգացողութեամբը կատարեալ իրաւունք ունի Բագուայ անպաշտպան խեղճերի հայրը կոչուելու։ Եւ նրան է դիմում իւրաքանչիւր կարօտեալը, նրան է ձեռք մեկնում յուսալով, որ ինչպէս հայր՝ ձեռի մէջ քար չի դնիլ հացի փոխարէն և ոչ օձ՝ ձկան փոխարէն։ Բագու քաղաքում չկայ մի աղքատ, որին չ'ճանաչէ պ. Ասլանեանը և չ'կայ նրանցից մէկը, որ վայելած չ'լինի Գրիգոր Աղօր բարիքը։ Իւրաքանչիւր տարի Զրօրհնեաց և Զատկի տօներին (որ սովորութիւն է հարուստների կողմից օգնութիւն՝ դէպ չքաւորները) հարիւրաւոր սփռոցներ է նա կապում լեցուն ամեն տեսակ բարիքներով և այդ բոլորը պատաստրուում են անբաղդների և կարօտների համար։ Այդ օրերին մինչ չքեղաշուք կառքեր, ազ ու ձախ պատուելով մերթ ընդ մերթ կանգ են առնում այս և այն տան առաջ, մի ոչ այնքան ծերունի մարդ սև արխալուղով շուխայով, գօտիով և մորթէ գդակով, այցելութիւններ է անում այս և այն նկուններում, խրճիթներում և գանազան նուէրներով ուրախացնում հարիւրաւոր որբերի և այրիների։ Դա պ. Գրիգոր Ասլանեանն է—ընդհանուրի սիրելի Գրիգոր ապերը, (այժմ հանգուցեալ).

որ միայն այդ ժամանակամիջոցում տեղի ունեցաւ հայ գաղթականների հոսանքը դէպի Բագու և նրանց վերադարձը հայրենիք։

1893 թուականին, երբ նախկին հոգաբարձութիւնը դադարում է գործելուց, ընտրւում է դարձեալ հինգ հոգուց բաղկացած նոր հոգաբարձութիւն, որ և գործում է ոչ պակաս եռանդով. սակայն մի տարուց յետոյ, այսինքն 1894 թուականի վերջերին, հոգաբարձուներից մի երկուսը հրաժարումեն, մնացածներն էլ դադարումեն գործելուց։ Ահա այդ իսկ թուականի դեկտեմբեր ամսին, (իսկ ես այդ թուականի նոյեմբերին էի նորին Վեհափառութեան հրամանով տեղափոխուել Բագու) Ճամախուց Հայոց վիճակաւոր առաջնորդ Սրբազան Մեսրովբ Աղբեպիսկոպոսից ստանումեմ մի գրութիւն № 380, որով նորին բարձր Սրբազնութիւնը հրամայում է ինձ նախագահել աղքատախնամ հոգաբարձութեանը։

Ինձ հետ իբրև գործակից դեր. Մեսրովբ Սրբազանի կողմից նշանակուածէր Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ երէցփոխան պ. Ս. Յոհաննեանը. իսկ մի երկու տարուց յետոյ նորա փոխարէն նորընտիր երէցփոխան պ. Համբարձում Մելիքեանը, որի հետ և միասին աշխատեցինք Աղքատանոցը բարեկարգել և պահպանել թէ եկեղեցւոյ հասոյթներով, թէ գանձանակադրամով և թէ կամաւոր նուէրներով։

Նկատելով, որ աղքատանոցում ապաստանել են և այնպիսի անձնաւորութիւններ, որոնց ոչ միայն

աղքատ լինելն էր կասկածաւոր, այլ և նրանց բարոյական կողմը, ոյժերի չափ աշխատեցի աղքատանոցը զերծ պահել այդպիսի անձնաւորութիւններից։

Եւ որովհետև այդտեղ արդէն մտածներին դժուար էր միանգամայն հեռացնելը, այլ և ի նկատի առնելով, որ այդ դրութեան մէջ արտաքսելով աւելի կ'մօտենան խորխորատին, ուստի սկսեցի դեռ խրատները ու յորդորները կարդալ. խնդրեցի որ հեռու կենան անմաքուր ճանապարհներից, սակայն հնար չ'եղաւ։ Ապարդիւն էին անցնում թէ իմ խրատները և թէ իմ յորդորները ու խնդիրները։ Սկսեցի սպառնալ և արտաքսել. բայց դարձեալ զուր, դարձեալ ապարդիւն։ Ճարահատեալ առաջարկեցի որ մի որոշ ժամանակամիջոցում իրանց համար տեղ գտնեն և թողնեն, որ Աղքատանոցը մնայ և ծառայէ իւր կոչմանը։ Այս առաջարկութիւնն ևս չ'կամեցան քաղցրութեամբ ընդունել, այլ ընդհակառակը իրանց յանդգնութեանը սկսեցին հրապարակական ձև տալ։ Այն ժամանակ ստիպուեցինք դիմել մարմնաւոր իշխանութեան ոյժին և դատարանի միջոցով միայն հետզհետէ կարողացանք Անմահ քահանայապետի օրինակը կրկնել. մաքրելով Տիրոջ անունով չինած տունը՝ ահազակներից, աղտաւանվաճառներից, սեղանաւորներից, եւ բոլորովին ոչ բարոյական անձինքներից, և տեղ տալ Փրկչի իսկական քոյրերին և եղբայրներին։

Այնուհետև ժողովուրդը նկատելով, որ Աղքատանոցում տեղաւորուել են իսկապէս օգնութեան և կա-

ըեկցութեան արժանի թշուառները, չէր զլանում օգնութեան ձեռք մեկնել, որի շնորհիւ և այդտեղ պատսպարուած խեղճերին պահպանեցինք մինչև 1896 թուականը, որից յետոյ սկսուեց Տաճկահայաստանից հալածուած հայ գաղթականների հոսանքը։

Դեռ մինչև այդ պէտք է ասել, որ մեծ քանակութեամբ ասորի ընտանիքներ իրանց հայ ձեւացնելով, բաւական ժամանակ տեղաւորուել էին Աղքատանոցում։ Սակայն և թէպէտ դրանց Ասորի լինելը ուշ իմացանք, այնուամենայնիւ ամեն կերպ պահեցինք նրանց, կերակրեցինք և մերկութիւնը ծածկեցինք։ Իսկ ի նկատի առնելով նրանց պորտաբոյծ բնաւորութիւնը, մանաւանդ նրանց առողջ և յաղթանդամ տղամարդկանց, որոնք ամենահեշտ պարապմունքըն անդամ մերժում էին. ի նկատի առնելով և աղքատանոցի կանոնադրութիւնը, որի զօրութեամբ իրաւունք ունէինք աղքատանոցում միմիայն հայ աղքատները տեղաւորելու, ասորիներին ամեն կերպ ապահովելով, այլ և առատ ճանապարհածախս տալով, կարողացանք համոզեցնել վերադառնալ իրանց հայրենիքը։

1896 թուականի աշնան սկիզբներին երամ երամով հայ գաղթական ընտանիքներ մերկ, քաղցած և կիսաառոջ թափուեցին Բաղու և սկսեցին թափառել փողոցները «մի փշուր հաց, մի հին հալաւ» խնդրելով։

Մուրացկանութեան առաջն առնելու, այլ և այդ անբաղդների վիշտը փոքր ինչ ամոքելու՝ պ. Հ. Մե-

լիքեանը իբրև ազգու և աշխոյժ երէցփոխան և կարեկից դէպ թշուառները, անսալով խնդրանացս, բարւոք համարեցինք հասարակական ժողով կազմել և խնդրել հասարակութիւնից, որ այդ բոլորի համար մի հոգատար մասնաժողով ընտրէ։

Պ. Համբարձում Մելիքեան իւր կողմից ոչ մի ջանք չէր խնայում։ Մեծ եռանդով նա նեռւում էր ամենուրէք և բարութեամբ ու գթութեամբ լի ձեռը մեկնում ամեն մի թշուառի։ Ամէն բոպէ բաղխումէին նրա դուռը և իւրաքանչիւր բաղխողի առաջ երբէք փակ չէր մնում։ Տեղական իւրաքանչիւր հայ աղքատ գիտէր իւր սիրելի Համբարձումին, գիտէր նրա սիրտը և հոգին. ուստի և ժամանակ անժամանակ դիմումէր դէպի նա և դիմումէր բուռն հաւատով ու յոյսով։ Մի չնչին նեղութիւն, մի չնչին պակասութիւն ճնշումէր հայ գաղթականին և ահա նա համարձակ դիմում էր դէպի նա իւր մկրտած անունով Մեշիք-Համբարձումեանին, և ի հարկէ առանց մխիթարութեան և առանց սփոփանքի չէր հեռանում նոքանից։

Հայ հասարակութիւնն անսալով մեր խնդրին ընտրում է չորս անձինք. տիկ. Եղիսաբէթ Սարգսեանց, պ.պ. Ա. Կաճկաճեան, Յովհաննէս Աղամեանց և Ա. Կրասիլնիկեանց։ Մարդասիրական ընկերութիւնն ևս որոշում է դրամական օժանկութիւն, այլ և հասարակութեան ընտրած մասնաժողովին գործակից լինելու և բարերարութեան գործն աւելի առաջ տանելու համար իւր կողմից ևս ընտրում է եօթը անձինք — երկու տղա-

մարդ և հինգ կին։ Ընտրուած տիկնայք՝ Անանան Մաղաթեան, Եղիսաբէթ Կրասիլնիկեան, Սոփիա Ադամեան, Հեղինէ Ադամեան և Նատալիա Գատուականեան։ Գ.պ. Ներսէս Աբէլեանց. Գասպար Տեր Մարգարեանց։ Իդէալից վեր եռանդով նուիրեցին իրանց այդ հիւծուած, կիսառողջ, մերկ և քաղցած գաղթականներին։ Մոռացին նրանք իրանց տուն, տեղ. մոռացին մինչև իսկ իրանց կեանքի բոլոր ձևերն ու սովորութիւնները, ոմանք զաւակները թողեցին աղախինների և հարևանների խնամքին և իրանք միշտ անդադար մերթ ադքատանոցն էին բարեկարգում, մերթ այս և այն դուռն էին բաղխում և թշուառ գաղթականի համար հաց, օգնութիւն գոչում։ Իրանք քնքոյշ կեանքի բոլոր պայմաններով մեծացած, անբաղդ գաղթականի դառնաղէտ դրութեան առաջ մոռացան ամենայն ինչ։ Կեանքը նրանց համար այլ պատկեր ստացաւ։ Եւ դուք միշտ կ'տեսնէիք նրանց ադքատանոցում, գաղթականների կողքին, անձամբ բուժելիս նորանց վերքերը, սփոփելիս այրուած, խորովուած սրտերը, սրբելիս աչքերի արտասուքը և մօր, քրոջ նման՝ սիրտ, մխիթարութիւն ներշնչելիս։ Կերակուրը երբեմն իրանք էին պատրաստում, իրանք օգնում նրանց մաքրուելու, լուացուելու և տանջուած տոչորուած մարմիններին հանգիստ շնորհելու։

Իսկական բանաստեղծի ձեռք է հարկաւոր նկարագրելու այդ վեհանձն տիկինների սրտի խորքերը։ Մայր էին նրանք այդ մաշուած անբաղդների համար

ՏԱՃԿԱՀԱՅ ԳՍՂԹԱԿԱՆՆԵՐ ԲԱԳԻՈՒՄ.

Дозволено Цензурою 4 Мая 1902 года, Тифлисъ.

Типогр. Я. Г. Гюльбасарова, Баку.

947-90

մայր՝ բառիս իսկական նշանակութեամբ։ Քոյրեր էին—սրտակից քրոջ սրտի բոլոր գորովով խանդով ու եռանդով։

Աննման էր տիկին Աննմանի անձնուիրութիւնը, որին մինչև իսկ գործի մէջ ուժասպառ լինելուն ականատես եմ եղել,

Մի օր, համաձայն իմ սովորութեան, առաւօտեան ժամասացութիւնից յետոյ շտապեցի աղքատանոց և ինչ.—տիկին Աննման Մաղաթեան արդէն այնտեղ, գլուխ էր անցել օրուայ ճաշի և պիտոյքների կարգադրութեան։ Նա խոհանոցում գոգնոցը կապած, դանակը ձեռին հաց էր կտտրում և կերակուրների համար այս և այն մթերքները կանոնաւորում։ Նրա մատներից մի քանիսը փաթաթուած էին։ Եւ իմ հարցին թէ ինչ է պատահել իւր մատների հետ, նա ժպտալով պատասխանեց.—սովորում եմ, տէր հայր, սովորում եմ. այս ոչինչ. շատ հաց կտտրելուց և ձեռներս այսպէս գործի անսովոր լինելուց, կաշին պոկուել է. բայց այս բոլորը մի մազի չափ նշանակութիւն ունին իմ հազարաւոր քոյրերի և եղբայրների վէրքերի հետ համեմատելով։

Բայց ինչու այդ բոլորը ծառաներին չէք յանձնում, հարցրի ես։

Իմ հարազատները հեծեծում են հազարաւոր վէրքերի և վշտերի տակ, և որ գլխաւորն է դեռ քաղցը լիովին չեն յագեցրել. հաց են ուզում, տէր հայր, դեռ հաց, ես ինչպէս համբերեմ և ձեռս 'ի ծոց նստիմ։

1007
33298

Սոյն խօսքերն էին կրկնում և տիկնայք Սարգսեանց, Կրասիլնիկեանց և գրեթէ Բագուայ բոլոր տիկինները։

Եւ եթէ տիկին Մաղաթեան օրուայ այդ պահուն ճաշի հոգացողութիւնն էր կրում, այդ իսկ ըռպէին անշուշտ տիկնայք Ադամեան, Կրասիլնիկեան, Թումայեանց Մելիքեան և այլք դեռ չ'լուացուած, նրանց համար սպիտակեղէն ու այլ զանազան հագուստներ էին կարում. իսկ տիկնայք Սարգսեանց, Պատուականեանց և ուրիշները այս ու այն դռներն էին բաղխում, օգնութիւն, բժշկութիւն խնդրում։

Այստեղ յիշենք, որ միշտ գովելի եռանդով բժիշկները պ. պ. Աղամիրզեան և Զալեան բացի կարևոր օգնութիւնները հասցնելուց ամենայն օր և գրեթէ օրուայ ընթացքում մի քանի անգամ յաճախել են աղքատանոցը, այցելել նորա բոլոր բնակիչներին և հիւանդների համար մանրամասն կարգադրութիւններն արել։

Գաղթականների համար այդքան մխիթարիչ հոգացողութիւնները տեսեցին մինչև ամառուայ սկիզբները, որից յետոյ մասնաժողովի անդամները շոգերի պատճառով ցրուեցին դէպի զանազան ամարանոցներ և աղքատանոցը իւր հարիւրաւոր բնակիչներով հանդերձ մնաց իմ խնամքին։

Ամառուայ տօթերին և քաղաքում ժողովրդի բացակայութեան միջոցին, որքան էլ ծանր լինէր իմ դրութիւնը, այնուամենայնիւ ամէն ջանք գործ դնե-

լով, ամենքին էլ պահպանեցի մինչև աչուն և ապա ընկերակիցներիս հետ մինչև 1897 թուի Հոկտեմբերը, որից հետոյ տաճկահայեաստանից դարձեալ սկսեցին խումբ խումբ գաղթականներ թափուիլ Բագու։

Նորեկները մօտ 250 հոգի, ամէնքն էլ առանց բացառութեան մերկ էին, բոբիկ և մեծ մասը քաղցածութիւնից, անվերջ տառապանքից և առաւել կեղտի տակ ճրնշուելուց, հիւանդ և կիսառողջ։ Իսկ կանանց և մանուկների մեծ մասը միանգամայն անտէր և անխնամ։

Այնուհետև աղքատանոցի բնակիչների ընդհանուր թիւը հասաւ 500-ի,

Հոգսերի այսքան բարդութիւնը մի կողմից, աղքատաց խնամատարութեան գործի տակաւին կազմակերպուած չ'լինելը միւս կողմից, այլ և հասարակութեան տուած օգնութիւնը առհասարակ պատահական բնաւորութիւն ունենալով, անհրաժեշտ կարիք էր զգացւում, որ մարդասիրական ընկերութեան խորհուրդը իւր խնամքի տակ առնէր վերոյիշեալ թշուառներին՝ նրանց մի մասը աղքատանոցում տեղաւորելով, միւս մասը ընկերութեան շինութեան ներքնահարկում։ Այլ և աշխատէր հայրենիք վերադառնալ ցանկացողներին տալ ճանապարհածախս. իսկ մնացածներից գործի ընդունակների համար որոնել պատշաճաւոր պարապմունք, հիւանդների համար դէղօրայք, մերկերին հագուստ, քաղցածներին հաց։*)

*) Տիկին Նդիսաբէթ Սարգսեանն առաջարկեց մասնաժողովին Ղարաբաղից գորգեր հիւսող մի կին բերել, որպէս զի այդ արհեստը նա սովորաց-

Այս կարիքները լրացնելու համար ընկերութեան խորհուրդը անհրաժեշտ համարեց մի յատուկ մասնաժողով ընտրել։ Եւ ընտրուեցին 18 անձինք. տիկնայք՝ Եղիսաբէթ Կրասիլնիկեանց, Մարիամ Մելիքեանց, Նեկտարինէ Թումանեանց, Թամար Կաճկաճեանց, Մարգարիտ Կաճկաճեանց, Սոփիա Թումայեանց, Նատալիա Պատուականեանց, Սաթենիկ Արտէմեանց և Շուշանիկ Տէր-Մարգարեանց. և պարոնայք՝ Համբարձում Մելիքեանց, Աստուածատուր Կաճկաճեանց, Յովհաննէս Ադամեանց, բժիշկ Ադամիրզեանց, բժիշկ Զալեանց, Արշակ Թումայեան, Ներսէս Աբէլեանց, Գասպար Տէր-Մարգարեանց և Աստուածատուր Գալստեանց։ Վերջինս վարում էր և մասնաժողովի քարտուղարի պաշտօնը։

Սոյն մասնաժողովի անդամները՝ տիկնայք և պարոնայք մեծ սիրով յանձն առան զանազան հոգսեր տանելու. ոմանք ճաշի, ոմանք հագուստեղենի, ոմանք աշխատեցին գաղթականների համար յարմար պարապմունքներ որոնել։ Եւ այս բոլորն անում է սիրով և անխոնջ եռանդով։

18 հոգուց բաղկացաց սոյն մասնաժողովը իրանց ստանձնած գործերը վարում էին մասնակցութեամբ մի շարք կողմնակի տիկինների և օրիորդների, այլ և դարձեալ իմ նախագահութեամբ։

Նէ գաղթական կանանց. Այդ առաջարկութիւնը մասնաժողովի կողմից ընդունուեց մեծ սիրով։ Վարպետ կինը եկաւ ոստայններ կանգնացրին և գործն սկսուեց ու մեծ աջողութեամբ առաջ գնաց, սակայն ցաւ՝ի սիրտ գաղթական կանանց ձեռով սկսած առաջին գործը կիսատ մնաց, վասն զի այդ մի ջոցին ստացուեց հայրենիք վերադառնալու բաձրագոյն հրամանը։

Կարճ ժամանակամիջոցում ամէն ինչ կարգի մտաւ։ Հիւանդներին տրուեց մաքուր հագուստ և անկողիններ, ամենայն օր կազդուրիչ կերակուր, բժշկական հսկողութիւն և ամենայն տեսակ հարկաւոր դեղօրեայք։ Իսկ առհասարակ բոլոր մեքենները լիովին ծածկուեցին յարմար հագուստներով և ցրտերի դէմ պատսպարուեցին աղքատանոցի մաքուր և տաք սենեակներում։*)

Հայրենիք վերադարձան միմիայն 31 հոգի։ Եւ դրանք վերադարձան ապահովուած՝ թէ ամեն տեսակ հագուստներով և թէ դրամական բաւարար պաշարով։ Մնացածներին մի քանիսին կարողացանք գանազան պարապմունք յանձնել. իսկ մեծ մասը՝ թւով չորս հարիւր հոգի մնացին մասնաժողովի խնամքին, որոնք և միշտ լաւ կերակրուել և հանգիստ ապրելեն մինչև 1898 թուականի Մայիս ամիսը—այսինքն մինչև բագուից հայրենիք վերադառնալու օրը։

Եւ երբ բարձրագոյն հրամանն ստացուեց, որ տաճկահայ գաղթականները, Ռուսաց պետութեան մէջ ուր և գտանուումեն, պէտք է մի տարուայ ընթացքում

---

*) Վեհափառ հայրապետը բագու գտնուած միջոցին մասնաժողովի բոլոր անդամները ներկայացան նորին ս. Օծութեան և արժանացան Հայրապետական օրհնութեան։ Երբ Վեհափառին պատմեցի կանանց գործունէութեան մասին, ծերունազարդ հայրապետը խորին հրճուանքով լսելուց յետոյ դարձաւ ինձ ու ասաց «Ասիկա բոլոր դուն սովորացրե՞լիս»։—Ոչ, վեհափառ Տէր, ասացի, այս բոլորը անկեղծ սրտերից բղխած են, որ սովորացնելու հարկ չկար։ Հա՜, աւելացրեց հայրապետը, ասոնք գթութեան քոյրերու դեր կ'կատարեն ապա դարձաւ տիկիններին, օրհնեա՜լ ըլլաք, այն ատեն երբ տխրութիւնը գիս կ'ճնշէ, ձեր՝ այսպիսի օգնութիւն տեսնելով կ'մխիթարուիմ, հա՜, շատ կ'մխիթարուիմ։ Ապա նորից օրհնեց Վեհափառ հայրիկը և ամենքը ուրախ սրտով հեռացան.

վերադառնան իրանց տեղերը, սկսուեց նոր հոգացողութիւններ, վասն զի այդ անբաղդների համար հարկաւոր էր ճանապարհածախս, դրամական պաշար, բժշկութիւն և մինչև հայրենիք՝ սմայի ճանապարհների ընթացքում օրինաւոր հսկողութիւն։

Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ և իմ ցանկութեամբ, մի կողմից էլ Մելիքեանի խրախոյս յորդորանքով, հսկողութիւնը ես յանձն առի և խոստացայ նրանց ուղեկցել մինչև իրանց բնակավայրերը—Վան։

Այժմ մնումէր այդ անբաղդներին նիւթապես ևս ապահովացնել և ահա այս անդամ քաղաքիս ոստիկանապետ իշխան Վոլկոնսկին, որ մի առանձին սէր և գութ էր տածում դէպի այդ հիւծուած թշուառները պ. Հ. Մելիքեանի հետ ամենաեռանդով նեռուեցին այս ու այն կողմը և կարճ ժամանակում ժողովեցին մի պատկառելի գումար, որով հոգացուեց ոչ միայն գաղթականների լիառատ ճանապարհածախսը, այլ և այդ գումարի մի մասը որոշուեց բաժանել նրանց՝ հայրենիք հասած ժամանակ, որպէս զի հնար ունենան առ ժամանակ խոպանացած օջաղները վերականգնել և գէթ մի լերկ պատսպարան շինել ընութեան պատուհասների դէմ։

Իշխան Վոլկոնսկու և պ. Համբարձում Մելիքեանի աշխատանքն այս դէպքում՝ յաւիտենական օրինակ պիտի լինի թէ մեր ունևորների և թէ ներկայ ու գալոց սերնդների համար—Օրինակ առ աղքատն և առ հայրենազուրկ թշուառն ունեցած սիրոյ և խղճի զգացմանց։

Ա. Ա. Բ. Տ.-Յ.

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ։

Մայիսի 24-ն էր Գարնանային գեղեցիկ օրերից մէկը։ Երկինքը պարզ էր ինչպէս փիրուզայ։ Արևելեան հորիզոնը շառագունել էր և ջերմ արեգակը պատրաստվում էր քանի բոպէից սփռել ճառագայթները և խուրձ խուրձ յանձնել կասպից ծովի խաղաղ ալիքներին։

Օրուայ այդ պահուն Բազուայ աղքատանոցը խորին իրարանցման մէջ էր։ Նրա բոլոր բնակիչները ոտքի վերայ էին։ Կեանքն ամէն անկիւնում եռում էր, սակայն սրտերում ծփող զգացմունքներն բոլորովին այլ էին։ Աղքատանոցի բնակիչներից նրանք, որոնք Ռուսիոյ հպատակ էին, զարթել էին ճանապարհ ձգելու իրանց արիւնակից եղբայրներին, որոնք տարագիր դարձած, հայրենիքից այստեղ գալով, նորից հայրենիք էին վերադառնում.

Գաղթական.—այս անունն էին կրում նրանք, այս անունով էին խօսում նրանց մասին։ Դառն ճակատագիրը այդ բաժինն էր հանել նրանց համար։

Թրից, կրակից ազատելու համար շտապեցին դէպի մեզ, տուն, հանգստութիւն որոնելու և ահա այստեղից ստիպված են ևս հեռանալ. նորից ճաշակել ճանապարհորդութեան բոլոր դառնութիւնները և գնալ հայրենիք, փնտռել մոխրացած տուն, տեղ, փլատակ ու աւեր դարձած գիւղ, աւան.

Աղքատանոցի ամբողջ բակը սրտառուչ տեսարանէր ներկայացնում այդ օրը։ «Մնաս բարև»ները արտասանւում էին լացով, հեկեկանքով։ Այստեղ ու այնտեղ կոյտ կոյտ թափուել էին գաղթականների իրերը, որոնք բաղկացած էին հնացած հագուստներից ու կիսամաշ անկողիններից։

Այդ ժամանակ մենք պ. Հ. Մելիքեանի հետ այդտեղ էինք։

Արևն արդէն դուրս էր եկել գիշերուայ հանգրուանից, Բազուն արդէն ժպտում էր նրա պայծառ շողերի տակ, երբ աղքատանոցից սկսուեց գաղթականների ընթացքը, որ նմանւում էին տարագիր կռունկների իրամների։

Առջևից գնում էին սայլերը, բեռնաւորուած գաղթականների իրերով, նրանց ետևից ընթանում էին իրանք գաղթականները։ Գնում էին նրանք լուռ, տխուր մերթ ընդ մերթ արտասուք գլորելով և սրտի խորքերից ալեխարշ հառաչներ դուրս ցայտելով։

—Ոչ խաչակիրների նման Երուսաղէմ էին փնտռում նրանք, ոչ իսրայելացւոյ նման աւետեաց երկիր էին գոչում։ Դէպի հայրենիք, դէպի քաղցր վա-

թան, դէպ իրանց սրբազան որբան։ Սակայն ինչ պիտի տեսնեն, ինչ պիտի զգուին, ուր պիտի ապաստանեն. այդ մտքերն ու այդպիսի խոկմունքները դառնագոյն թախիծով վարագուրել են նրանց դէմքերը և գնում են նրանք մրրկապատ և յոյժ տրրտմալից։

Տխուր տպաւորութիւն էին թողնում նրանք ամեն մի անցաւորի վերայ։ Այդպիսի բոպէներում, այդպիսի անբաղդութեան առաջ մարդս բնազդմամբ որոշում է իւր երջանկութիւնն ու իւր բաղդը։

Եւ յիրաւի Բագւայ փողոցներում իւրաքանչիւր անցորդ առանց կրօնի և ազգի խտրութեան, այդ անբաղդների երամին նայելով, բոպէաբար սուզւում է պէս պէս մտածմունքների մէջ և ակամայից առնում է գտակը. մեկնում դեպի նրանց ու «բարի ճանապարհ» մաղթում, այո, միայն «բարիճանապարհ»։

Իսկ «բարի ճանապարհը» անցկացնելուց յետոյ թէ մոխրակոյտ դարձած հայրենիքը մտնելով ինչ օր, ինչ կեանք պիտի տեսնեն այդ խեղճերը, այդ իրանք գիտեն և այդ միմիայն իրանք են երևակայում ու իրանք սարսափում։

Պ. Համբարձում Մելիքեանի բարեխիղճ հոգատարութեամբ թէ ապրանքատար գնացքներից մէկը, բազմաթիւ վագոններով արդէն պատրաստ կանգնած էր երկաթուղու կայարանում և թէ դրամական պատկառելի ճանապարհածախսի գումարը։ Այդտեղ էր և Բագւայ ոստիկանապետ ազնուաշուք իշխան Վ.ոլկոնսկիյ

իւր օգնականով և մի շարք ոստիկաններով։ Այդտեղ էր և ժանդարմերի խումբը իւր գլխաւոր սպայով։ Այդտեղ էր և մեր ծերունազարդ Աստուածատուր Կաճկաճեանը, որը նոյնպէս մեծ երախտիք ունի դէպ գաղթականները իւր եռանդուն գործունէութեամբ և բարեսիրտ բնաւորութեամբ։ Ցաւ ի սիրտ այդտեղ չէին մեր մասնաժողովի անդամներից շատերը, որոնց բացակայութիւնը ի հարկէ նկատւում էր։ Կայարան հասնելուն պէս գաղթականները խաժամուժ ազմուկով, սաստիկ իրարանցման մէջ ընկած, նետւում էին դէպի վագոնները։ Ամէն մէկը վաղօրօք կամենում էր յարմարուիլ իւր տեղում։ Կարծես վագոններն էին այդ անբաղդների վերջին ապաստարանը. կարծես տարիներով օթեան պիտի դառնան նրանց համար, որ ոչ հրաման և ոչ մի խօսք չ'լսելով, ազմուկով, գոռում գոչումով թափւում էին ներս։

Ճշմարիտն ասած այդպիսի խառնաշփոթութիւնը այդպիսի իրարանցումը, որոնք տեղի էին ունենում դեռ ոստիկանապետի, ոստիկանների և ժանդարմերի հսկողութեան տակ. փոքր ինչ իմ մտքերը երերման ենթարկեց, խուլ, անմարդաբնակ ճանապարհներում կարգ պահպանելու մասին։ Այսու ամենայնիւ աներկբայ չէի, որ երկաթուղուց դուրս, բնութեան հանդարտ գրկում նրանք կ'խաղաղուին և տեղի չեն տալ այդպիսի իրարանցման։

Ինձ հետ իբրև ուղեկիցներ միացել էին աղքատանոցի կառավարիչ Յովհաննէս Յովակիմեան՝ Երե-

ւանցի և պ. Մելիքեանի գործակատար Սմբատ Տէր-Վարդանեան մեր զաղախեցի։ Վերջինիս վաղօրօք ուղարկել էի Աղստաֆա, որպէս զի նա այնտեղ կանխօրէն վարձէ ֆուրգոնները, այլև մեծացնէ հացի և ուտելեաց պաշարեղէնը։ Յովհաննիսին ուղեւորեցի գաղթականների հետ, իսկ ես մի քանի կարևոր գործերի պատճառով մեկնեցի հետևեալ օրը,

Գնացքը շարժուելու ժամը հասաւ։ Զանգակի խորհրդաւոր զողանջիւնը թնդացրեց Գաղթականների սրտերը, որոնք գնացքը շարժուելուն պէս օդը դղրդացրին «Մնաք բարե՛ւ» և «Կեցցէ Բագրա՛ն խօսքերով։

Վիթխարի վիշապի պէս թնդագին զոռոցով, վաղօրդեան օդը ճեղքելով, գնացքն առաջ սլացաւ և հարիւրաւոր գաղթականների «բարևներն ու կեցցէները» մնացին իբրև խաղալիք մայիսեան քաղցրաշունչ զեփիւռներին։

Երկու օրից յետոյ հասանք Աղստաֆա։ Երեկոյ էր. կայարանի կառավարչից խնդրեցի մի իջևան գիշերելու համար, սակայն նա առարկելով, որ յարմար իջևան չկայ այսքան գաղթականների համար, ուստի և որոշուեց այդ գիշեր վագոններում անցկացնելու։ Այդպէս էլ արինք։ Առաւօտեան ժամը 8-ին նախաճաշ տուի ամէնքին, ճշտեցի ընդհանուր թիւը, ապա պատուիրեցի, որ իւրաքանչիւր ոք որոշէ իւր իրերը որպէս զի հնար լինի ամէնքը մի նշանակած ֆուրգոնում տեղաւորելու։ Ֆուրգոնչիների հետ պայմանա-

ւորուած էինք իւրաքանչիւր ֆուրգոնում 20 հոգի և 50 պուդ իրերտեղաւորելու,

Վագոններից դուրս գալու և իրերի հետ ֆուրգոնները թափուելու իրարանցումը աննկարագրելի էր։ Օդը դղրդում էր այդ աղմուկներից, նետում էի այս և այն կողմը, մերթ խնդրում աղաչում, մերթ հրամայում բարկանում, սակայն հազիւ հազ էի կարողանում հանդարտացնել նրանց։ Այդ բոլորը ես նախազգում էի և դորա համար նախընթաց օրը, երեկոյեան պահուն գնացել էի Ղազախ քաղաքը, որ ընկածէ Աղստաֆայից ինները վերստ հեռաւորութեան վերայ։ Այդտեղ զիմեցի գաւառապետին իմ վաղածանօթ պ. Կանչելիին, որպէս զի ոստիկաններ նշանակի կարգ պահպանելու համար։ Նա ասեց որ այդ կարգադրութիւնն արել է, բայց ցաւ ի սիրտ վերադառնալով Աղստաֆա, մենք չհանդիպեցանք ոչ մի ոստիկանի և կարգը պահպանելու համար դարձեալ մեզ էր մնում։

Իսկ ոստիկանապետը, որ չէր եկել կարգապահելու, ստացաւ խիստ նկատողութիւն, գաւառապետի կողմից։

Մենք վարձել էինք 23 ֆուրգոն, բայց այդ միջոցին բաթումից Աղստաֆա հասան 40 հոգի ևս գաղթականներ, որոնց նոյնպէս յանձն առանք ուղեկցելու մինչև հայրենիք և միացնելով նրանց մեր խմբի հետ ստիպուեցանք երկու ֆուրգոն ևս վարձել,

Հետզհետէ աղմուկը դադարեց։ Ամէն մէկն ար-

դէն տեղաւորուել էր և կուշտ ու հանգիստ նստել էր իւր տեղը։ Այդ ժամանակ որոշեցի քսան հոգի ընտրել իրանցից իբրև իմ օգնականներ կարգը պահպանելու համար։ Եւ որպէսզի նրանցից իւրաքանչիւրը կարողանայ հեշտութեամբ օգնել գործին, ամէնքի համար էլ որոշեցի այն գաւառացիները, որոնց պատկանում են և իրանք։ Այսպէս Վանեցիների համար Վանեցիներ, Մշեցիների համար—Մշեցիներ և այլն։

Յովհաննիսին կանխօրէն ուղարկեցի Քարվանսարայ իջևանը ուտելեաց պատրաստութիւն տեսնելու։ Եւ ապա սկսուեց փուրգոնների ընթացքը։ 23 փուրգոն շարէշար գնումէին և իրանց մէջ տանում հարիւրաւոր հայրենազուրկ անբաղդներ։ Տեսարան էր։ Մարդկութեան բաժին դարձած հազար տեսակ հանդէսներից մէկը։

Միասին են ծնւում չարն ու բարին, միասին և լացն ու ուրախութիւնը և մեր երիտասարդ գրողի սոյն գեղեցիկ խօսքերից, 25 փուրգոնում զետեղած 500 անբաղդների համար բնութիւնը միայն լացնէ որոշել ճակատագիրը յարատև կռիւ չարութեան դէմ։ Եւ ահա սոյն այս ընթացքը բնութեան պճնուած գրկում մարդկութեան բիւրաւոր վերքերից մէկնէր շոշափում։

Առջևի փուրգոնի վերայ գնում էր Սմբատը, իսկ վերջի փուրգոնում աղքատանոցի ծառայ Ադշակն (Զազախեցի), որ իւր պարթև հասակով, յաղթանդամ տեսքով ու անյողդողդ ոյժով մեծ օգնութիւն էր հասցնում ընդհանուր կարգապահութեան։

Մնացեալ ֆուրգոններում իւրաքանչիւրի մէջ մէկն էր գտանւում այն քսան ընտրեալից, որոնց մասին յիշեցինք սկզբում։ Յովհաննէսի կինն էլ, որ ուղեկցում էր մեզ մինչև Երևան, գթութեան քրոջ դեր էր կատարում, հասնելով ամէն մի հառաչողին, օգնելով հիւանդին, և իւրաքանչիւր տկարին։

Մօտենալով Քարվանսարային, ես շտապեցի առաջ, գիշերվայ օթևան պատրաստելու։ Այստեղ պահապանների գլխաւորին խնդրեցի թոյլ տալ գաղթականներին գիշերելու բանտարկեալների իջևանում, որ խնդիրս չ՚մերժեց և իսկոյն հրամայեց բանալ իջևանի դռները և մաքրել բոլոր սենեակները։ Իսկ Բաղալ Ղազումեանցը խնդրեց որ մի մասը իւր քարվանսարայում զետեղուի, մնացեալներին էլ ուրիշ բնակարաններում։

Ֆուրգոնները ուշ հասան։ Երեկոյեան ժամի 9-էր։ Յորդառատ անձրևը ողողում էր սար ու ձոր։ Պ. Բաղալը հային յատուկ հիւրասիրութեամբ իւր հօրեղբայր Գրիգորի նման առանձին սէր տածելով դէպ իւրաքանչիւր թշուառը ամէն կերպ աշխատեց հեշտացնել ճանապարհորդ գաղթականների դրութիւնը։

Գիշերը անցկացնելուց յետոյ, առաւօտեան շարունակեցինք ճանապարհը։ Այժմ այլևս իրարանցում չ՚կար. որովհետև իւրաքանչիւրն արդէն ճանաչումէր իւր ֆուրգոնը և առանց շփոթուելու, առանց շտապելու գնում տեղաւորւում էր։

Անձրևային գիշերը տեղի էր տուել պարզ ժըպ-

տալից օրուան։ Մայիսեան անձրևի կաթիլները անհամար աղամանդների պէս ծածկել էին դաշտ, անտառ, հովիտ ու մարմանդ։ Իսկ արև ճաճանչների տակ ամբողջ բնութիւնը վառւում էր կանաչ զմրուղտի նման։

Ֆուրգոնները ճանապարհուեցին. իսկ ես մի գործով մօտ երկու ժամ ուշացայ։

Ճանապարհին՝ իմ բացակայութեան ժամանակ մի փոքր միջնադէպ է տեղի ունենում, որը որքան էլ անախորժէր, այնու ամենայնիւ անխուսափելի։

Գաղթականները հասնելով «Մօլլա-դայայ»ի կոչուած տեղը, որ ուղի վերստ հեռու է Քարվանսարայից, հանդիպում են դէպի լեռները չուող թուրքերի խմբերին, որոնք իրանց հօտերով և հարիւրաւոր շներով բռնում են գրեթէ ամբողջ ճանապարհը և շատ անգամ անանցնելի դարձնում ճանապարհորդների համար։

Այսպիսի խմբերի արանքներով պիտի անցնէին և գաղթականների ֆուրգոնները։ Թուրքերի շները սկսում են յարձակուիլ յետիոտս դնացողների վերայ և նրանք պաշտպանուելու համար քարեր են նետում արիւնածարաւ դպանի նման շներին։ Իսկ թուրքերից շատերը աւելի են խրախուսում այդ դաղաններին։ գաղթականներից արձակած քարերից մէկը դիպչում է շներին խրախուսող թուրքերից մէկին, որ իւր կողմից չէ զլանում քարեր թափել դէպի գաղթականները։ Նրա հետ միանում են ուրիշ շատ թուրքեր և ապա ժողովումն այդտեղ գտնուած բոլոր

չուղները և միահամուռ ոյժով քարեր են նետում գաղթականներին։ Վերջիններս թափումեն ֆուրգոններից և քարերի հեղեղով փախցնում են թուրքերին։

Այդ դէպքից յետոյ ես ուղևորուեցի իջևանից և շտապեցի հասնել ֆուրգոնների խմբին։ Նոյն տեղը իմ ճանապարհս բռնեցին թուրքերը և գանգատուեցին հայերի իբր թէ անիրաւ վարմունքի մասին և ցոյց տուին մի ծերունի և մի պառաւ կին մահճի մէջ ընկած, որոնց որպէս թէ կիսամահ են դարձրել գաղթականները։ Հանգստացնելով նրանց, խօսք տալով մեղաւորին պատժել, ճանապարհը շարունակեցի, ապա փոքր տեղ անցնելով յետ նայեցի և տեսայ, որ մահճում փաթաթուած իբր թէ կիսամահ եղած պառաւն ու ծերունին ուրախ խօսելով բարձրանում են դէպի մօտակայ բլուրը։ Ես այնուհետև հասկացայ թուրքերի խաբեբայութիւնը։ Սակայն նրանք դրանով չվերջացրին։ Լեռնականին, այնէլ կիսավայրենի լեռնականին յատուկ անզգամութեամբ մի թուրք կին շտապումէ ճանապարհներին ժամանակաւոր հսկողութեան նշանակուած կոզակների գլխաւորին յայտնել, որ ֆուրգոններով աւազակների խմբեր են արշաւում, որոնք և կեղեքել ու թալանել են իրանց։ Միամիտ կոզակն էլ հաւատ ընծայելով խաբեբայ կնոջը, կանգնեցնում է ֆուրգոններին զանազան հարց ու փորձ անելու։ Այդ միջոցին վրայ հասայ, կանչեցի կոզակին, յայտնեցի, որ ինքն իւրաւունք չ'տայ մի լեռնական կնոջ անիրաւ խօսքով հարիւրաւոր ճանապարհորդ-

ների անհանգստացնել։ Այլ և աւելացրի թէ՝ եթէ ինքն այդքան միամիտաբար հաւատումէ նրա ասածներին, թող գնայ և ուր որ հարկնէ հաղորդէ։ Իսկ ճանապարհորդներին առաջ գնալու արգելք լինել իրաւունք չունի։ Կոզակն իհարկէ թողեց, հեռացաւ. իսկ ես նրանից յետոյ գաղթականներին դարձեալ կրկնեցի իմ խրատները առարկելով, որ այդպիսի անախորժութիւնները միշտ արգելք կըլինին առաջ գնալու. ուստի պէտքէ զգոյշ լինել. և խուսափիլ այդպիսի դէպքերից։ Թուրքերի այդ թափառական խմբերն էլ որ ընկած են մինչև Դիլիջան. այնուհետև ճանապարհն արձակէ և յոյս կայ, որ ոչ մի այլ անախորժ դէպք չի կարող տեղի ունենալ։

Սակայն որքան էլ ճնշուած էին այս տարագիր անբաղդները, որքան էլ հալածական էին դարձել կեանքի անողոք հալածանքների առաջ, այսու ամենայնիւ երևան էին գալիս մերթ ընդ մերթ իրար դէմ ունեցած ծանր ատելութիւն, մինչև իսկ թշնամութիւն, որոնց դէմ ստիպուածէի կռուիլ, առաջն առնել, կարելւոյն չափ հասկացնել իրանց դրութիւնը և ցոյց տալ այն վտանգաւոր ուղին՝ որ դէպ անդունդն է տանում և թէ կ'գոլորուին նրա մէջ, եթէ այդպէս շարունակեն և միշտ լարուած յարաբերութիւնների մէջ մնան։

Նրանց վատ վարմունքներից մէկը հէնց այն իսկ միջոցին տեղի ունեցաւ, երբ արդէն մի կերպ հեռացրել էի մոլորուած կոզակին։—Գաղթական մի կին

ֆուրգոնից իջնելով, մազերը փետելով, վազում էր դէպի մօտակայ գետակը և անդադար գոռում. «ես ինձ ջուրը պիտի նետեմ, որ ազատուիմ իմ մարդուց, նա ինձ ծեծումէ, սպանումէ»։

Եւ իսկապէս նա մօտեցել էր ջրին, որ մեր քաջարի Արշակը հասաւ, բռնեց ձեռներից ու հասցրեց ինձ։

Իմ հարցին թէ «ինչուէս այդպիսի յիմարութիւններ անում». նա կրկնումէ միևնոյնը. թէ ամուսինը ծեծումէ և նեղացնում է իրան,

Ստուգելով իմացայ, որ յիրաւի անիրաւ մարդը ծեծելիս է եղել խեղճ կնոջը։ Կանչեցի այդ մարդուն խրատներ և սպառնալիքներ թափեցի գլխին։ Սակայն փոքր ժամանակից յետոյ տեսայ որ ծծկեր երախան առած այդ մարդը իջնումէ ֆուրգոնից։

Հարցնումեմ «ուր», պատասխանում է թէ ինքն անկարողէ իւր կնոջ հետ շարունակել ճանապարհ ուստի կամենում է վերադառնալ Բագու։ Ուրիշ հնար չ՝գտայ սորան խրատելու, անմահ Փրկչի խարազանն օրինակ առի ինձ և կառապանի մտրակն առնելով մի քանի անգամ հասցրի այդ համառին, որից յետոյ նա հեզացաւ, խոնարհուեց և շարունակեց ճանապարհը։

Բաթումից եկող դաղթականները, որոնց համար, ինչպէս յիշեցինք, վարձուած էր երկու ֆուրգոն, երկու օրով ուշացան Աղստաֆայում։ Իսկ մեր դաղթականների հետ հասնելով Թարսաչայ, ամէնքին տեղաւորեցի, հանգստութիւն տուի սակայն ես մնացի ան-

հանգիստ՝ վարանման մէջ. որովհետև մեր ընթացքի և իմ կարգադրութեան համաձայն, այդ երկու ֆուրգոններն էլ պէտք է մօտեցած լինէին, բայց նրանք չէին երևում։ Սմբատին Թարսաչայից յետ էի ուղարկել մինչև Մօլլա-Ղայի կոչուած տեղը, որպէս զի ճանապարհին նրանց հետ էլ մի անախորժութիւն չ՝պատահի, նա էլ լուր բերաւ, որ Ուզունթալայից եկող ճանապարհորդները չեն տեսել երկու ֆուրգոններին։

Մեր գաղթականներին Թարսաչայում ամէն կերպ հանգստացնելուց յետոյ ճանապարհ ձգեցի դէպի Դիլիջան իսկ ինքս երկու ֆուրգոնների համար հոգսով անհանգիստ առաջ անցայ, որպէսզի գաղթականների համար բնակարաններ վարձեմ և այնտեղից հեռագիր ուղարկեմ Ղազախ երկու ֆուրգոնների մասին տեղեկանալու։

Խճուղների կառավարչից հեռագրիս պատասխան ստացայ թէ մեծ հեղեղի շնորհիւ խճուղու վերայ ընկած կամուրջը փլուեց և այդ պատճառով երկու ֆուրգոնները ուշացան։ Նոյն իսկ օրն առաւօտեան նրանք ճանապարհուելով, երեկոյեան ժամը 9-ին հասան Դիլիջան։ Նրանց պատմելով, իրանք մեծ վտանգից են ազատուել։ Այնպէս որ իրանց ֆուրգոնները մի քանի քայլ չ՝մօտեցած կամրջին, կանգեն առնում ճանապարհների (զաստավայի) պահապանների շնորհիւ, որովհտև կարկտախառն հեղեղից, որ այդ միջոցին թափուելիս է եղել, նրանք երկիւղ են ունեցել,

ուստի և մարդասիրաբար շտապել են ազատելու այդ խեղճերին։ Եւ իսկապէս երբ ֆուրգոնները կանգ են առնում, քանի բոպէ չ՝անցած, գաղթականները տեսնումեն, որ ջրերի ահագին զանկուածները փլումեն կամուրջը և բաւական տեղ գլորում առաջ։

Ուրախութիւնս մեծ էր։ Ինձ թուաց որպէս թէ Աստուած հրաշքով փրկելէ այդ 40 հոգուն և ուղարկելէ ինձ։ Նրանց ևս միւսների հետ հանգստացնելով ու կուշտ կերակրելով, առաւօտեան մի ֆուրգոն ճանապարհ ձգեցի դէպի Ղարս—Արզրում, իսկ քսան և չորս ֆուրգոն դեպի Երևան։ Յովհաննիսին առաւօտեան ճանապարհել էի դեպի Ելինովկա. ինքսէլ գաղթականների թիւը նորից ճշտելով, բոլորին ֆուրգոններում տեղաւորեցի և ճանապարհ ձգեցի նախ Սիմենովկայ, դէպ ուր ես առաջ ընթացայ և աւելի շուտով այստեղ հասայ։ Ապա եկան գաղթականները, որոնց բաւական հանգստութիւն տալուց ճանապարհեցի Ելինովկայ, ուր և դարձեալ ես առաջ գնացի՝ իջևանելու համար կարևոր հրահանգներ տալու։

Իջևանելով Ելինովկայում ճանապարհի վերահսկիչ Եարալեանցի մօտ, որ իմ ազգականսէր, իմացայ որ նոյն տեղն է գտնուում և Նոր-Բայազետի գաւառապետ իշխան Չերքեզովը. Իմ ուրախութիւնս կրկնապատկուեց։ Իշխան Չերքեզովը—Ղազախի գաւառապետի նախկին օգնականը իմ մօտիկ ծանօթս էր, առ որ յոյս տածեցի կարևոր դէպքում օգնելու ինձ։ Եւ ես չ՝սխալուեցի։ Յովհաննէսը վաղօրօք այդեղ գալով,

արդէն պատմել էր նրան գաղթականների, իմ առաջնորդութեամբ, գալու մասին. Իշխանն արդէն վաղօրօք լսած լինելով այդ, համաձայն իւր մարդասէր և վեհ հոգւոյն, պատուիրել էր մալականներին կարեոր պիտոյքները հասցնել և ամէն ինչ որ կարելի էր չ՝մերժել։ Սիրալիր ողջոյններից յետոյ, գաղթականների մասին ամփոփ տեղեկութիւններ տալուց, իշխան Շերքեզովը յայտնեց, որ ինքն ամէն ինչ արդէն յարմարեցրել է։ Գաղթականների համար հացէր հարկաւոր և որովհետև մի հացթուխ անկարող էր մի օրուայ ընթացքում մեզ հարիւր պուդ հաց հասցնել, ուստի Իշխանի հրամանով Ելինովկայի տանուտէրը կարգադրեց ամբողջ գիւղում, որ իւրաքանչիւր տուն մէկ կամ երկու պուդ հաց պատրաստի միւս օրուայ համար, իհարկէ վճարը լիովին ստանալու պայմանով։ Գաղթականներին գիշերելու համար էլ հրամայուեց պատրաստել դատապարտեալների համար շինուած իջևանի սենեակները։ Այդ օրը երեկոյեան ահեղ որոտումները դղրդացին, կայծակը փայլատակեց սար ու ձոր և հժկու հեղեղը սառնաշունչ քամու հետ ողողեց ամբողջ բնութիւնը։ Թախիծը նորից պատեց ինձ։ Տխուր, շուարած կանգնում էի դրսում, հայեացքս առնում մերթ դէպ ամպամած երկինք և մերթ դէպ խճուղին, որտեղով պիտի դային գաղթականների ֆուրգոնները։ Ջանազան մտքեր պաշարել էին ինձ։ Ի՞նչ եղան արդեօք, թրջուեցին, նեղացան. ինչևիցէ, անվերջ վարանման մէջ երկու ժամ անցկացնելուց

յետ, վերջապէս երևաց ֆուրգոնների ընթացքը։ Սրտատրոփ դիմաւորեցի նրանց և ահա ճիշ, աղաղակ, բարկութիւն, ցասումն, մինչև իսկ անէծք թափուելին շուրջս։ Ճշմարիտն ասած զարմանքն ինձ պատեց։ Ինքս կիսով չափ ցեխի մէջ կորած։ մինչև ոսկոր թրջուած։ Սակայն այդ բոլորը մոռացած նրանց էի նուիրուել. նրանց հանգստութեան համար էի աշխատում. իսկ իրանք մոռացած հայրենիքում կրած զառն տանջանքները, սառնամանիքներում անցկացրած օրերն ու ամիսները, ապառաժների ու մացառների մէջ կրած չարչարանքները. այսօր ամեն տեսակ բարիք վայելելուց յետ, մի երկու ժամուայ անձրևից նեղանալով այդքան յուզուել և վրդովուել էին։ Մարդիկ, որքան անյագուրդէք, աւելի քան նոյն իսկ անտառաբնակ առիւծը։

Մալականները 90 պուդ հաց հասցրին, իսկ ես որոշեցի, որ գաղթականները ամբողջ օրը այդտեղ մնան, որպէսզի օրուայ յոգնածութիւնից և երեկոյեան կրած նեղութիւնից կազդուրուին։ Հնայած, որ ֆուրգոնչիները մի օր աւելորդ կորցնելով անվերջ տրտնջում էին, այնուամենայնիւ 'ի նկատի առնելով հիւանդներին, պառաւ կանանց, որոնց օրուայ հանգստութիւնը անհրաժեշտ էր, հաստատ մնացի իմ որոշման մէջ, ֆուրգոնչիներին էլ բաւականացրի մի օրուայ ծախք ևս տալով։ Այդ օրը փառաւոր ճաշ տուի ամենքին, ապա դիմեցի մէկին, միւսին, սիրատուի, խրախուսեցի և հասցրի բաւական ուրախ

տրամադրութեան։ Այդ իսկ օրը հեռագիր ուղարկեցի պ. Խորէն Խրիմեանին, որ խոնարհաբար յայտնէ Վէհափառ Հայրապետին թէ երկու օրից յետոյ (500) հինգ հարիւր գաղթականների հետ Ս. Էջմիածնումն կ՚լինիմ։ Իսկ միւս օրն առաւօտեան խորին շնորհակալութիւն յայտնելով գաւառապետ Իշխան Շերբեթովին, ճանապարհների վերահսկիչ պ. Եգոր (իմ ազգական) Եարալեանցին, ճանապարհեցինք դէպի Էյլար։

Երևն իւր ճաճանչներով ոսկեզօծել էր Գեղամայ լեռների գագաթները և դեռ նոր էր պատրաստվում անցնել իւր քնարանը, երբ մենք հասանք Էյլար իջևանը։ Գաղթականներին տեղաւորեցի այդ իջևանի մօտ գտնուող մի ընդարձակ քարվանսարայում։ Միւս օրը Մայիսի 31-ին ճանապարհ ընկանք դէպի Ս. Էջմիածին։ Եւ որովհետև Երևանի միջով պիտի անցնէինք, 'ի նկատի առնելով, որ այսեղ քաղաքում գաղթականներից կարող են ցրուել ու կորչիլ, այդ պատճառով ես առաջ շտապեցի և բռնեցի Ս. Էջմիածին տանող ճանապարհի սկիզբը ու երբ ֆուրգոնները հասան այդտեղ, այդտեղից ուղղակի քշել տուի դէպի «Սարդարի» բաղը, որտեղ կարգադրեցի փոքր ինչ հանգիստ առնել, ապա ճանապարհը շարունակել Ս. Էջմիածին։ Այդ միջոցին մի քանիսները յանդգնեցին քաղաք վազել, իբր թէ կարևոր պիտոյքներ ձեռք բերելու, մի քանի հոգի էլ գնացին բարեկամների այցելութեան. վերջապէս դրանց ժողովելով ուղևորուեցի դէպի Ս.Էջմիածին, որոնցից առաջ ինքս շտապեցի։

Իմ հեռագիրս ստանալով, այդ օրը Ս. Էջմիածնում ճաշէին պատրաստել բոլոր գաղթականների համար։ Ժամը 1-ին հասայ Մայր Աթոռ։

Վեհափառ Հայրիկին իմ գնալն յայտնելով, հրամայեց արժանացնել ինձ իւր տեսութեան։

Որքան էլ բաղդ էի ունեցել ներկայանալու Հայաստանեայց եկեղեցւոյ Վեհափառ Պետին, բայց պաշտելի Հայրիկի տեսնելու ցանկութիւնը ամեն բոպէ վառէր իմ մէջ և այդ օրը բուռն իղձերով մտայ Նորին Սուրբ Օծութեան սենեակը, ծունկ չոքեցի, յայտնեցի իմ խոնարհ անձնուիրութեան հաւատիքը և ապա հաղորդեցի գաղթականների մասին կարևոր տեղեկութիւնները։

Հայոց ժողովրդի սրտակից Հայրը խանդավառ հոգով օրհնեց Բաղէայ բարեպաշտ հայերին, բուռն շնորհակալիք յայտնեց ամենքին, ապա իւր Վեհ օրհնութեան արժանացնելով նուաստիս դարձաւ ու ասաց «Լաւ պաշտօն ես յանձն առեր, Տէր Աբգար, կ՝օրհնեմ զքեզ, թող Ամենակալ Աստուած ուղեկից ըլլայ քեզ անվտանգ հասնել և անփորձ վերադառնալ։ Իրաւ է, մեծ բեռնս յանձն առեր, նեղութիւնը շատ է, վասն զի ես լաւ գիտեմ թէ որչափ մեծ տանջանք է հարկաւոր այդ հիւծուած խեղճերուն կառավարելու, բայց մեծ ալ մխիթարութիւն կ՝բերես ինչպէս անոնց, այնպէս ալ ինձ և իւրաքանչիւր քրիստոնէի։ Ես ալ բեռդ փոքր ինչ պէտք է մեծացնեմ, կ՝յուսամ, որ կրնաս տանել, Էջմիածին ալ գաղթականներ կան,

անոնց ալ պէտքէ տանէս, ինչ ընեմ, անոնց ալ այս-քան վիճակուած է, կրնայ ըլլալ, որ օր մը նալ այդ վիճակ կ'փոխուի, հա, աշխարհիս երեսին ամէն ինչ փոփոխական է»։

Պ. Յովհաննէսն ու Սմբատն էլ ևս բաղդ ունեցան ներկայանալ Ազգիս Սրբազնասուրբ Հայրապետին և արժանանալ Նորա Վեհ օրհնութեան։

Վեհարանից դուրս եկանք, արդէն ժամի 2-ն էր. Ֆուրգոնները հասել, կանգ էին առել Ղազարապատի դռան մօտ։ Ժողովուրդն իջաւ այդտեղ, իջեցրին և բոլոր իրերը, որոնց առնելով տարան, տեղաւորեցին իրանց համար արդէն պատրաստուած օթևանում։

Ինչպէս յիշեցի, ճաշն արդէն պատրաստ էր։ Կանայք և երեխայք ճաշելու նստեցին մեծ սեղանատանը իսկ տղամարդիք ներսի սեղանատանը։ Փառաւոր ճաշը կուշտ վայելելուց յետոյ, ամենքին առայ, ինքս անձամբ տարայ և տեղաւորեցի արդէն պատրաստուած, լայն ընդարձակ բնակարանում.

Վեհափառ Հայրապետի հրամանով մեր գաղթականների համար պատրաստուած էր 90 պուդ չոր հաց, այդ 'ի հարկէ բաւական չէր, ուստի աչքի առաջ ունենալով այն ճանապարհը, որ ընկած է դէպի Վան որ հաստատ չ'գիտէինք թէ ուրիշ ինչ տեղից կարելի էր հաց ձեռք բերել, վճռեցի Յովհաննիսի հետ գնալ Երևան և 120 պուդ հացէլ այնտեղ պատուիրել։

Երևանում այդ պատուէրը կարգադրելուց յետոյ

վերադարձայ Ս. Էջմիածին։ Ազատ ժամերս նուիրեցի Մայր Աթոռի այս և այն նշանաւոր անկիւններն այցելելուն։ Էջմիածին, որ յաւէրժականգուն կաղնիի պէս կանգնած է Մասիսի կրծքին, իւր ստուերում զետեղելով աշխարհասփիւռ զաւակների սրտերը, ձրգում, քաշում է դէպ իրան, իւրաքանչիւր Հայի հոգին։ Եւ ես, չնայեած, որ մի քանի տասնեակ անգամ բաղդ եմ ունեցել այցելել Հայութեան պարծանք Ս. Էջմիածնին և միշտ համբուրել Հայաստանի Մեծ Լուսաւորչի ձեռով կերտած տաճարի քարերը, Հայի նախնեաց արիւնով ներկուած սուրբ վայրերը, սակայն տակաւին անյագ, տակաւին ծարաւ, նոյն սիրով, նոյն տենչով, նոյն իղձերով, նոյն հաւատով ու յուսով դիմումեմ առ Ս. Էջմիածին։ Մայր տաճարին, իմ համբոյրները, նորա սրբակերտ քարերին տալուց յետոյ դիմեցի Նորակառոյց թանգարանը, որ կանգնել է Վեհափառ Հայրիկ, իւր աշխուրջ հսկողութեամբ։ Վասպուրականի Արծուին, Ցարոնոյ Արծուիկը, Վարագ. Ս. Կարապետ պայծառացնելով, զարդարելով, Հայոց երկրի խաւար անկիւններին լոյս սփռելով, անկարող էր անտարբեր մնալ և Մայր Աթոռ—Ս. Էջմիածնում։ Հայրիկը, չինարար Հայրիկը իւր անմահ նախնեաց յիշատակարանները մացառներից, առապարներից դէպի հարթը, դէպի լոյսը տանելուց, ուրիշ հոգս չէ ունեցած և Ս. Էջմիածնայ Նորակառոյց թանգարանը, որի հոյակապ կանգման նա այնքան նուիրուած է, ասածիս պերճ ապացոյցներից մէկն է։

Եւ ես Հայրիկի կանգնած այդ նոր կոթողի ներսումն էի, դիտում էի քաջ և սուրբ հարանց յիշատակարանները, մտքերի մէջ սուզուած՝ անցնում, սաւառնումէի հեռու հեռու անցեալներ, հայրենի մարած, բայց տակաւին կրակոտ օջախներ, գեղածիծաղ օրեր, ժպտալից փառքի ստուերներ. յանկարծ այդ միջոցին ներս մտաւ Սուրբ Հայրապետը—Հայոց ժողովրդի սրտակից Հայրը։ Այդ իւր սովորութիւնն էր, որ ճաշից յետոյ միշտ այստեղ էր հանգստանում։ Խոհերը ծփումէին Սիգապանտ ձակատին, Տիտանեան կրծքի տակ հազարաւոր զգացմունքներով ալեկոծուած սրտի արտայայտութիւնը կարդացումէր արծուանիշ աչքի մէջ։ Կեանքի հոսանքներն, իրաւ է, ակօսներ է ձգել նուիրական դեմքին, սակայն բիւրաւոր իղձերն ու փափագները տակաւին պահպանել են հոգւոյ արիութիւն։

Այո, վիշտը, հազարաւոր գաւակների լացն ու արտասուքը ճնշել են նորան, բայց այդ բոլորի նահանջի յոյսը, այդ բոլորի փայլուն պսակի առնելու տենչն է, որ տակաւին պահպանելեն և պահպանում են Նրա հայրագորով սիրտը։

Հայրիկ, ո՜հ, Հայրիկ,
Քո քաղցը անուան
Լինիմ ես զուրբան.
Սիրեմ այն հողը
Որ ծնաւ քեզ պէս
Հրեշտակ պահապան։

Բանաստեղծի սոյն խոսքերը ակամայից մրմնջումէի Նրան տեսնելով և իմ խորին պատկառանքն արտայայտելով կամեցայ դուրս գնալ, սակայն նա նշան արեց որ մնամ։ Նստեց Հայրիկն իւր սովորական աթոռի վերայ, կանչեց ինձ իւր մօտ ու մի քանի հարցերից յետոյ ասաց. «Էջմիածին եկերէք, կ'տեսնամ, որ սրտագին հաւատով կ'երկրպագես Հայոց նախնեաց ձեռով կերտած սուրբ քարերը, սուրբ տաճարներ. բայց այժմ երբ կ'ուղեւորուիս դէպի այդ իսկ նախնեաց որբան, դէպի անոնց ծննդավայր, կ'պատուիրեմ դքեզ հոնալ այցելել բոլոր սրբավայրեր. Լիմ, Կտուց անապատ, մեր Վարագայ վանք.—ա՜խ, Վարագ, Վարագ. օր մընալ տեսնեմ զքեզ, քո քաղցր ջուր խմեմ, քո անոյշ օդ ծծեմ. . . . ա՜խ, ալ չ'պիտի կրնամ, հա՜, ատոնց կարօտով գերեզման պիտի իջնեմ։ Կ'գնաս, Դու, Տէր Աբգար, կ'տեսնես այն ծաղկաւէտ դաշտէր, այն դալար հովիտներ, սարեր, ձորեր, անոնք բոլորն ալ թէպէտ անմռունչ, բայց քեզի շատ բան կ'պատմէն. վասն զի անոնց իւրաքանչիւր անկիւն, նախնեաց արիւնով ու արցունքով է լուացուած»։ Նա լռեց և իւր խօսքը ծրարեց, մի խոր հառաչում, ապա բարձրացաւ տեղից ու յայտնեց, որ պէտք է Ս. Գայանէի վանքը գնայ նախատօնակի հանդէս կատարելու։ Օծեալ Հայրիկը հրամայեց նուաստիս հետեւիլ իրան։

Նա գնում էր գլխակոր, լուռ, մտախոհ և մերթ ընդ մերթ հառաչները Մասիսի հովերին յանձնելով։

Թանդարանից դուրս գալուց՝ անցաւ լճի ափը. թողեց դէպի Գայանէ տանող ուղիղ ճանապարհը և մտաւ Գայանէի պարտէզը, սէգ քայլերն ուղղեց առաջ, նորաբողբոջ ծառերի արանքով։

Ինչու նա ուղիղ ճանապարհից չեղուեց, ինչու անցաւ այդ ծառերի արանքները, այդ հասկացայ ես իսկոյն։ Ուղիղ ճանապարհի վերայ ընկած էին հարիւրաւոր գաղթականներ։ Ամենքն էլ մաշող կարոտով սպասումէին անձկալի Հայրիկի աջը համբուրելու— գուցէ վերջին անգամ Նրա քաղցրալի ձայնը լսել, որ, ով գիտէ, էլ երբ պիտի տեսնեն, էլ երբ պիտի համբուրեն Նրա Օծեալ աջը և էլ երբ պիտի ականջ դնեն Նրա զորովալից խօսքերին։ Սակայն սրտագորով Հայրը այլ ևս չի կարողանում հանդուրժել տերևասփիւռ դարձաց որդւոյ հեկեկանքներին։ Նա, որ իւրաքանչիւր վայրկեան քաղցրէ համարել Նրանց հետ լինել, Նրանց սիրով ուրախանալ, Նրանց խօսքերով հրճուիլ, իսկ այժմ . . . . այժմ, ո՜հ, մարդկային սրտերը դիտողդ Աստուած, Դու միայն կարողես տեսնել այն սև ալիքները, որ ծփումեն զորովով և կորովով զեղուն սրտի մէջ։ Եւ գիտէր Հայոց Հայրիկը, որ բացի լացից, արտասուքից, հառաչից այլ ոչինչ չ՚պիտի տեսնէր և գիտէր, որ մի ծանր կապարէ սիւն ևս պիտի աւելացնէր վշտամորմոք սրտի վրայ ուստի և հեռացաւ ուղիղ ճանապարհից և մտաւ բնութեան լուռ, անդորը գիրքը. որ կարծէս Փրկչի նման կամենումէր մենաւորութեան մէջ աղօթել և խնդրել երկն-

քի և երկրի Դահակալին, որ յիշէ նրանց և անցցէ այդքան դառն բաժակը նրանցից։ Սակայն գաղթականներն ըստ սամարացւոյն կարողացան հասնել նրան և վազելով մինչև Վանք բռնեցին նրա ճանապարհը։ Ո՛հ, իմ գրիչին այլ ևս անզօր է նկարագրել այդ տեսարանը։ Հայրիկ, գոչում էին նրանք. Հայրիկ աղաղակում և ամեն որ ճիգ թափում գէթ նրա փեշերը համբուրել։ Ուրուրից փախչող ճնճղուկների նման կարծես ամէնքնէլ ծուարուել էին ցանկանում նրա Հայրախնամ թեերի տակ։

Հայրիկ հա՛ց, Հայրիկ ջո՛ւր, Հայրիկ հալա՛ւ, ոանամա՛ն, ճանապարհի ծախս, ամա՛ն Հայրիկ, պահիր մեզ, գթա՛, ով Հայրիկ, մերկենք, բոբիկ ենք . . . . Նարեկացու ձիրքէ հարկաւոր նկարագրել Հայրիկի սիրտը։ Նա կանգնած՝ մերթ հայեացքն առնում էր երկնքին, մերթ իւր շուրջն նայում, աչքերը աղի լճեր դարձնում, կաթ կաթ շիլթերը թօշնած այտերն ոռոգում, նա յետ նայեց.—հեռուում Մասիսն էր կանգնած, մռայլոտ դէմքով, ալէծուփ, շալմաներով, Ս. Էջմիածինն էր ընկած նրա ստորստում և իւր շուրջը Լուսաւորչի տարագիր զաւակները, որ «Օգնութիւն, օգնութիւն», էին աղաղակում։

Աչքերից հոսող դառնալից կայլակները, գետին գլորելով, դարձաւ նրանց ու ասաց. «Ամէն հոգացողութիւն յանձնուածէ Տէր Աբգարին, նա ձեզի կ'գոհացնէ»։ Իսկ ես հրաման առնելով Վեհից յայտնեցի, նախ՝ դրանք ստացելեն ամեն մի կարևոր հագուստե-

ղէնը. իսկ նրանք որոնք որև է պակասութիւն ունին, անձամբ կ'հսկեմ և բոլորին էլ լիովին բաւարարութիւն կ'տամ։

Նախատօնակից յետոյ Վեհափառը վերադարձաւ վեհարան, այս անգամ գաղթականներից այլևս նեղութիւն չ'կրելով։ Իսկապէս մտնելով Հայոց Հայրապետի դրութիւնը, տեսնումես, որ անչափ ծանր է։ Բագու քաղաքում, հազարաւոր ժողովուրդի մէջ 17 հոգուց բաղկացած մասնաժողովը հազիւ էր կարողանում բաւարարութիւն տալ 500 գաղթականների, հապա երևակայեցէք թէ որքան ծանր և որքան դժուարէ մի վանքի ստուերում կառավարել հազարաւոր գաղթականների, Այսուամենայնիւ պաշտելի Հայրիկը իրան յատուկ եռանդով բաւարարութիւն է տուել բոլորին, ծուարել է իւր թեւերի տակ և պահպանել սրտացաւ հօր խնամքով։

Հետևեալ առաւօտեան ֆուրգոններն արդէն կազմ ու պատրաստէին։ Ամէնքին հաց բաժանեցի և երբ թիւը նորից ճշտեցի, տեսայ որ մի ծերունի, որ վաղուց միտումէր փախչելու, չկայ։ Նա դեռ Ելինովկայումն էր կամենում իւր այդ դիտաւորութիւնը իրագործել, բայց Փըրկչական խարազանի ոյժը երբ նա տեսել էր, ջերմեռանդ երդումով խոստացել էր, այլևս այդպիսի յիմարութիւն չ'անել, այնուամենայնիւ նա մեզ խաբեց։

Յունիսի 2-ն էր։ Արարատեան չքնաղ առաւօտներից մէկը։ Օդը բուրում էր լի ամենայն քաղցրու-

թեամբ։ Մասիսի գլխի չալման բարձրացրել էր մինչև եթեր։ Կարծես կամենում էր դիտել իւր անբաղդ որդւոց և բաց ճակատով նրանց ողջ երթ մաղթել։ Բայց երբ ֆուրգոնները շարժուեցին և գաղթականներն սկսեցին իրանց ընթացքը, Մասիսը մռայլուեց և ամպի վէտ վէտ զանգուածները ծանրացան նրա գլխին։ Գաղթականներից ոմանք մնացին Ս. Էջմիածնում միւս օրը դուրս գալու դիտաւորութեամբ։ Պատճառը ֆուրգոնների պակասութիւնն էր իսկ մեր գաղթականները օդը թնդացնելով «կեցցէ Էջմիածին, կեցցէ Հայրիկ, կեցցէ Բագուա Հայեր», ճանապարհ ընկան դէպի Մասիսի միւս երեսը։

Ես Յովհաննիսի հետ գնացի Վեհափառի մօտ, հայցել նորա սուրբ օրհնութիւնը, որ զօրաւիգն լինի մեզ այսքան ծանր լուծը տանելու։ Զոքած եմ Հայրիկի առաջ, կամենում եմ խօսել, բայց արտասուքը խեղդում էին և աղի կաթիլները թափւում Վեհի ոտներին։ Ի՞նչ բնաղդումն էր արդեօք, որ թախիծը ծփում էր իմ սրտիս մէջ.... Օրհնեց Վեհափառ Հայրապետը, խրախուսեց, սիրտ տուաւ և յանձնեց ինձ սրբատառ Կոնդակը, որ զետեղումենք գրքիս եօթներորդ երեսում։ Նորից իմ համբոյրներ հեղեղելով Ս. Հայրապետի աջոյն, դուրս եկայ Վեհարանից և դիմեցի դէպի Մայր տաճար։ Զոքեցի Սուրբ Միածնի Իջման տեղոյն առաջ, խաչ, գոչեցի, Ամենակալ խաչ, օգնիր ինձ, ոյժ, զօրութիւն տուր, որ ծանր պարտքս կատարեմ, ինձ յանձնուած հօտը անվտանգ տեղ

ՏԱՃԿԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԲԱԳԻՈՒՄ.

Дозволено Цензурою 4 Мая 1902 года, Тифлисъ.

Типогр. Я. Г. Гюльбасарова, Баку.

հասցնեմ և անփորձ վեռադառնամ դէպի բազմանդամ ընտանիքիս, որ շուարած ինձ են ակնկալում։ Ապա հրաժեշտ տալով Գերապատիւ և արժանապատիւ հայրերին գուրս եկանք Ճաշարանից պ. Խորէն Խրիմեանի հետ, որ ուղեկցեց մեզ մինչև Ղազարապատ և կարօտակէզ համբուրիւ մեզ բարի ճանապարհ մաղթեց։

Յունիսի 5-ին Ֆուրգոնները հասան Մարգարայ կոչուած փոստային իջևանը։ Այդտեղ մենք կառք վարձեցինք և առաջ գնացինք, որպէսզի վաղօրօք պատրաստութիւններ տեսնենք։

Ժամը 4-ին մեր կառքը հասաւ Իգդիր և կանգ առաւ Հայոց եկեղեցւոյ դռան առաջ։ Հարցրի տեղական քահանայի մասին, որովհետև նրա մօտ պէտք է իջած լինէր արժ. Սիօն վարդապետը, որ եկել էր այդտեղ Վեհափառ Հայրապետի հրամանով մի քանի պատրաստութիւններ տեսնելու։ Այդ միջոցին այդտեղ մօտեցաւ մի երիտասարդ հայ և թախանձանօք խնդրեց, որ իւր մօտ իջնեմ։ Հայի հիւրասիրութիւնը ինձ յայտնի էր, բայց պարոնի առաջարկութիւնը չ'կարողացայ ընդունել նախ քան Սիօն Հայր սուրբին տեսնելը։ Հայր սուրբի հետ տեսնուեցանք և նա յայտնեց, որ միակ յարմար իջևանը ուսումնարանի շինութիւնն է, որը փակ դռներով ընկած էր եկեղեցւոյ բակում։ Եւ Հայր սուրբի հետ գնացինք դէպի այդ շինութիւնը, որպէս զի նախ քան Ֆուրգոնները գալը ինչ որ հար-

կաւոր է կարգի բերենք։ Այդտեղ մինչ մենք դիտուր էինք սենեակները, նոյն երիտասարդը, որի անունը Սուրէն էր, կանգնեց մեր առաջ և սկսեց իւր տուն գնալու թախանձանքները։ Աբրահամու, Իսահակայ և Յակովբայ կենակցութիւնը դեռ պահպանուած է հայի սրտում։ Ճանապարհորդի առաջ իւր վրանի դռները բանալը, իւր քրտինքի պտղից բաժին հանելը իւրաքանչիւր հայի նուիրական սկզբունքն է։ Եւ Սուրէնը նոյն ոգւով տոգորուած խնդրում էր մեզ, յոգնած ճանապարհորդների. իւր վրանի տակ հանգչիլ և յաղենալ այն սփռոցից, որ ստացել է նա բոլոր բարիքների ստեղծողից։ Այժմ նա խնդրում էր գնալ իւր մօտ ոչ միայն մեզ, այլ և Հայը սուրբին։ Սրտի խորին բերկրութեամբ դարձայ նրան ու ասացի «եղբայր, մենք քահանայ ենք և մենք ձանձրութիւն տալ միայն կարողենք մեր զինակիցներին, չնայած որ ես շատ ուրախ կ՚լինէի եթէ այստեղ հիւրանոց լինէր. այն ժամանակ ձանձրութիւն չէի պատճառիլ ոչ մէկին և ոչ միւսին»։

—Նախ՝ մեր տունը քահանայի տունէ, ասաց Սուրէնը, երկրորդ՝ քահանան իբրև հայը անխնայիր պիտի մտնէ ամէնքի տունը, իսկ հօր ներկայութիւնը երբէք ձանձրութիւն չի բերիլ և ոչ մէկին։

Մենք համաձայնուեցինք հիւրասէր հայի հետ և Հայը սուրբի հետ միասին ուսումնարանի սենեակները կարգի բերելուց, դիմեցինք դէպի Սուրէնի տունը։ Այդտեղ էր և գործակալ քահանան և մի

նորընծայ և տեղական բոլոր քահանաները, որոնք միշտ վայելում էին երիտասարդի առատ սեղանը և օրհնում այդպիսի ընտանիքները, որոնք հանդիսանում են իբրև օրհնեալ շառաւիղներ, օրհնեալ նահապետների։

Երեկոյեան ժամը 7-ին ֆուրգոնները եկան։ Նրա մէջ եկող ժողովրդին տեղաւորեցինք՝ ոմանց ուսումնարանի սենեակներում, ոմանց դալարապատ բակում։ Ճշմարիտ է երէցփոխան Եփրէմը փոքր ինչ զոհ չէր որ կանաչ մարմանդի խոտերը կոխկրտում էին, այնուամենայնիւ նա էլ չէր կանում իւր օգնութիւնը հասցնել։

Հետևեալ առաւօտեան մեզ մօտ եկան Իգդիրի տանուտէրը, երէցփոխանը և երկու պատուաւոր անձինք և յայտնեցին, որ իրանց հասարակութիւնը կամենում է ճաշ տալ բոլոր դաղթականներին՝ որոնց թիւը 800-ի է հասնում։ Ճաշն առատ էր և ամէն ինչ համաձայն Իգդիրի ժողովուրդի բարեպաշտ ոգւոյն։ Առհասարակ այդպիսի հիւրասիրութիւնները առանձին ոգևորութիւն էին բերում դաղթականներին և նրանք չափազանց զոհ մնացին Իգդիրի ամբողջ հասարակութիւնից. սակայն ցաւ 'ի սիրտ մի անախորժ դէպք ծանրացրեց բոլոր տպաւորութեանը և դէպի հեղինակը, ամաչելով պիտի ասեմ որ մի քահանայ էր։ Ձեռքին խաչ և աւետարան բռնողը, անշուշտ պիտի հասկանայ թէ ինչպիսի լուծ է առնում իւր ուսերին։ Ստուծոյ և մարդկանց մէջ միջնորդի դեր ստանձնողը

ոչ միայն արտաքինով պիտի ճանաչէ մարդկանց, այլ գլխաւորապէս պիտի իմանայ նրա սիրտը և նրա հոգին։ Սակայն Իգդիրի քահանան ուրիշ տեսակ է հասկացել ժողովրդին։ Նրա կարծիքով աղքատութեան մէջ խրուողը խպառ կորցնում է և հոգու վեհութիւնը և պատուասիրութիւնը։ Այլ կերպ նրա կարծիքով աղքատի հետ կարելի է վարուիլ ինչպէս զրաստի հետ։ Եւ այդ սկզբունքով տոգորուած քահանան մտնումէ գաղթականների մօտ և զանազան խոսակցութիւններով զգուեցնում նրանց։

Նա ի միջի այլոց հարցնում է թէ չ'կայ մէկը նրանց մէջ, որ պսակուել կամ նշանուել կամենայ և աւելացնում է թէ՝ եթէ կամեցողներ կան՝ ինքը պատրաստ է և կարող է իսկոյն պսակել։

Այդ առաջարկութիւնից ոգևորուած չորս երիտասարդ յայտնում են, որ իրանք վաղուց նշանուել են այս և այն աղջկայ հետ և պսակուելու յարմար առիթ էին որոնում, ուրեմն եթէ քահանան առանց արգելառիթ հանգամանքի կ'պսակէ իրանց, իրանք պատրաստեն։

Քահանան նորից պնդում է իւր պատրաստականութիւնը։

Երիտասարդներն ուրախացած այս առաջարկութիւնից, շտապում են իրանց վաղեմի ուխտը կատարել։ Նշանուած աղջկերքը հանումեն այդ օրուան յարմար մի կերպ ձեռք բերած քօղերը, զարդարուում և ամէն մէկը իւր փեսացուի հետ, շրջապատուած

խաչ եղբօր և ազգականների հետ, դիմում են եկեղեցի։ Սակայն ինչ։ Պսակել խոստացող քահանան այդտեղ չէր։ Նա մի կատակ է, որ արել է այդ անբաղդների գլխին։ Ամենքն էլ կատաղումեն։ Կատակ անել կարելի է, սակայն պատուախնդիր հայը որքան էլ աղքատ լինի, երբէք թոյլ չի տալ, որ կատակ անեն այն բոլորի հետ, որոնց նա սուրբ է համարում։ Ուրեմն չի կարելի կատակ անել և պսակի խորհրդի հետ, քանի որ դա հայի սրբութիւններից մէկն է։

Այդ պատճառով սաստիկ յուզուած գաղթականները գրոհ են տալիս դէպի քահանայի տունը, կամենալով դուրս քաշել նրան և խաղալիք չինել իրանց բռունցքներին։

Աղմուկը լսելով, Սիօն Հայը սուրբի հետ շտապով վազեցինք դէպի եկեղեցի և գործի էութիւնն իմանալով, մի կերպ հանգստացրինք նրանց. յայտնելով թէ կ'հեռագրենք Վեհափառին և քահանան կ'պատժուի։

Մենք հանդարտացրինք ժողովրդին, սակայն մեր սրտերը չէին հանդարտւում. երբ տեսանք խեղճ աղջիկները համեստագոյն քողով ծածկուած, շօշափուած պատուասիրութեամբ, արտասուք էին թափում և անիծում քահանային, եկեղեցուց դուրս գալով դէպի բնակարանը։

Փառք տուի Արարչին, որ այսպիսի դատն փորձանքից էլ ազատուեցինք։

Միւս օրը Սիօն Հայը սուրբի, տեղական բարեկարգչի և Յովհաննէսի հետ գնացի Գաւառապետ պ.

Բլասլաւսկի մօտ։ Հայը սուրբը ողջունեց Հայրապետի կողմից, յայտնեց մեր խնդիրը և ասաց, որ Ս, Հայրապետն էլ յոյս է տածել դէպ նա, որ անշուշտ չի խնայիլ իւր օգնութիւնը։ Պ. Գաւառապետը մեծ սիրով ընդունելով մեզ, նախ խնդրեց Հայը սուրբին, որ իւր խոնարհ յարգանաց յաւաստիքը յայտն է Նորին Վեհափառութեան, ապա աւելացրեց, որ մեզ առաջնորդելու համար ինքը մի ձիաւոր կը նշանակէ։ Բայց մենք խնդրեցինք, որ բացի ձիաւորը մի պաշտօնեայ ևս նշանակէ, որի միջոցով կարողանանք հեշտութեամբ անցնիլ սահմանից, այլ և մի կերպ վայելել Բայազէտի Փաշայի օգնութիւնը։

Թէ պարոն Գաւառապետը և թէ Փաշան՝ իրրև սահմանապահ հարևաններ, յաճախ գործ էին ունենում իրար հետ և յաճախ դիմում էին իրար զանազան հարցերի՝ կեղեքումների, յարձակումների մասին և միշտ, 'ի հարկէ աշխատում էին իրար օգնել և իրար սիրտ շահել։ Ահա այդ պատճառով Գաւառապետի կողմից նշանակւած փոքր 'ի շատէ դիրք ունեցող մարդը կարող էր մեզ շատ օգնել. դորա համար և մենք կրկնեցինք մեր խնդիրը, որ վերջը որոշեց ձիաւորի հետ նշանակել և իւր թարգման պ. Ռուբէն Բաբաջանովին, որ մեզ հետ Բայազէտ եկաւ և երկու օր մնալուց յետոյ կրկին Իգդիր վերադարձաւ։

Գաւառապետի սոյն խոստումն առնելուց յետոյ եկանք ֆուրգոնների հոգացողութիւնը անելու։

Մեր 25 ֆուրգոնները վարձուած էին մինչև Իգ-

դիր, իսկ այդտեղից առաջ գնալու համար ահագին վարձեր էին պահանջում։ Իսկ ինչ անէինք։ Սայլ էլ չկար և ոչ քարան։ Գաղթականների թիւն էլ 500-ի տեղ այժմ 800 է։ Մնացել էի շուարած. ինչպէս հսկել. ինչպէս տեղաւորել։ Վերջապէս վճռեցի 23 ֆուրգոն վարձել. իրերը, կանանց, երախաներին ու ծերերին տեղաւորել այդ ֆուրգոններում, իսկ առողջ տղամարդկանց որոշել յետիոտս՝ հերթով հետևիլ նրանց։ Այդպէս էլ արինք։ Սակայն մինչև տեղաւորեցի, կարգադրեցի ամէնքի դիրքնէլ որոշեցի, համարեա կիսամեռ եղայ։ Ամէն ինչ կարգի ձգելով, խորին շնորհակալութիւնս յայտնեցի Սիօն Հայր սուրբին, բոլոր Իգդիրցւոց և մեզ հիւրասիրող օրհնեալ տանտիրոնջ, որ այնքան սիրով ընդունեցին մեզ և խաչ հանելով երեսներիս, ճանապարհ ընկանք և երեկոյեան հասանք Օրգով։ Վարձուած ֆուրգոններում տեղ չլինելու պատճառով մի քանի տասնեակ հոգի մնացել էին Իգդիրում։ Դրանց Սիօն Հայր սուրբը հետևեալ առաւօտեան երկու ֆուրգոնում ճանապարհ էր ձգել, որոնք գիշերը գալով, հասան մեզ մօտ, Օրգովի մաքսատունը։

Այդտեղ ես այնպէս յարմարեցրի, որ այդ երկու ֆուրգոնների մարդկանց տեղափոխեցի մեր ֆուրգոնների մէջ և այդ երկուսի վարձը տալով արձակեցի։ Մենք կառքով էինք գնում. կառապանը Իգդիրցի էր և մի շատ փորձուած մարդ, ուստի և մենք որոշեցինք այդ կառքով գնալ մինչև Վան և այն տեղից վերադառնալ Իգդիր։

Դիշերը մնացինք Օրդովում։ Մաքսատան գլխաւոր ծառայողը—պ. Թուխարելին՝ մի պատուական վրացի երիտասարդ հիւրասիրեց մեզ իւր մօտ և իւր նեղ բնակարանը, (չնայած որ ընտանիք էլ ունէր), դրեց մեր տրամադրութեան ներքոյ։ Մեզ ամեն տեսակ պատիւներ անելով հանդերձ պ. Թուխարելին հսկում էր նաև գաղթականներին։ Նա իրան յատուկ աշխուժութեամբ ճշտեց 800 գաղթականների թիւը, ամենքի վկայականներն էլ այդ գիշերն մուծեց մատեանների մէջ և ժամը 12-ին ցերեկուայ արդէն ամեն ինչ պատրաստ էր, որ մենք խորին շնորհակալիք յայտնելով պարոնին, շարունակեցինք մեր ճանապարհը։

Յունիսի 8-ն էր։ Արևի ոսկեզօծ ճաճանչները ծածկել էին լեռների ծաղկափթիթ գագաթները, որ մեր ֆուրգոնները հասան Զինդիլլիի բարձրաբերձ բլրի ստորոտը, որտեղից պետք է բարձրանայինք դէպի վեր։ Որովհետև ձիերն անկարող էին այդ առապարներով վեր բարձրանալ, ուստի բացի ծերէրից և մանուկներից, ամենքն, էլ ֆուրգոններից իջան և փուռեցին ամբողջ բլրի շուրջը։ Մեծ չարչարանքով էին բարձրանում մեր ֆուրգոնները։ Հերթով մէկի ձիերը լծումէին միւսին և այնպէս մէկ մէկ վեր բարձրանում։ Իսկ բարձրաւանդակի շուրջն ընկած ժողովուրդը մի խայտաբղէտ տեսարան էր ներկայացնում։ Գոյնզգոյն հագուստները դալար բլրի երեսին այստեղ ու այնտեղ փռուած ծաղիկների էին նմանւում։ Եւ չշն-

շում էին ամէնքը հայրենի օդը, հայրենի հովը ու աշտապարար ցնծութեամբ ամենքն էլ երգ էին շնչում. «մրը սար, մրը ձոր, մրը ծառ, մրը ծաղիկ, մրը ջուր, մրը հովիտ ու դաշտ» կանչելով։ Սքանչելի է բնութիւնը։ Ժամը 7-ին հասանք բլրի գլուխը և ահա բիւրաւոր պատկերներ զոյն զոյն մարգերով, հովիտներով, զմրուխտավառ մարմանդներով բացուած է մեր առաջ։ Ամպերը կոյտ առ կոյտ անցնումէին մեր մօտով կարծես գորգեր էին փռուած մեր ոտքերի տակ։ Մի տեղ լանջով սահումեն առուները և արծաթ շերտերի նման շրջանակում դաշտեր ու բլուրներ։ Զինգէլլիի գլխից երևում էին և Բայազետի ընդարձակ հովիտները՝ ծածկուած կանաչ թաւիշով։ Իսկ տարուայ այդ ժամանակին այստեղ ցուրտը խիստ զգալի էր։

Սահմանագլխի վերայ, սահմանապահ զօրքերից ապրում էին մօտ 30 հոգի։ Սկզբում այդտեղ պահում էին ընդամէնը 20 հոգի. բայց քիւրդերի հետ պատահած մի ծանր ընդհարումից յետոյ նրանց թիւը հասցրին 30-ի որ կարծեմ շուտով էլ 50-ի կը հասցնեն։ Իսկ այդ ընդհարման պատմութիւնը հետևեալն է.—Քիւրդերը սովորութիւն էին արած եղել իրանց անասունները յաճախ անցկացնել Ռուսաց սահմանը։ Ռուս զինուորները քանիցս զգուշացրելն նրանց և առանց պատժելու հեռացրել։ Այնուամենայնիւ վայրագ քիւրդերը, ռուսներից մի բան որսալու դիտաւորութեամբ, շարունակել են իրանց յախուռն վար-

մունքը և մինչև իսկ ընդհարման տեղիք տալու համար իրանց անասունները անցեն կացրել Ռուսաց սահմանից աւելի ներս։ Ռուսները մի անգամ խլում են 50 գլուխ անասուն, որ և որոշումեն ուղարկել Օրգով իրանց մեծաւորին։ Քրդերը յարձակումեն Ռուսների վերայ, կամենալով ուժով յետ խլել իրանց ապրանքները, սակայն զինուորները չեն տալիս և պաշտպանումեն հրացաններով։ Վրայեն հասնում և տաճկաց զինորները և երկու կողմից տեղի են տալիս անվերջ հրացանաձգութիւն։ Այդ միջոցին քրդերի քաջարի կանայք նետվումեն Ռուսաց սահմանները և իրանց ապրանքը յետ քշում։ Ապրանքներից մի քանիսը մնում են։ Կռուի մէջ մարդասպանութիւն չի լինում իսկ գործի համար քննութիւն է բացուած, որի հետևանքը յատնի չէ մեզ։

Երկու Իգդիրցի հայեր, որոնք այդտեղ Ռուս զինուորների համար բնակարան էին շինում, խնդրեցին մեզ իջևանել իրանց վրանում և յոգնածութիւնից փոքր ինչ կազդուրուել։ Թէյը, որ միակ կազդուրիչ միջոցնէ յոգնած ճանապարհորդների համար, այդ վրանի տակ վայելեցինք մեծ ագահութեամբ։ Այստեղ պէտքէ յիշել «որ ասրբոռացէ ի միռամ փոքրագանցս այսցանէ բաժակ մի ջուր (ըստ մեզ թէյ) վարձս մարգարէի ստացէ»։ Քիչ յետոյ հացի փողը բաժանեցի բոլորին, որովհետև այդ մասին մեզ զգուշացրել էր Օրգովումը — պ. Թուխարելին, յայտնելով որ, Բայազէտի քրդերը ոսկու մի չնչին փայլ տեսնեն, կ'կարծեն

թէ գաղթականների մօտ նրանից հազարներով են գտանւում և այդպիսով չլացած կարողեն ճանապարհներին յարձակումներ անել. ուստի բարւոք է դրամները Ռուսաց սահմանում բաժանել։

Այստեղից—զօրքերի վրաններից մինչև տաճկաց սահմանը մօտ 200 սաժէն տարածութիւն է և սահմանական տեղը այդ լեռն է, որ Մասիսի լեռնաշղթաներից մէկն է և շարունակւում է մինչև Ղարսա լեռները։

Յովհաննէսին 600 ռուբլի էի տուել, որ տանի Իգդիրում մանրացնէ։ Մանրը ստանալուց յետոյ, երբ ամենքն էլ իրանց բաժինը ստացան, ցրտին ու սառ քամուն ուշ չդարձնելով, գնացին, փռուեցին լերան գագաթին և սկսեցին հայրենի երկնի տակ, հայրենի օդում փոքր ինչ ուրախանալ։

Այդ սքանչելի տեսարաններով զմայլուած, կամենում էի այդտեղից իսկ աւելի հեռուն դիտել, աւելի հեռուով զմայլուել։ Եւ ինձ հետ վերցնելով Ռուբէնին, Յովհաննէսին և տեղական զինուորների գլխաւորին և ի հարկէ ոչ առանց հրացանի, գնացինք բարձրացանք սարի գլուխը։ Հետս հեռադիտակ ունէի, որ ցոյց էր տալիս բաւական հեռաւոր տարածութիւն։ Եւ այդ բարձրութիւնից դիտումէի բիւրաւոր նուիրական տեղեր։ Բայազէտ քաղաքը շատ պարզ երևում էր, նրա շուրջն ընկած հովիտներն հասնում էին մինչև հորիզոնը, իսկ քաղաքի մօտ կանգնած էր անառիկ բերդը։ Ցիշեցի այստեղ հայ ազգի զօրաւոր

Արշակ Տէր-Ղուկասեանին։ Մենք կանգնած էինք այն լերան վերայ, որի գագաթից դղրդացրելեն նրա զօրքերի թնդանօթներն ու հրանօթները,—այն լեռան՝ որ բաղում անգամ պատնէշ է հանդիսացել տաճկից հալածուած բիւրաւոր քրիստոնեաների համար։ Այստեղ է ծածանուել հզօր Ռուսիոյ երկգլխեան արծուանիշ դրօշը.—այն դրօշը, որի ծալքերում զետեղուած է եղել ազատարար կայսրի շողշողուն գաղափարները։ Եւ մինչդեռ ես դիտում էի հեռուն, դիտում էի բնութեան հրաշալիքները, իմ շուրջը հանդէս էր կատարւում։ Անապատում ուրախութեամբ վազվզում էին գաղթականներ, տղայ, աղջիկ պարեր էին բռնել. մանուկները ուրախ ճչալով խաղում էին, մինչև անգամ ծերունիները մեկնուած փափուկ խոտերի վերայ ուրախ ուրախ խօսում էին, զրուցում էին։

Ա՜խ, վաթան, վաթան որքան քաղցրես, որքան նուիրական։—Նա այնտեղից հալածուել է, նրա իւրաքանչիւր անկիւնը ներկուել է իւր սիրելիների արիւնով և դարձեալ նա քաղցրէ, նուիրական է, սիրելի է։ Ա՜խ, նա հարազատ է, նրա կրծքի տակ սիրելիների դիակների հետ և բիւրաւոր իղձեր և յոյսեր են թաղուած, նրանք պիտի պսակուին և կորուսածների փոխարէն կրկնակին և երկինքը առնեն։

Ա՜խ, և ով գիդէ թէ էլ ինչպիսի մտքեր, ինչ յիշողութիւններ, ինչպիսի անցեալ և ապագայ գալիս, անցնում էին նրանց աչքերի առաջով, որ այնպէս

սրտամորմոք կարծես չէին ուզում բաժանուիլ այդ կանաչ բուլուրից։

Այն միջոցին մինչդեռ մենք դիտումէինք մեր շուրջը, զմայլւում բնութեան հրաշալիքներով, թրքաց սահմանապահ երեք զինուորներ մօտեցան մեզ և զարմանքը դէմքերին հարցրին գաղթականների մասին։ Կասկածն ու դողը միշտ սրտումը պահած տաճիկը ով գիտէ, ինչ է կարծել, բայց երբ նրանց հասկացրինք, որ սրանք տաճկահպատակ գաղթականներ են, այժմ վերադառնում են իրանց հայրենիքը, միմիայն այն ժամանակ զինուորների տրոփող սրտերը հանդարտուեցին։ Ես պատուիրեցի նրանց, որ շուտով յայտնեն իրանց գլխաւորին, որպէսզի վաղը առաւօտը ժամը 6-ին մի քանի զինուորներ նշանակեն 10—20, մի խօսքով որքան կարելի է շատ, որպէսզի մեզ ուղեկցեն մինչև մաքսատուն։ Տաճկին յատուկ կեղծաւորութեամբ զինուորները, խոր գլուխ խոնարհեցնելով, հեռացան։

Գիշերը չնորհիւ վերոյիշեալ երկու երիտասարդների անցկացրինք հանգիստ, խաղաղ և արշալոյսը չ'բացուած, զարթեցինք բոլորովին կազդուրուած։

Հայեացքս սևեռել էի Հայաստանի արևելեան հորիզոնին, որ այդ պահուն ոսկէզէն շերտերը ցոլում էին բիւրաւոր ճաճանչներ։ Անձրևածին կաթիլները կանաչ մարմանդի երեսին բոսորավառ արշալոյսի դիմաց ադամանդիր էին դարձել։ Իսկ լերան լանջերը կարծես ամբողջովին թաղուած էին զմրուխտների

սակ։ Ա՜հ, Հայրենեաց քաղցրաշունչ հովերը ողջունույր էին մեզ և ես նրա թովիչ վզզոցին կցորդել էի երանելի Հայրապետի սրտագին մրմունջը «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առիս լոյս ծագեա»։ Այո՛, բայց ոչ միայն առիս, այլ առ այն 800 հոգին, որոնց խնամքն ու պահպանութիւնը ինձ է յանձնուած։ Կանգնած եմ երկու պետութեանց սահմանագլխի վերայ.—մէկի՝ որի դրոշն է այն խաչն, առ որ սեռած է քրիստոնեայ հայի հայեացքը. միւսի՝ որի լուսնաձև դրօշի ծալքերում ամենայն մոլեռանդութեամբ դեռ պահպանուած են Իսլամի գաղափարները։ Եւ ահա այդ իսկ սահմանում քայլ պիտի անեմ և խաչի ստուերից 800 խաչակիրները պիտի յանձնեմ Իսլամի խնամքին։

Ա՜հ գառներ, ումնեն պահ տալիս. . . . ։ Ահա այսպիսի մտածմունքներ պաշարել էին ինձ, որ որքան հեռուն էի սուզւում, անցեալն էի անցնում, ալեկոծւում էր սիրտս, մինչև իսկ երկիւղ տիրում ինձ։ Բնութեան պճնուած գրկում, հարանց արիւնով ներկուած հողի վերայ արևագալի երգը մրմնջալով, այլև բիւրաւոր մտքերի խորքը անցնելով, հայացքս դարձրի դէպի վեր, դէպի երկնի և երկրի Արարչի գահը և ինքս ինձ չչնչացի. «Տէր, պահիր այս անբաղդներին. այսպէս տարագրումն սրանք, միայն նրա համար որովհետև խաչ են կրում կրծքերին և որ հայեացքները Գողգոթա են դարձրած»։

Ա՜խ, ես օգնութիւն էի խնդրում Ամենակալ

Արարչից յանուն իւր Որդոյ. ոչ ապաքէն գրեալ է թէ «զոր ինձ խնդրիցեք 'ի Հօրէ յանուն Իմ, տացցի ձեզ».

Զարթել էին և գաղթականները։ Իւրաքանչիւրը նրանցից հայեացքն ուղուղում էր դէպ երկինք, երեսին խաչակնքում ու լռիկ շրթունքները դողացնում։ Ի՞նչ էին խնդրում Աստուածանից. կեանք և միայն ազնիւ կեանք։

Երբ ֆուրգոններն արդէն պատրաստ էին և իրերն ու այն բոլոր անձինք, որոնք պէտք է գետեղուէին նրանց մէջ, արդէն տեղաւորուել էին, ինձ շրջապատեցին այն մի խումբ երիտասարդները (թուով 70 հոգի), որոնք պէտք է ոտով ընթանային ֆուրգոնների յետևից, ասացի գրեթէ աղաչանքով. «ահա մի քայլ ևս և մենք կ'անցնենք տաճկաց դրօշի ստուերը, այժմ ճանապարհի իւրաքանչիւր անկիւնում պէտք է մեծ զգուշութիւն պահպանել. կարողենք հանդիպել վայրագ քրդերին՝ պէտք է բնաւ ուշադրութիւն 'չդարձնել նրանց վերայ, նրանք կարողեն մինչ և իսկ վայրենաբար ձեզ հայհոյել կամ մի անվայել խօսք ասել, դուք պէտք է լռեք. իսկ ձեր փոխարէն ես կ'պատասխանեմ, մինչև անգամ եթէ յարձակումն էլ գործեն, դարձեալ չ'պիտի շարժուիք առանց իմ հրամանի։ Բոլոր չարիքների առաջ ես պիտի կանգնեմ, ես պիտի պատասխանեմ, որ Աստուած մի արասցէ՝ եթէ մի անբաղտութիւն պատահէ. առաջ ինձ հետպատահէ։ Այլև պատուիրեցի, որ ոչ ոք ֆուրգոններից առաջ չ'անցնի, այլ միշտ աշխատէ միասին լինել։

Ապա կարգադրեցի նրանց, որ երկու շարքով ընթանան ֆուրգոնների կողքով. իսկ իմ կառքը քշել տուի ամենքից առաջ՝ որևէ անբախտութեան առաջին անգամ ինքս հանդիպելու նպատակով։

Երեսներիս խաչ հանելով ճանապարհ ընկանք դէպի առաջ։ Ֆուրգոնները հասել էին տաճկական սահմանը, որ մեզ դիմաւորեցին միմիայն 5 հոգի թուրք զինուոր։ Իմ հարցին թէ ինչո՞ւ այսքան քիչ թուով են եկել պատասխանեցին թէ ոչինչ երկիւղ չ՝կայ. հարկաւորէ միայն փոքր ինչ զգոյշ լինել և շարունակ միմեանցից ու ֆուրգոններից անբաժան ընթանալ։ Այդ թուրքերի գլխաւորին էլ պատուիրած է եղել զգուշութիւն և սառնասրտութիւն բառերը յայտնել Հայերին։

Եւ ՝ի հարկէ, իրանք էլ լաւ համոզուած են որ ոչ ամենոյ կամիլ չեն թողեալ, համոզուած են որ հայը վիրաւորուած սրտով այլ ևս անկարող է վիրաւորանք տանել. բայց և այնպէս նոյն պատուէրը մենք ևս կրկնելով կամաց կամաց առաջ շարժուեցինք, մինչև որ հասանք Ղարաբուլաղ կոչուած տեղը այսինքն մինչև թուրքաց մաքսատունը։

Մեզ հրաւիրեցին մաքսապետ Մահմադ և սահմանապահ զօրքերի գլխաւորի—Ասլան էֆէնդիների մօտ.

Սրանց մաքսատունն ընկած է Բայազէտի հովտի մի ծայրին, ռուսաց սահմանից վերցրած Մասիսի սարի ստորոտից 10 վերստ հեռաւորութեան վերայ իսկ այստեղից մինչև Բայազէտ դեռ 30 վերստ տարա-

ծուխիւն կայ, այստեղը տափարակ է և ճահճային։ Մաքսատունն էլ բաղկացած է երկու խրճիթանման սենեակներից։

Միջնադարեան նախասենեակից անցանք երկրորդ սենեակը, որ մի ընդարձակ խրճիթ էր և ծառայում էր թէ իրրև դիւանատան և թէ ննջարան և թէ ընդունարան։ Սենեակի ամբողջ կահկարասիքը բաղկացած էր մի ընդարձակ թախտից, անդրջրհեղեղեան երեք աթոռից, մի սեղանից և մի զզրոցից, որ եթ չ'մեղանչենք, կարող ենք ասել որ դա ընկած պիտի լինի Նոյի տապանից և հասած այդ տաճկի ձեռը։ Այդ զզրոցում պահպանուումէ դիւանական բոլոր թղթերը, 'ի հարկէ տաճկական սիստեմով։ Սակայն ընութեան վարայդ արտադրութիւնների շարքում, բարի յատկացեալների համար ծնուում են և բարի յատկացուցիչներ։ Մաքսապէտ Մահմեդնէլ հէնց այդպիսիներից էր։ Երբ ներս մտայ սենեակը, նա պահպանուած քաղաքավարութեամբ ընդունեց ինձ և ապա փոքր ինչ խօսակցութիւնից յետոյ սկսուեց իրերի քննութիւնը։

Ամէնքից առաջ նա պահանջեց իմ իրերը։ Իմ իրերը ընդ ամէնը սպիտակեղէնի պայուսակն և անկողինների կապոցը դրի նրա տրամադրութեան ներքոյ։ Նա մի առ մի խուզարկելուց և 'ի հարկէ ոչինչ չ'գտնելուց յետոյ յանձնեց ինձ։

Ես ինձ հետ վերցրել էի և զանազան դեղօրայք՝ քինաքին, փորացաւի, աչքացաւի և այլ հիւանդութիւն-

ների համար զանազան հեղուկներ։ Այդ բոլորը մաքսապետ Մահմեդը զետեղեց մի արկղի մէջ կնքեց և առաջարկեց ինձ ես կնքել—իմ կնիքով։ Այդ առաջարկութիւնն էլ կատարեցի։ Ապա նա յայտնեց, որ ինքը կասկածում է այդ հեղուկների անմեղութեան մէջ, ուստի դրանք այդ կնքուած արկղի մէջ կ'ուղարկէ Բայազէտի փաշային. եթէ նա նրանց մէջ ոչինչ արգելք չի տեսնիլ, ուրեմն կ'վերադարձնէ ձեզ։

Ի՞նչ արած։ Դեռ սկզբումն էինք, ես խոնարհուեցի Մահմեդ Էֆենդիի այդ տեսակ ծիծաղելի կարգադրութեան առաջ։ Ապա յարգելի Էֆէնդին յայտնեց, որ ինքն փոքր ինչ դժուարանում է հաւատալ մեր կառքի վերադարձին։ Նա կասկածում էր, որ մենք կարող ենք կառքը վաճառել Բայազիտում. իսկ այդպիսով նա կ'զրկուի այն մաքսավճարից, որ օրէնքով պէտք է ստանայ ինքը, բայց լիովին հաւատալու համար, Էֆէնդին յայտնեց, որ մենք կարող ենք գրաւական թողնել և երբ նոյն կառքով վերադառնանք այդտեղ, մեր գրաւականը յետ կ'վերցնենք։ Էֆէնդիի այդ կարգադրութիւնն էլ ընդունեցի և իբրև գրաւական քառասուն ռուբլի տուի նրան։

Այժմ հերթը հասաւ ֆուրգոնների խուզարկութեան։ Ամէնքին մանրամասն խուզարկելուց յետոյ, թէ զինուորների գլխաւորը և թէ Մահմեդ Էֆէնդին յայտնեցին, որ ոչ մի կերպ չեն կարող թոյլ տալ ֆուրգոնները տանելու։ Աղաչանք, պաղատանք, բոլորը զուր, բոլորը ապարդիւն։ Ճարահատեալ վճռեցի ժամ

առաջ Բայազէտ գնալ և տեղական փաշայից թոյլտուութիւն խնդրել։

Այս դէպքում դժուարութեան գլխաւոր առիթ տուողներից մէկը մի անպիտան հայ Իգդիրցի էր, որ մեզ հետ եկել էր իբրև ֆուրգոնների կառաւարիչ։ Այդ տմարդին Ասլան Էֆէնդիի հետ աբդէն ծանօթ լինելով և նրա հետ մի շարք խարեբայութիւններ անելով, կամեցաւ մեզ ևս խաբել, նեղացնել և արաւ։

Նա մօտեցաւ ինձ և առանձնապէս յայտնեց թէ էլ ուրիշ հնար չ'կայ, բացի Ասլան Էֆէնդիի բերանը մեղը քսելուց։

Սկզբում իմ զզուանքը յայտնեցի այդպիսի ստոր միջոցի դէմ, սակայն 'ի նկատի առնելով այն նեղ դրութիւնը և կարգապահութեան այն կատարեալ ամայութիւնը, որոնց մէջ մենք գտանվում էինք, վճռեցի մի ոսկոր ձգել քաղցածի առաջ և Ասլան Էֆէնդուն ընծայեցի տասը ռուբլի։ Էֆէնդին երկու փայլուն հինգանոցներն իւր ափն առնելուն պէս, ժպիտն առաւ երեսին և խորին զոհունակութիւն յայտնելով ու զանազան յոյսեր տալով, հրաւիրեց մեզ իւր վրանի տակ մի գաւաթ թէյ խմելու։

Այդ խնդիրն էլ չ'մերժեցինք և Ռուբէնի ու Յովհաննէսի հետ մտանք այդտեղ իբր թէ մի բոպէ հանգստանալու։ Եւ ահա ֆուրգոնչիները փրփրադէզ բարկութեամբ թափուեցին վրանի առաջ և սկսեցին անվերջ գոռալ։

Թէյ խմել, ինչ թէյ, այդպիսի տեղը ոչ թէ թէյ,

այլ կատարեալ զսահրոհմարս։ Գոռում էին ֆուրգոնչի-ները և անվերջ տրտունջներ հեղեղում իմ հասցէին։

Ի՞նչ էք ուզում, հարցնում եմ նրանց։

Այն՝ ինչ որ դու ես վայելում։

Եղբարք, ասումեմ, հազիւ մի ըսպէ լինի որ ես մտայ այդ թուրքի վրանը, մի բաժակ թէյն էլ չէք թողում որ խմեմ եւ վերջապէս սա ի՞նչ յանդգնութիւն է, ի՞նչ պահանջ է։

Սակայն ամօթն ո՞վ է տուել Վաղաշապատցի ֆուրգոնչիներին։ Այնքան լկտի, այնքան անբարեկ, որ դրանց մօտ լռութիւնը մեծ խոհեմութիւն պէտք է համարել։ Եւ մինչդեռ ես խօսում էի դրանց հետ, յանկարծ նրանք քրքջալով բացականչեցին։

—Օ՜, Տէրտէր, այդ ի՞նչ լաւ ներկուելես։

«Ի՞նչ ներկուիլ, ի՞նչ էք ասում»։

—Լաւ նայիր փարաջայիդ։

Փարաջայիս փեշերն առաջ քաշեցի և ի՞նչ.—ամբողջովին ծածկուել էին տաճկաց կեղտոտութեան արգասիք—զզուելի միջատներով։

Մնում էր ինձ իսկոյն հանել փարաջաս, որ ապա ճիպոտներով հազիւ կարողացանք մաքրել, նրանց։ Զզուանքն ու գարշանքը պատեցին ինձ, և աւելորդ է ասել, որ այլևս քայլ անէի դէպի այդ զօրական կոչուած էֆէնդիի վրանը։ Երբ ես այդ բոլորը ցոյց տալով յանդիմանեցի այնտեղ գտնուած մի քանի զինուորների, նրանք խորհրդաւոր կերպով գլուխները շարժեցին ու ասացին. ի՞նչ են հանդիմանում մեզ, ո՞վ է

մաքրութեան մասին մտածում, մինչդեռ շատ անգամ օրերով քաղցած ենք մնում։

Մտածեցի ֆուրգոնչիների և ձիերի համար ևս հոգալ և որովհետև միայնակ չէի կարող այդտեղ մի բան անել, նորից ընկայ խաբերայ իգդիրցու ձեռքը, որ և դարձեալ կեղեքեց ինձ։

Իգդիրցին յայտնեց, իբր թէ ոչ մի տեղ գարի չ'կայ. այստեղ միայն Ասլան էֆէնդին ունի։ Այն ինչ այդ խաբեբան Ասլան էֆէնդիի ցուցմամբ գնում է մօտակայ Արճակ—հայաբնակ գիւղը, որ 8 վերստ հեռաւորութեան վրայ էր ընկած, գարի է գնում պուդը 40 կոպէկով և մեզ վրայ հաշվում է 1 ռ. 20 կ., առարկելով որ Ասլան էֆէնդին դրանից պակաս չի տալիս։ Ուրիշ ճար չ'ունէի, այդ էլ վճարեցէ և ֆուրգոնչիներին բաւարարութիւն տուի։ Ասլան էֆէնդին էլ թէպէտ տաս ռուբլին առել էր մեզանից, իբր թէ թոյլ տալու ֆուրգոնները առաջ ընթանալու, բայց նա էլ խափեց, յայտնելով, որ այդպիսի թոյլտուութեան ամենևին հնար չ'կայ, այսուամենայնիւ մի փոքրը ծառայութիւն արաւ Փաշայի հասցէին նամակ տալով և յայտնելով, որ այդտեղ ոչ ֆուրգոնները պահելու տեղ կայ և ոչ ձիերը կերակրելու ուտելիք։

Մահմէդ էֆէնդին ոչ միայն Ասլանի հակապատկերն էր, այլ ուղիղն ասած հազարից մէկը, տաճիկ պաշտօնեաների թվում։ Նա քաղցրաբարոյ և սիրաժան ամէնքին խուզարկելուց յետոյ, սիրտ տուաւ մեզ, խրախուսեց և միամտացրեց, որ անվտանգ և

առանց որև է նեղութեան կարող եմ գնալ Բայազէտ և ամենայն հեշտութեամբ թոյլտուութիւն ստանալ։ Ես այդպէս էլ արի։ Այդտեղ ամեն ինչ վերջանալուց յետոյ ուղևորեցի դէպի բայազէտ։

Ճանապարհն ընկած էր լուռ, ամայի հովիտների մէջտեղ։ Կանանչ թաւշանման խոտը հիւսուած գորգերի պէս ծածկել էր ամբողջ տարածութեան երեսը։ Մասիսի բարակ զեփիւռները հանդարտ սոլում էին և կարծես չշնչում էին մեր ականջներին. «Դուք գնում էք այդ ամայի դաշտի երեսով և ձեր աչքերից կաթիլներ չէք թափում այստեղ. չէ՞ որ իւրաքանչիւր հայի համար նուիրական են այս հողերը, այս սիգաւէտ հովիտները և այս ծաղկահիւս արօտները։ Այժմ այսպէս մեռալային լռութիւն է տիրում ձեր շուրջը, բայց չէ՞ որ եղել է ժամանակ, ա՜խ, իրջանիկ ժամանակ. որ այս ճանապարհի վրայ աջ ու ձախ ընկած են եղել գիւղեր, աւաններ, տներ ու տաճարներ. այստեղ իւրաքանչիւր անցուորական լսել է հայ գեղջուկի քաղցրալիր ողջոյնը, հայ գութանի հօրովելը, հայ քահանայի «այէլու

», այստեղից անցնողը դժուար է խուսափել հիւրասէր «Աբրահամներ»-ից, բայց այժմ նա դարձել է անապատ և նրա վրայ մենք ենք միայն շրջում, մենք և Մասիսի զեփիւռները վզզում ու իւրաքանչիւր անցուորի ականջում ծերուկ Մասիսի ողջոյնը երգում։

Այո՛, թախիծը տիրել էր մեր սրտերին. նայում ենք մեր շուրջը՝ անսահման անմարդաբնակ դաշտեր,

նայում ենք հեռուն, դէպի հորիզոնը, տեսնում էինք միմիայն անգղերին ու ագռաւներին։ Եւ գնում էինք առաջ լուռ ու մտախոհ։ Տեղ տեղ ճանապարհի աջ ու ձախ կողմերում ընկած էին մի քանի գիւղեր, տները բաղկացած ցեխէ կիսափուլ խրճիթներից։ Բայց ինչ գիւղեր են դրանք, որ նոյնպէս լուռ են, ձայն, ծպտուն չկար, կատու, շուն անգամ չէին երևում, մեզ ուղեկցում էին երկու տաճիկ ձիաւորներ. նրանցից հարցրինք, նրանք ասացին որ դրանք քիւրդերի գիւղօրայք են և այժմ դարտակ են, որովհետև քիւրդերն այստեղ չեն. նրանք անցել են լեռները։

Այո, այդ երկրում բնութեան բարիքները միայն քիւրդերն են վայելում։ Ամառը կ'բարձրանան հովասուն լեռները, ձմեռը կիջնեն հովիտները. իսկ թէ ով պիտի հսկէ արտը, ով պիտի հաց մատակարարէ նրանց, այդ կողմից ապահով են, որովհետև լաւ գիտեն թէ որքան աշխատասէր է հայի դութանը և որքան քրտնաթոր՝ հայ գիւղացին։

Հետզհետէ մօտենում էինք քաղաքին և մենք ոչինչ փոփոխութիւն չէինք տեսնում. այսինքն դարձեալ նոյն հողակոյտերը, նոյն հովիտներն, որոնք մենք նշմարել էինք Զինդիլլիի լերան գագաթից։

Վերջապէս ժամը 2-ին հասանք Բայազէտ։ Միայն փողոցներում կանգնած քարվանների կարելի է տարբերել Բայազէտը՝ գիւղից։ Մէկ մէկ երևում էին և մարդիկ։ Մեր ուղեորների առաջնորդութեամբ մտանք իբր թէ նշանաւոր փողոցը, ընկած կիսափուլ տների

մէջ տեղ, որոնց սրանքով հազիւ գնում էր մեր կառքը։ Ցանկարծ չգիտեմ որ ծակից դուրս եկաւ մի տաճիկ, թուրը ձեռին, իսկ ուսերից կախուած թելի վիլաներ. որը՝ ըստ երևոյթին վաճառելու էր շրջում։ Բայց այդ միենոյն մարդը Փոլիս-ոստիկան էր և նա կանգնեցրեց մեր կառքը և յանդգնաբար սկսեց հարց ու փորձ անել մեզ։ Նրան յայտնեցինք մեր ով լինելը։ Եւ երբ նա իմացաւ, որ մենք Ռուսաստանցի և պաշտօնական անձնաւորութիւններ. նա իւր դիրքը փոխեց և մինչև անգամ պատրաստականութիւն յայտնեց ուղեկցել մեզ մինչև Փաշայի դիւանատունը։ Իմ հարցին, թէ չի կարելի փոքր ինչ հանգիստ առնել, լուացուել, մաքրուել և ապա ներկայանալ Փաշային, նա պատասխանեց, որ անկարելի է և թէ իրանց օրէնքով նախ պէտք է Փաշային ներկայանալ և ապա դիմել հանդստութեան։

Փոլիսը մեզ առաջնորդեց դէպի Փաշայի ապարանքը. բայց երբ աջ ու ձախ տանելուց յետոյ նա կանգ առաւ մի կեղտոտ տան առաջ, ես փոքր ինչ երկիւղ կրեցի, կարծելով թէ՝ անիրաւը մեզ խաբել է և քշել է ուղղակի դէպի բանտը։ Սակայն ոչ։ Ճշմարիտ է, այդ Փաշայի ապարանքն է,—մի տուն որի մէջ մեր երկրի ոստիկանները հազիւ թէ համաձայնուէին ապրելու։

Մի կեղտոտ, նեղ, գուցէ մի քանի տարուայ ցեխ երեսին կուտակուած սանդուղքներով բարձրացանք դէպի վեր և Փոլիսի առաջնորդութեամբ անցանք մի

մութ, ժանգ—ահոտ նախասենեակ, որ եթէ մի բոպէ աւելին մեզ այդտեղ պահէին, այլ ևս չէի մեղանչիլ եթէ իսկապէս ընդունէի, որ մենք զնդաւոռմն Քրիստոս - տաճկաց բանտումը. բայց այդտեղից մեզ տարան մի այլ սենեակ։ Մի անկիւնում թախտ էր դրած, գորգերով ծածկուած, մի գորգ էլ փռուած էր յատակին. սենեակի մի կողմում փոքրիկ սեղան կար կարմիր կտորով ծածկուած և մի փայտէ մահճակալ։ Այդ բոլորի հետ կեղտոտ պատերի մօտ աններդաշնակօրէն ընկած էին Եւրոպական մի քանի աթոռներ։ Այդ սենեակին կից մի այլ սենեակում, որի յատակը ծածկուած էր կեղտոտ փսիաթներով, ընկած էր մի սեղան ծածկուած կանանչ կտորով։ Այդ էլ ատենադպիրի սենեակն էր։ Երևում էին և մի երկու նկուղներ, որոնք սենեակների տեղ էին ծառայում. դրանց մէջ Փաշայի պալատականներն էին ապրում։

Ինչպէս վերջը տեղեկացանք, այս և այն հրամանները դրում էր ինքը Փաշան, իսկ հրամանատարներն էին ատենադպիրը և ինչ էք կարծում, և այն միևնոյն Փոլիսը, որ ձեռին թուր ունէր և ուսերին վաճառելու թելեր։

Քանի բոպէից մտաւ ինքը՝ Փաշան։ Նա ձեռք չ'սեղմեց, ըստ արևելեան սովորութեան, իւր ձեռը տարաւ նախ՝ դէպի ճակատը և ապա խոնարհեցրեց. նոյն ձևը կրկնեց նաև իմ ուղեկիցներին, ապա կրկնեցին իւր հետ ներս մտնող աստիճանաւորները։

Փաշան բազմեց թախտի վրայ, դարձաւ դէպ

ինձ և ասաց. «Բարով էք եկել, ինչպէս է ձեր կողմերում հանգստութիւն, առատութիւն» և պատասխան դեռ չ'ստացած՝ դարձաւ Ռուբէնին ու հարցրեց «ինչպէս է պ. Բոսլաւսկին։

Պ. Ռուբենը բարև յատնեց գաւառապետի կողմից, յայտնեց իւր գալու պատճառը. ապա յանձնեց նրան գաւառապետի տուած թղթերը։ Փաշան կարդեց թէ թղթերը հայերէն են գրուած, որովհետև նա չ'բացաւ կարդալու. իսկ ես պ. Ռուբէնին ասացի, որ յայտնէ նրան թէ, թղթերը գրուած են թուրքերէն։

Եւ երբ Ռուբէնը յայտնեց, Փաշան բացաւ ծրարը, նամակը կարդաց և յայտնեց իւր ատենադպիրին, որ ամէն ինչ իսկոյն կարդաղրէ։ Յետոյ դարձաւ ինձ ու ասաց. «Մուրախաս էֆէնդի», այսինքն «Ցէր առաջնորդ», ես իսկոյն ընդհատեցի նրան և ասացի, որ ես Դահանայ եմ։—Փաշան ուշ չ'դարձրաւ, չ'շեղվեց իւր քաղաքաւարական ձևերից և շարունակեց ինձ «Մուրախաս էֆէնդի» անուանել ու այդպէս նորից դարձաւ ինձ ու հարցրեց.—Ո՞րտեղից էք գալիս և ուր էք գնում։

Պատասխանեցի, որ Բաղուից եմ գալիս։ Այնտեղից 500 գաղթական վերցրած եկայ Ս. Էջմիածին, 300 հոգի էլ այդտեղ աւելացրի և ամէնքին անվտանգ հասցրի մինչև այստեղ. այստեղից էլ Վան պիտի տանեմ։

«Բարի, բարի», ասաց Փաշան և հրամայեց ծառաներին սուրճ բերել մեզ համար։

Սուրճը վայելելուց յետոյ նրան յայտնեցի իմ գալու նպատակը, թէ ֆուրգոնները մնացել են Ղարաբուլաղում և շատ կրիտիքական դրութեան մէջ են և թէ այդտեղից չեն թողնում առաջ անցնել. ուստի և եկել եմ դիմել՝ իւր աջակցութիւնը։

Նկատեցի, որ Փաշան ընկաւ վարանման մէջ, ուստի շտապեցի դժուարութիւնների պատճառը, մանրամասն պատմել։

—Առաջին՝ ասացի, եթէ երկու օր ուշացաւ, էլ ժողովրդի համար հաց չի կարելի ճարել. երկրորդ՝ եթէ անդամ կամենաք քարւանով տեղափոխել, այդ անհնարին է, քանի որ քարւան բնաւ չի կարելի ձեռք բերել. իսկ եթէ այստեղից քարվան վարձելու լինենք և տանենք այնտեղ, այդ չափազանց դժուար է. վերջապէս ֆուրգոնչիներին վարձատրուած է մինչև Բայազէտ բերելու։

Վերջին պատճառաբանութիւնս նա գուցէ ուշադրութեան չ'առաւ. սակայն առաջին կէտերը լիովին հիմնովին գտնելով և դարձեալ փոքր ինչ մտածելով, վերջը հրամայեց, որ իւր պահանջած ժամանակին՝ իսկոյն պատրաստ գտնուին մի աստիճանաւոր և մի զինուոր։

Հրամանը կատարուեց և լոպէաբար երկուսն էլ ներս մտան ու խոնարհութեամբ կանգնեցին նրա առաջ։ Նա գրեց հրաման Ասլան Էֆէնդիի վերայ, որ թոյլ տայ բոլոր ֆուրգոններին անցնել, ապա աւելացրեց հրամանատար աստիճանաւորին, որ ֆուրգոն-

ները գալուց, կարգադրեն քաղաքից դուրս մի հովտի վերայ կանգ առնելու։

Ընդհակալութիւն յայտնելով Փաշային, ներկայացրինք մեր անցագրերը, որ ըստ իւրեանց սովորութեան արձանագրեցին և մուծին մի ինչ որ մատեանի մէջ, ապա դուրս եկանք անցանք քաղաքը մեզ համար օթևան որոնելու։

Մենք իգդիրից նամակ ունէինք Բայազէտի Տէր-Ներսէսի վրայ. բայց մեզ ասել էին, որ այդտեղ ապրում է և մի Սարգիս աղա, որի դռները միշտ բաց է իւրաքանչիւր ճանապարհորդի համար։ Պատեհաբար Տէր Ներսէսը այդտեղ չէր, իսկ Սարգիս աղայի մասին յայտնեցին, որ մի տարի առաջ է մեռել։ Ուրեմն ինչ անէինք։ Որին դիմէինք։ Այդպիսի քաղաքներում եթէ բարի մարդիկ չլինին, մեզ պէս անփորձ ճանապարհորդները դրսում կ'մնան։ Մենք մնացել էինք շուարուած։

Այդտեղ իմանալով որ Սարգիս աղան վաճառական որդի ունի, իսկոյն որոշեցինք գնալ նրա մօտ և մեր դրութեան մասին պատմել։

Գնացինք և ասացինք։ Նա փոքր ինչ մտածեց և ապա մեզ ներկայացրեց մի երիտասարդ՝ Սմբատ անունով և ասաց, որ այդ Սմբատը կաշխատէ մեզ համար վարձով բնակարան ճարել։ Այստեղ ես զարմացայ։ Հիւրասիրութեամբ զովաբանուած հայից այս անսպասելի էր։ Սակայն ըստ երևոյթին նիւթական ճնշումների, եկամուտների սակաւութիւնը խլել

են այդ մարդկանցից և հոգւոյ վէհութիւն և սրտի արձակութիւն և այս բնական է. ուստի մենք ոչ այնքան նեղացած այսպէս հիւրասիրութիւնից. հետևեցինք այդ Սմբատին և նա մեզ տարաւ մի այրի կնոջ փոքրիկ խրճիթը։ Խրճթի ամբողջ կահ կարասիքը բաղկանում էր մի հասարակ թախտից և յատակին փռուած մի քանի հնամաշ օթոցներից։ Որքան էլ նա նեղ էր, որքան զուրկ յարմարութիւններից, այսուամենայնիւ իսպառ անապատում չմնալու համար դրանից էլ զոհ մնացինք։

Միւս օրը յունիսի 9-ին ֆուրգոնչիները եկան և հանգիստ առան քաղաքից մէկ վերստ հեռաւորութեան վերայ ընկած Զանգեզոր կոչուած փոքրիկ գիւղի մօտ։ Դիմեցի Փաշային որ մի քանի պահապաններ նշանակէ ժողովուրդի համար. որպէսզի ազատ մնան թէ քիւրդերի և թէ զանազան անկարգութիւններից։

Եւ նա հրամայեց, որ թուով 10 զինուորներ հերթով հսկեն նրանց։

Այս այդպէս կարգադրելուց յետոյ գնացի եկեղեցի։ Իւր արտաքին տեսքով, արտասուք է շարժում նա իւրաքանչիւր քրիստոնէի աչքում։ Ամբողջովին շինուած է փայտից և ներկայ խղճալի շինութիւնը անցեալի կմախքն է, որովհետև ինչպէս հետազօտեցինք, իմացանք որ սկզբում եկեղեցին շինուած է եղել քարից. իսկ ինչ ինչ հարուածների ժամանակ աւերակ են դարձրել և ահա աւերակների վերայ կանգնել էին այդ փատեայ անշուք շինութիւնը։ Մոմի փո-

խարէն եկեղեցում վառում էին ձէթ և այդ պատճառով նրա ծխից ամբողջ պատերը սևացել էին։ Քահանան մի զառամեալ ծերունի էր։ Ձեռնափայտին հենուած դողդոջուն ձայնով մրմնջում էր. «Լո՛ւր ձայնից մերոց»։ Աղօթքի խորհրդաւոր խօսքերը, տան անշուք տեսքը աւելի և աւելի ազդու կերպով շարժում էին իմ արտասուքը։

Հետևեալ օրը ներկայ գտնուեցայ Սուրբ պատարագին փոքրիկ խումբը Հայաստանեաց եկեղեցւոյ հնաւանդ եղանակներով ոգեպարար ուրախութիւն էին բերում իմ սրտին։ Քաղցրալիր եղանակները, որ հընչում էին մեծ Քերթողի շնորհած աւանդութեան համաձայն, միանգամայն մոռացութեան տուին ինձ այն տխուր տպաւորութիւնները, որոնք ստացել էի եկեղեցւոյ արտաքին տեսքից։ Իմ ջերմեռանդ աղօթքները վերառաքելով ամենագէտ գահակալին, գնացի ճանապարհորդների մասին մտածելու։ Իսկ երբ բնակարանս վերադարձայ, ինձ մօտ եկան երկու անծանօթ աստիճանաւորներ—Նազմբէյ և Բաքիր աղան։

Այս երկուսն էլ տաճկաց այդտեղի աստիճանաւորների շարքում աչքի էին ընկնում իրանց բարի բնաւորութեամբ և փոքր ինչ լուսամիտ դատողութիւններով։

Դեռ նախընթաց օրը՝ երբ Փաշային այցելութեան գնացի և խնդրեցի, որ մի քանի զինուորներ նշանակէ ժողովուրդը հսկելու համար, նա իսկոյն հրամայեց Բաքիր աղային, որ այդ մասին կարևոր

կարգադրութիւն անէ։

Ամէն կարգադրութիւն անելուց յետոյ, Բաքիր աղան ինձ մօտ եկաւ և փոքր ինչ դէսից դէնից խօսելուց յետոյ, խնդրեց ինձ գնալ իւր ընկերակից Նազըմ բէյի մօտ, առարկելով թէ՝ նա լուսամիտ անձնաւորութիւն է և մեզ այս և այն գործում կարող է օգնող ու աջակցող լինել։

Համաձայնուեցի և հետևեցի Բաքիր աղային։ Նազըմ բէյը տարիքով մօտ երեսուն, բարձր բոյով երիտասարդ էր. բաւական գրաւիչ արտաքինով, աշխոյժ և նուրբ քաղաքաւարական շարժումներով։ Եւ նա ամենաքաղաքաւարութեամբ ընդունելով, խնդրեց նըստել. իսկոյն սուրճ բերել տուաւ, ապա խօսք բաց արաւ նախ՝ մեր ճանապարհորդութեան մասին ընդհանրապէս և ապա՝ մեր մասիե մասնաւորապէս։ Նրա խօսակցութիւնը չափած, ձևած էր և իսկապէս այդ երիտասարդը բացառութիւն էր կազմում Բայազէտի բոլոր պաշտօնեաների մէջ։ Սուրճից յետոյ նկատեցի որ ծառան նախաճաշի սեղան է պատրաստում։ Տեղիցս շարժուեցայ հրաժեշտ տալու՝ սակայն չեղաւ. նա սկսեց իւր թախանձանքը և մենք վերջապէս մնացինք։ Նախաճաշից յետոյ, կամենալով քաղաքաւարութիւնը—քաղաքաւարութեամբ հետ վճարել, երկու պարոններին խնդրեցի, որ երեկոյեան ընթրքի՝ ինձ մօտ շնորհ բերեն։ Նրանք չ՝մերժեցին և երեկոյեան եկան։

Կովկասից ինձ հետ վերցրած չոր ձկնեղէնը,

խաւեաբը՝ կարմիր գինու հետ, զարդարեցին մեր սեղանը, ապա այդ բոլորը տեղի տուին տաճկական փլաւին և մենք կարողացանք քաղցը տրամադրութեան հասցնել տաճիկ հիւրերին։ Ընթրիքը՝ մեզ մինչև իսկ մտերմութեան հասցրեց և երկու պաշտօնեաները սկսեցին պատմել իրանց մասին։ Նազմ բէյը՝ իւր պատմելով բուն Պոլսեցի էր. յայտնի ընտանիքի որդի, այժմ հեծելազօրաց 19-րդ գնդի հարիւրապետ. սկզբում եղել է Փադի-շահի թիկնապահներից մէկը. կըրթութիւն է ստացել Պարիզում և տաճկական գինուորական ուսումնարանում։ Փոքր ինչ տոգորուած լինելով ազատամիտ աշխարհայեցողութեամբ, ենթարկուել է նկատողութեան և ուղարկուել՝ ամայի Բայազէտը։ Իսկ Բաքիր աղան, Կովկասցի—Ղուբայից։ Մանկութեան օրերում ընկել է Թիւրքիա և մնացել այդտեղ. ըստ արտաքինի՝ չերքեզի էր նմանում։ Նա ևս հարիւրապետի պաշտօն ունէր Համիդէի 90-րդ զօրագնդի մէջ։ Դա մօտ 40 տարեկան տղամարդ էր. սև, խոժոռուած դէմքով, բարցրահասակ. բնաւորութեամբ և խօսակցութեան ձևով—Նազմ բէյի հակապատկերն էր։ Նա խօսում էր քիչ և իւրաքանչիւր խօսք արտասանում էր կասկածանքով։

Բաքիր աղայի համար, Փաշայի մօտ՝ մուտքը ազատ էր, սակայն Նազմ բէյն զուրկ էր, այդ արտօնէութիւնից։ Այդ երեկոյեան ինձ մօտ, ընթրիքի ժամանակ Նազմ բէյը գործ էր ածում թէ օղի և թէ գինի, իսկ Բաքիր աղան ոչ մէկը և ոչ միւսը. այդ

ՏԱՐԿԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԲԱԳԻՈՒՄ.

Дозволено Цензурою 4 Мая 1902 года. Тифлисъ.

Типогр. Я. Г. Гюльбасарова, Баку.

երեկոյ անցաւ շատ ուրախ։

Ընթրիքից յետոյ, Բաքիր աղան դարձաւ ինձ ու ասաց. «քէշիշ Էֆէնդի, հիւրասիրութեան հերթն այժմ իմն է, նա մանաւանդ որ մենք մի երկրացի ենք, ուրեմն պէտք է իմ տունն էլ յարգես ու դաս ինձ մօտ։ Ասա բարի գիշեր մաղթելով գնացին։

Կիրակի օրը, երբ եկեղեցուց տուն վերադարձայ, Նազմ բէյին ու Բաքիր աղային այդտեղ հանդիպեցի, ինչպէս որ արդէն յիշել եմ։ Վերջինս յայտնեց՝ թէ մեզ ճաշի է սպասում ինքը մի նշանաւոր այգում, որտեղ պէտք է լինին Փաշան և ուրիշ հիւրեր։ Խօսք էի տուել. ուստի չէի կարող այդ հրաւէրը մերժել։ Իսկ Նազմ բէյը յայտնեց, որ իւր ձիերից երեք հատ ընտրել՝ և իմ տրամադրութեան ներքոյ է թողել. աւելացնելով, որ այդ ձիերը մեզ կ՚ծառայեն մինչև մեր գնալու օրը։

Ձիերը հեծնելով դուրս եկանք քաղաքից։ Մեզ ուղեկցում էր Նազմ բէյը՝ իւր ծառայ զինուորներով։ Քաղաքից դուրս պատահեցինք մի անախորժ դէպքի։ Մի քանի հայեր գալիս էին քաղաք։ Ճանապարհին դրանց հանդիպած քրդերն ու թուրքերը՝ սկսեցին հայհոյել և քարեր արձակել նրանց վրայ։ Նազմ բէյը այդ տեսնելուն պէս, մտրակ հասցրեց իւր ոսկեշող ձիուն, որ վեր ու վար անելով գետինը դրոփելով, թռաւ, սլացաւ և հասաւ քիւրդերից մէկին։ Նրան յանձնեց իւր զինուորականներից մէկը, իսկ մենք փոքր ինչ արագացրինք մեր ձիերի քայլերը։ Սակայն երբ տե-

սայ, որ անիրաւ քիւրդը հառաչում է Նազմ բէյի մըտրակների տակ, մտածեցի՝ որ այդ դէպքը կարող է վատ հետևանք ունենալ, որոշեցի շուտով հասնել և մի երկու անգամ մտրակելով ձիուս, բլրից վայր արշաւելով, քանի ըոպէից կանգնեցի նրա մօտ։ Խնդրեցի որ վերջ դնէ իւր հարուածներին, բայց նա շուտ էլ չ՝լսեց և ես դրեթէ քիւրդին ուժով ազատեցի նրանից։

Զէ, քէշիշ էֆէնդի, ուրիշ կերպ չես կարող խրատել այդ անիրաւներին և լաւ է, որ փախչելու փորձ չ՝արեց, ապա թէ ոչ՝ զինուորիս գնդակի համը կ՝տեսնէր։

Նազմբէյին յայտնեցի, որ նախ քան այդին գնալը կամենումեմ ժողովրդին այցելել։ Նա մեծ սիրով համաձայնեց և միասին գնացինք գաղթականների մօտ։ Այս և այն հարց ու փորձն անելուց յետոյ, իմացայ ամէնքի գոհունակութիւնը։ Ապա Նազմբէյը խօսեց, սիրտ տուաւ ամէնքին ու ասաց. «հանգիստ և ուրախ եղէք, եթէ որև է պակասութիւն ունենաք, ուղղակի դիմեցէք ինձ»։ Պահապան զինուորներին էլ հրամայեց, որ աշալուրջ լինին և աշխատեն մի մազի չափ նեղութիւն չ՝լինելու նրանց համար։

Այստեղ ամէն ինչ կարգադրելուց յետոյ, մենք միասին դիմեցինք դէպի Բաքիր աղայի հիւրասիրութեան տեղը, որը այդտեղից երկու վերստ հեռաւորութեան վերայ էր ընկած։

Այդին իւր ճոխ ծառաստաններով սքանչելի պատկէր էր ներկայացնում։ Թաւախիտ ծառերը,

հոտաւէտ ծաղիկները, կարկաչիւն աղբիւրը, իւրաքանչիւր մարդու հոգի ու կեանք են նեբշնչում։

Եւ առհասարակ Բայազէտը ճանապարհորդներին գրաւելու համար, բացի երկու այդուց ուրիշ ոչինչ չունի։ Այդիներից մէկն այդ էր. իսկ միւսն պատկանում է Սարգիս աղային։

Բաքիր աղան մէզ դիմաւորեց այդուց դուրս և ընդունեց վերին աստիճանի քաղաքաւարութեամբ։ Այդտեղ հրաւիրուած էին և ուրիշ շատ հիւրեր, իրենց հաշտարար դատաւորը, արքունական դանձապահը, պարսից հիւպատոսը և այլք։ Ամէնքին էլ մեզ ներկայացրեց ինքը՝ Բաքիր աղան։ Փոքր ժամանակ անցնելուց յետոյ եկաւ և Փաշան, որից յետոյ վերանորոգեցին թէյը։ Թէյ խմելու միջոցին, երբ ես խոսում էի փաշայի հետ, յանկարծ դաղթականներից մէկը առաջ եկաւ, սաստիկ հեալով և ինչ որ բան փսփսաց Յովհաննէսի ականջին։ Յովհաննէսը իսկոյն յուզուեց. թէպէտ և ոչինչ չ'խօսեց, բայց ես նրա դէմքի այլայլուելուց շատ բան հասկացայ և այլևս չ'համբերելով հարցրի նրանից դաղթականի գալու և իւր դէմքի այլայլելու պատճառը։ Նա ասաց թէ՝ ինչոր պաշտօնեաներ մտել են ժողովրդի մէջ և անցագրի ու այլ զանազան իրերի պահանջներ անելով խուզարկումներ բոլորին։

Իմ յուզմունքն էլ ի հարկ է վառուեց և ես իսկոյն դարձայ փաշային ու այդպիսի անօրէն վարմունքի համար յայտնեցի իմ դժգոհութիւնը, այլ և

խնդրեցի որ վերջ դնէ այդ բոլորին։ Եւ նա անսա-
լով իմ խնդիրքին կարգադրեց մի ձիաւոր նշանակել
Յովհաննէսի հետ և ուղարկել եղելութեան տեղը և
իրը թէ վերջ դնել անկարգութիւններին։ Նոքա
գնացին։

Կարճ ժամանակից յետոյ Յովհաննէսը լուր բե-
րաւ թէ՝ մի ինչ որ մաքսապետ խուզարկելով ժողո-
վրդին, տուգանքների պատրուակով առել է նրանցից
մօտ 25 լիրա դրամ, այլ և շատերին հայհոյել է ու
անպատուել։ Այդ միջոցին այդտեղ եկաւ և այդ յան-
գուցեալն մաքսապետը։ Յովհաննէսի բերած տեղեկու-
թիւնից աւելի յուզած՝ դարձայ նրան ու ասացի.
«Ի՞նչ իրաւունքով դուք մտնումէք ժողովուրդին այդ-
քան նեղացնում, եթէ դրամ ժողովելու հարկ կար,
ինչո՞ւ նախ ինձ չէիք դիմում»։

Լկտի մաքսապետը դարձաւ ինձ ու ասաց. այդ
ձեր գործը չէ, դուք այդ ժողովրդին հասցրէլ էք
մինչև այստեղ, ուրեմն բաւական է, այսուհետև դուք
պարտաւորւէք վերադառնալ, նրանք մերն են և մենք
գիտենք թէ ինչպէս պիտի վարուինք նրանց հետ։
Ո՛չ, պատասխանեցի նրան, բարկացած ձայնով.
«Նրանք պիտի ապրին Սուլթանի խնամքով, որով-
հետև այստեղ գալը կարգադրուած է Ռուսաց կայ-
սէր տնօրէնութեամբ և Փադիշահի կամքով։ Մեծա-
փառ կայսեր բարձրագոյն հրովարտակի համաձայն,
հայ գաղթականները պիտի վերադառնան իրանց
հայրենիքը և այլևս նեղութիւն չ՝պիտի կրեն. ուստի

և ձեր վարմունքի դէմ ես կ՚բողոքէմ ուր հարկն է»։ Այս խօսքերն ասելով ցոյց տուի և մեր ողորմած կայսէր հրովարտակի համաձայն տուած, հետևեալ ռուսէրէն վկայականներից մէկը,—ահա պատճէնը։

ՊԱՏՄԷՆ. № 135

ПРОХОДНОЕ СВИДѢТЕЛЬСТВО.

Дано сіе изъ Бакинскаго Городскаго Полицейскаго Управленія турецко подданному Симону Микиртичянцу «съ семействомъ, состоящимъ изъ.....душъ а именно .....
лѣтъ и дѣтей» .....

Въ томъ, что онъ перечисленнымъ семействомъ принадлежитъ къ числу армянъ бегленовъ и согласно изъявленному желанію отправляется изъ города Баку обратно на родину въ Турцію по слѣдующему маршруту: по желѣзной дорогѣ на станцію Акстафу, а оттуда черезъ Делеянъ, Эривань и Игдирскую таможенную заставу на карантино-таможенный постъ «Орговъ» въ гор. Ванъ.

При этомъ предъявитель сего свидѣтельства съ семействомъ согласно Высочайше утвержденному въ 26 день Марта мѣсяца сего года постановленію Комитета, имѣетъ прослѣдовать чрезъ границу безъ соблюденія таможенныхъ обрядностей.

Изложенное подписью и приложеніемъ казенной печати удостовѣряется.
Мая 24 дня 1898 года г. Баку.

Помощникъ Бакинскаго Полиціймейстера
Капитанъ К.

Секретарь А.

№ 176.
1898 г. мая 24 дня.

Помощникъ Столоначальника М.

Мѣсто для печати.

Որ գտանվում էր ինձ մօտ և որ իրանք տեսնելով գլուխները կորացրին, համոզուելով, որ իրանց վարմունքը միանգամայն հակառակ է օրէնքին։

Ապա աւելացրի «Ռուսաց ողորմած պետութիւնը խղճիւ և գթութեամբ ուղարկեց նրանց իրանց հայրենիքը, առանց մի փարայ առնելու, իսկ դուք իւրաքանչիւրից մէկ լիրայ էք պահանջում. տեսէք ուրեմն, եթէ Ռուսաց կառավարութիւնը ձեզ նման վարուէր, նա պիտի մօտ 400,000 ռուբլի առնէր գրանցից որովհետև գաղթականաց թիւը հասնում է մինչև 40,000-ի բայց նա այդ չ՝արաւ. նա մարդասիրաբար և անկեղծ խղճմտանքով վարուեց։ Իսկ չ՝նայած, որ սրանք ձեր ժողովուրդնեն և սրանց հետ դուք առաւել գթութեամբ պիտի վարուէիք, ընդհակառակն՝ կեղեքում էք՝ և այսքան չարչարանքի ենթարկում, յամենայն դէպս արէք, եթէ կամենում էք ես իսկոյն կ՝հեռագրեմ Արզրումի մեր հիւպատոսին և թող նա խօսի Վալլի հետ. իսկ թէ ինչ կարգադրութիւն կ՝անի Վալին՝ այդ կ՝տեսնենք. բայց ծայրահեղ դէպքում հաւատացէք, որ այս ժողովուրդը ես նորից Ռուսիա կ՝վերադարձնեմ և այնուհետև ի՝ հարկ է դուք մեծ պատասխանատուութեան կ՝ենթարկուիք, իսկ դուք, փաշա էֆէնդի, յուսովեմ, որ իմ հեռագրելուն դեմ չէք լինիլ։

Ո՝չ, ինչպէս կամենում էք, պատասխանեց փաշան և աչքի նշանով իմաց արաւ մաքսապետին, որ հեռանայ այնտեղից։ Ապա դարձաւ ինձ ու ասաց.

«Միամիտ եղէք, գնացէք հեռագրեցեք, ես ես կ՝հեռագրեմ Վալիին. եթէ նա հրամայեց այդ փողերը վերցնել, այն ժամանակ կ՝վերցնենք, իսկ եթէ հրամայեց վերադարձնել, այն ժամանակ մենք փողերը կ՝ուղարկենք Վան՝ իրանց տէրերին բաժանելու»։ Այս ասելով, փաշան ներողութիւն խնդրեց և մի քանի բոպէով հեռացաւ։ Նրա հետ դուրս գնացին և իւր ընկերները նոքա մօտ քառորդ ժամ ուշացան։ Մենք մնացինք վարանման մէջ. ինչեր ասէք, որ մեր մտքովը չէր անցնում. զանազան կասկածներ պաշարեցին մեզ։ Իսկապէս մեզ համար սա մի վտանգաւոր բոպէ էր. բայց միւս կողմից մենք ուրախ էինք, որ մեզ մօտ էր գտնվում ազնիւ՝ Նազմբէյը իւր ընկերակից Բաքիր աղայի հետ. նոքա երևի նկատելով մեր շփոթուած դրութիւնը յաճախ մօտենում էին մեզ, սիրտ էին տալիս, խրախուսում և ցոյց էին տալիս նրանց հետ վարուելու կարևոր ճանապարհները։

Նազմբէյը միշտ կրկնում էր. «Սրանց մօտ Դուք ձեզ բոլորովին վախեցած մի ցոյց տաք. միշտ խրոխտացէք և շտապէցէք հեռագրել Վալիին. եթէ մինչև անգամ նրանից բաւարար պատասխան չ՝ստանաք, այնուհետև հեռագրեցէք ուղղակի Սուլթանին. մի խօսքով նրանց հետ մի գործ առաջ տանելու համար հարկաւոր է միշտ անվախ լինել և բնաւ երկիւղ չ՝կրել. այլապէս սրանք իրանց ձեռները ձեր գրպաններին էլ կ՝հասցնեն»։

Նոյնը կրկնում էր և Բաքիր աղան, որը նոյնպէս

հաճախ մօտենում էր մեզ, մերթ ներողութիւն խնդրում, որ իւր վրանի տակ այսպիսի անախորժութիւններ տեղի ունեցան, մերթ խրախուսում։ Նա յուզմունքից կատաղել էր։ Իւր բարկութիւնը ոչնչով չէր ցոյց տալիս. սակայն նրա զոյգոջուն խօսակցութիւնը, դէմքի վրդոված արտայայտութիւնը վկայում էին, թէ սրտի խորքերում ինչեր չէր կատարւում։

Քիչ ժամանակից յետոյ փաշան իւրայիններով վերադարձաւ իւր վրանը։ Իսկ մենք դեռ այդպէս մտախոհ նստածէինք մեր վրանում և ահա Բաքիր աղան մօտեցաւ մեզ և ամենայն քաղցրութեամբ ներողութիւն խնդրելուց յետ յայտնեց, որ փաշային առանձին թողնելը անյարմարէ, ուստի և խնդրեց գնալ նրա մօտ։

Չմերժեցինք հիւրասէր տիրոջ խօսքը. այլև մի նոր տեղեկութիւն իմանալու համար գնացինք փաշայի վրանը։ Փաշան մեզ տեսնելուն պէս, ժպիտն առած շրթունքներին՝ ասաց, «Էֆէնդի, ինչպէս երեւում է շատ էք նեղացել. ինչ արած ես ոչինչ չէի կարող անել. այդ մաքսապետը Վալլի անմիջական իշխանութեան ներքոյ է, ապա թէ ոչ՝ ես թոյլ չէի տալ նրան այսպէս վարուելու» և աւելացրեց, որ ես նեղութիւն չկրեմ հեռագրելու Վալլիին, այլ այդ հեռագիրը կ՝ուղարկ է ինքը և ամեն ինչ էլ կ՝կարգադրէ ինքը։ Ես համաձայնեցի։ Վերջումը Նազմբէյին մեզ մօտ եկաւ և ասաց, որ իմ բարկութիւնը շատ տեղին էր և որ այդպէս էլ հարկաւոր էր. Նրանք

արդէն վախեցան, երբ լսեցին որ ես ուզումեմ Գալի-
ին հեռագրել, որովհետև մաքսապետը իրաւունք չ'ու-
նէր նրանց խուզարկելու և մինչև անգամ դրամ ժո-
ղովելու և աւելացրեց նաև այն, որ Կայսեր հրովար-
տակի իմաստը ազդեց նոցա վրա և հենց այդ բոլորի
համար էր, որ առանձնացան և խորհրդակցեցին իրանց
սխալը շուտով հարթելու։

Փաշայի մօտ մի քանի ըոպէ մնալուց յետոյ,
վերադարձայ մեզ համար որոշած վրանը։ Այդտեղ
մեզ հիւրասիրող Բաքիր աղային յայտնեցի որ ես
այլևս մնալու անկարող եմ և ճաշելու էլ ամենևին
հնարաւորութիւն չունիմ ժողովուրդի դրութիւնը ես
երևակայումեմ որովհետև մաքսապետի հասցրած վիրա-
ւորանքը շատ դաւն է, ես դիտեմ, որ նրանք շատ են
վշտացած, ուստի և պէտք չտապեմ նրանց մօտ։

Բաքիր աղան սկսեց անվերջ թախանձել. «Իմ
ճաշը ձեր անուան համար է պատրաստուած, ասաց
նա, ձեր գնալով ինձ անչափ վիրաւորած կ'լինիք,
խնդրումեմ մնացէք»։

— Ես չեմ կարող այն մարդկանց հետ հաց ուտել,
որոնք այսքան վիրաւորանք հասցրին թէ ինձ և թէ
ինձ յանձնուած ժողովրդին, պատասխանեցի ես։

«Գէթ այստեղ, այս վրանի տակ, մի կտոր հաց
կերէք, որ ես իմ խղճի առաջ հանգիստ լինիմ, որով-
հետև այս չարաբաստիկ հիւրասիրութիւնը պատ-
ճառ եղաւ ձեր բացակայութեանը, որից և օգուտ
քաղեց չարանենդ մաքսապէտը» ասաց նա։

Նրա երկար թախանձանքներին զիջանելով, թեթև ճաշ ընդունելուց յետոյ, Ռուբէնին և Յովհաննիսին այնտեղ թողնելով, ես գնացի ժողովրդի մօտ։ Գնալուց առաջ իմ շնորհակալութիւնը յայտնեցի Բաքիր աղային. որի անկեղծութիւնն արդէն տեսայ և որը՝ սաստիկ վիրաւորական խօսքեր էր շանթել մաքսապետի երեսին առարկելով թէ այդպիսով անպատուեց իրան և իւր հիւրասիրութիւնը. սակայն դուրս գնալուց փաշայի հետ չ'տեսնուեցայ և իմ այդ վարմունքս պակաս ազդեցութիւն չէր արել նրա վրայ։

Ժողովուրդին սիրտ տուի մխիթարեցի, ապա ցուցակագրեցի այն բոլորի անունները, որոնցից մաքսապետը լիրաններ էր դուրս կորզել. մանրամասնօրէն ցուցակագրեցի և իւրաքանչիւրի տուած դրամների քանակութիւնը. նոյնից խրախուսեցի, սիրտ տուի և ապա վերադարձայ մեր բնակարանը։

Երեկոյեան մօտաւորապէս ժամը 8-ին, մեզ մօտ եկան Բաքիր աղան և Նազմբէյը և յայտնեցին, որ փաշան խնդրել է մեզ հետևեալ օրը երեկոյեան շնորհ տանել իւր մօտ *շօրբայ* վայելելու—այսինքն ընթրելու։ Եւ մինչև իմ պատասխանն ստանալու, իրանք բարեկամաբար խորհուրդ տուին գնալու, առարկելով որ այդ օրը փաշան սաստիկ վրդովուել է և մինչև անգամ յանդիմանել է Բաքիրին թէ հիւրերի հետ ինչպէս կարելի է այնքան անփոյթ վերաբերուել։ Զիջանելով նոցա, խոստացայ միւս երեկոյեան ընթրիքի գնալ փաշայի մօտ։

Հետեւեալ առաւօտեան մեզ մօտ եկաւ Բաքիրը և յայտնեց, որ հեռագրի պատասխանն ստացուել է և հրամայուած է. «Այս ժողովուրդից ոչինչ չ՝պահանջել, իսկ այսուհետև եկողներին առանց անցագրի, չընդունել։»

Երեկոյեան գնացինք փաշայի մօտ։ Ամենայն յարգանքով ընդունելուց յետոյ մօտ ժամը 8-ին առաջարկեցին մեզ թէյ, որից յետոյ քիչ ժամանակ չ՝անցած՝ բացին ընթրիքի սեղանը։ Սեղանակիցները՝ փաշան էր, Բաքիր աղան, Նազմբէյը, ես և իմ երկու ընկերները։ Ճաճկի սեղանը պահպանել է արևելեան հին ճոխութիւնը.—առաջին սկուտեղում մատուցին ամբողջովին տապակած դառը՝ փոքը լեցուն զանազան համեմներով,՝ապա մի շարք մսեղէն, բընձեղէն, բանջարեղէն կերակուրներ և զանազան տեսակի քաղցր թխուածքներ, մօտ տասնվեց տեսակի կերակուրներ։ Բերրի երկիր, փաշայի հրամանը անսահմանափակ, ինչ կասկած, որ նրա սեղանից այդ բոլորը զրեթէ ամէն օր անպակաս պիտի լինէին։ Նրանք կոնեակ էին խմում, իսկ մենք բերել տուինք մեզ հետ ունեցած գինին։

Փաշան ևս նախապատուեց գինուն, առարկելով թէ ինքը Ռուսաստանում ապրել է ամբողջ ութ ամիս և այնտեղ սովորել է գինու գործածութիւնը։ Այլ և պատմեց, որ այդ դէպքը եղել է Պլեվնայի պատերազմի ժամանակ, երբ ինքը մի քանի փաշաների հետ գերի էր ընկած ռուսների ձեռքը։ Ա՜խ, որքան

մարդասիրաբար էին վարվում նրանք մեզ հետ, ասաց նա. ես զգումէի թէ մեր տանտեմ ապրում և այդ ժամանակ ահա, այդպիսի հանգամանքների շնորհիւ ութ ամիս մնացի Ռուսաստանում—Ռոստով քաղաքում և բաւական չափով ընտելացայ այնտեղի հայերի կեանքին, որոնց մօտ և սովորեցի, ի միջի այլոց և գինու գործածութիւնը։

Ընթրիքի ժամանակ փաշան ցոյց տուաւ մեզ ստացած հեռագիրը, որի բովանդակութիւնը այս էր «այդ ժողովուրդից ոչինչ մի պահանջէք. իսկ յետոյ եկողներին առանց անցագրի մի ընդունէք»։ Ապա փաշան աւելացրեց. «ուրեմն այս գաղթականները առանց նեղութեան կ'գնան Վան. իսկ ինչ մնում է դրանցից առած դրամներին, այն էլ Վալիի կարգադրութեամբ ես կ'ուղարկեմ Վան և այն տեղ կ'հասցնեն իրանց տէրերին»։ Ուրիշ ճար չունէի, լռեցի և ընթրիքը վերջացնելուց յետոյ, շնորհակալութիւնս յայտնելով դուրս գնացի, եկայ բնակարանս պատրաստվելու՝ Վան ճանապարհուելու։ Կառապանին էլ արդէն տեղեկացրի, որ միւս օրը ճամբայ պիտի ընկնենք. այս և այն կարգադրութիւնն էլ արի սակայն հետևեալ օրը Նաղմբէյի մօտ, նախաճաշի ժամանակ Բաքիր աղան յայտնեց որ, իբր թէ ինքը տեղեկութիւն ունի թէ ինձ հազիւ թողնեն ժողովուրդին առաջնորդելու մինչև Վան։

Սիրտս տրոփաց, հազարաւոր մտքեր կայծակի արագութեամբ պաշարեցին ինձ։—Ժողովուրդը թող-

նել անտէր, Վեհափառ Հայրապետի հրամանն անկատար, հայրենակիցներիս յոյսերն ապարդիւն... ոչ, անկարելի է, պէտք է աշխատել, պէտք է գնալ։

Եւ ընկնելով ծանր վարանման մէջ, սաստիկ դիտելով Բաքիր աղային խնդրեցի որ ստուգէ այդ լուրը և շուտով հաղորդէ ինձ։

Նա գնաց փաշայի մօտ և եկաւ. մռայլուած դէմքով յայտնեց, որ ցաւ ի սիրտ լուրը ճիշտ է և հրամայուած է ինձ յետ ուղարկել։ Այլ ևս չ'համբերեցի դուրս եկայ և դիմեցի դէպ փաշայի բնակարանը։

Փաշան նախ կեղծաւորի յատուկ բնաւորութեամբ ասաց. «Մենք որոշեցինք ձեզ այլ ևս նեղութիւն չ'տալ, դուք կարողեք հանգիստ սրտով վերադառնալ ձեր հայրենիքը. իսկ այդ ժողովուրդը բոլորովին անվնաս կ'գնան իրանց ծննդավայրը».

—Բայց ես չեմ կարող այստեղից վերադառնալ, ասացի նրան. ես էլ պաշտօնեայ եմ, ինձ հրամայուած է մինչև Վան գնալ. վերջապէս մենք արտասահմանի անցագիր ունենք, մենք կարողենք առաջ գնալ, ուր և կամենանք։

«Այդ նշանակութիւն չունի, թէ դուք անցագիր ունիք» պատասխանեց փաշան. «ձեր գնալու դժուարութիւնները շատ են. վերջապէս ձեզ դրականապէս ասումեմ, թէ ինձ յայտնուած է, որ ձեր գնալն անկարելի է, դուք պէտք է վերադառնաք։

Փաշան պատճառը չ'յայտնեց, իւր վերջին խօսքը նա այնպէս դրական ձևով արտասանեց, որ ես հաս-

կացայ թէ այլևս զուր կըլինի իմ ջանքը անողոք տաճկին մեղմացնելու· թողեցի նրան և դառնացած սրտով վերադարձայ տուն։—Կարծես փշերի վերայ էի ընկած, անդադար վարանում էի և չէի կարողանում հանգստանալ. ա՜խ, քանի քանի սրտեր պիտի փշրեմ։ Իրար յետևից աչքիս առաջ պատկերանում էին Վեհափառ Հայրիկ, խեղճ դաղթականները. թվում էր թէ նրանք ինձ յանդիմանումեն, ինձ խոցոտում և գոչում. ապիկա՜ր, ինչո՞ւ մեզ միայնակ թողեցիր, ինչո՞ւ բերար մեզ մինչև այստեղ և հանդամանքների շնորհին թողեցիր։ Այս մտատանջութեան մէջնէի և ահա այս երևակայութիւններն իսկոյն իրականացան. յանկարծ աղմուկ, դղրդոց թնդացրին բնակարանիս շուրջը։ Դաղթականներն էին դրանք. իմ խնամքին յանձնուած մի ամբողջ հօտ։ Դուրս եկայ և ահա ամէն կողմից դառնագին բարբանջանք է, որ թափումեն իմ առաջ։

«Ի՞նչ արիր այս», գոռում էին նրանք. «ինչո՞ւ բերիր մեզ և թափեցիր այստեղ. այժմ ինքդ կամենումես հեռանալ. ինչո՞ւ մեր անբաղդ մանուկները թրի ու կրակի յանձնեցիր»։

Կամենում էի խօսել, բայց լեզուս կարկամում էր. արտասուել, վրդովուած սիրտս էլ արտասուք չէր քամում. ա՜խ, ինչ դերեմ խաղում ես. ունեմ փոխարինում. ո՞ր անբաղդ հովուի, ո՞ր ժողովրդակորոյս կառավարչի, ինքս էլ չգիտէի, լուռ էի և այն խոցոտիչ ու վիրաւորիչ յանդիմանութիւնները դեռ լուռ

լուռ լսում էի, կարծես արժանի էի այդ բոլորին։ Վերջապէս արտասունքս կաթեցնելով, դարձայ ու ասացի։

—Մայրեր, քոյրեր, հայրեր և եղբայրներ, մի հայհոյէք ինձ և մի տրանջաք ինձ դէմ, ձեզ հետ պատրաստ էի ոչ մինչև Վան, այլ մինչև Զէյթուն ևս գնալ, բայց ինչ անեմ. ինչ միջոցի դիմեմ, քանի որ արգելում են, քանի որ ես անզօր եմ, միջոց, հնար չունիմ, թոյլ չեն տալիս, ասացէք այժմ. ինչ անեմ, վարուեցէք ինձ հետ ինչպէս կամենումէք, բայց նախ լաւ իմացէք, տեսէք արժանի եմ այդ բոլորին։ Չէ՞ որ ես կառքը վարձելեմ մինչև Վան, չէ՞ որ ձեր սիրոյ համար ես թողելեմ հազար տեսակ մտքերի մէջ մի բուռն զաւակներ, որոնք այս իսկ բոպէին՝ ո՛ գիտէ, թէ ինչերը են մտածում իմ մասին, չէ՞ որ նրանց թողած ձեզ եմ հետևել, ձեր ետևից եկել. ինչ անեմ որ անսիրտ ուժեղը ինձ արգելում է մխիթարել ձեզ և մխիթարուիլ ձեզանով. վերջապէս զուք էլ պէտք է աշխոյժ, աչքաբաց լինէք. Փաշան իւր կողմից խոստացաւ հարիւրի չափ զինուորներ նշանակել ձեզ համար, իբրև պահապաններ. ես այդ զինուորներին վարձ կ'տամ, որ ձեզ լաւ հոկեն։

Նրանք հանդարտուեցին։ Ապա աւելացրի, որ Փաշայից երաշխաւորութեան թուղթ պիտի առնեմ որպէս զի ճանապարհներին ոչոք իրաւունք չ'ունենայ նեղացնել։

Եւ իսկապէս այդ երաշխաւորութիւնը Փաշան

խոստացաւ, այլ և որոշեց 70 զինուոր պահապան նշանակել.—50 հետեակ զինուորներից, իսկ քսանը հեծեալ ժանդարմերեայից։ Նրանց համար էլ իբրև ուտելեաց վճար՝ ես խոստացի տալ 100 ռուբլի։

Իսկ դորանից առաջ ես Բաքիր աղայի միջոցաւ առաջարկեցի փաշային, 250 ռուբլի. որպէս զի այդ վարձով իբրև պահապան նշանակուի Նազրմբէյը իւր ստորադրեալ քառասուն զինուորներով, մանաւանդ որ ինձ ասացին թէ, ճանապարհներին կարող են քրդեր յարձակուիլ։

Բաքիր աղան լուր բերաւ, որ Փաշան նախ այդ առաջարկութեանը համաձայն չէ, և երկրորդ զուր եմ կարծում թէ՝ քիւրդերը կարող են յարձակուիլ, նրանք ոչինչ չեն անիլ, այդ կողմից ես կարող եմ ապահով լինել։

Փաշային կարելի էր հաւատալ, որովհետև որքան տեղակացայ, քիւրդերը գլխաւորապէս յարձակւում են տեղական իշխանաւորների գիտութեամբ, հետևաբար կարելի էր յոյս ունենալ, որ Փաշան դէթ այս անգամ արգելք կըլինի քրդերի յարձակումներին։ Եւ վերջապէս Փաշան չէր կամենալ, որ Նազմբէյն առաջնորդէ, այն էլ իւր զինուորներով։ Ինչևիցէ յարդեցինք Փաշայի արած կարգադրութիւններին. ապա դիմեցինք քարվան վարձելուն։ Այս դէպքում մեզ ձանձրացնում էր Փաշայի կողմից մեզ համար նշանակուած օղնական—Փոլիսը (ոստիկանը), որ իւրաքանչիւր քայլում իւր մանրակրկիտ հարցերով ձան-

ձրոյթէր բերում մեզ։ —Ի՞նչքան եզը պիտի վարձուի, ինչքան գոմէշ, ինչքան ձի և այլն։

Այս ձանձրութիւնից մեզ ազատեց մի պատուական հայ—Գասպար Էֆէնդին, որ կեանքի բոլոր անցած առևտրական ասպարիզում տարիներ անցկացրած մի փորձած մարդէր. նա առևտրական յարաբերութիւն ունէր և Բաղում, ալ.ալ. Եղբարց Նարաթեանների հետ։ Մի խօսքով այս մարդու հանդիպումը առանձին յաջողութիւն էր. որովհետև նա կարդադրեց ամէն ինչ ցոյց տուաւ քարաւաններ վարձելու բոլոր ճանապարհները, այլ և նրա միջնորդութեամբ Զանդեղոր կոչուած գիւղի բնակիչներից վարձեցինք 100 հատ եզը, 50 ձի և իւրաքանչիւրը 3 ռուբլի վարձատրութեամբ։ Սակայն մի նոր պատուհաս ևս ձգեց մեզ նեղութիւնների մէջ։

Վարձուած դրաստների տէրերը առաւօտեան կազմ ու պատրաստ եկան մեզ մօտ, ապրանքները կշռելու, կապոտելու, որպէս զի վաղօրօք պատրաստ լինին միւս օրը ճանապարհելու։ Յանկարծ այդ մի. ջոցին երևան եկաւ մեր անզգամ Փոլիսը մի երկու այլ անձանց հետ և յայտնեց, որ Փաշան հրամայել է այս մարդկանց յանձնել քարաւանները և ոչ գիւղացիներին։ Անշուշտ Փաշան այստեղ մի շահավէտ ասուտ ունի, մտածեցի ես, բայց իրաւ ասած, նորեկների անճոռնի դէմքերն իսկ, ծանր տպաւորութիւն թողեցին ինձ վերայ։ Այսուամենայնիւ նրանք առաջարկեցին ինձ իւրաքանչիւր դրաստի համար յիսուն

կոպէկ պակաս առնել, այնպէս որ համեմատաբար գիւղացիների պայմաններից, սոցա հարիւր քսան և վեց ռուբլի պակաս պիտի տայի։ Մի կողմից մտածեցի Փաշային չ՝վիրաւորել, միւս կողմից 126 ռուբլի կարող էի բաժանել ժողովրդին, որ 'ի հարկէ փոքր օգնութիւն չէր. ուստի և համաձայնուեցինք վերջիններիս հետ և սկսեցի կշռել գաղթականների իրերը։ Ընդամէնը 500 պուդ, որ գլխաւորապէս բաղկացած էին երկաթի կտորներից, ցնցոտիներից, վայտէ արկղիկներից, մի խօսքով իրեր, որոնք ոչ մի արժէք չունին, սակայն որոնցից երբէք չէին կամենում բաժանուիլ։ Այսպէս և իրերը կապոտած պատրաստէին։ Եւ ես այդ կողմից փոքրինչ ապահով, պատրաստվում էի հետևեալ օրը նրանց ճանապարհ ձգել, մի կողմից էլ գոհ լինելով Փաշայից, որ մեզ համար էժան դրաստներ է ուղարկել։ Սակայն ցաւ ի սիրտ այս դէպքում ևս ես սաստիկ խաբուած էի, որ տաճկական երկրում կարծեմ շատ էլ զարմանալի չէ։

Դրաստատէրերից մէկը, մի «քօռ» անզգամ, սաստիկ նեղութիւններ պատճառեց մեզ իւր խաբեբայութիւններով։—Փիլիսոփաներից մէկը գեղեցիկ սրախօսութիւն է արել, թէ այն մարդիկ, որոնք զուրկ են մարմնոյ որև է անդամից, նրանց սրտում պակասում է և զգացմունքների մի մասը։ Այդ քօռ տաճիկն էլ նոյնն էր։ Այսպէս՝ մենք վարձել էինք 150 դրաստ և նա անխղճաբար խաբելով բերել էր 100 դրաստ։ Մենք պայմանաւորուել էինք եղներին 8

փութ բեռը բարձել և որոշել էինք որ, ծերերը, հիւանդները, թոյլերն ու երեխաները պիտի նստեն գրաստների վերայ, իսկ երիտասարդները կ՝գնան յետիոտս, բայց սոյն մեր պայմաններից և ոչ մէկը չ՝կամեցաւ կատարել խաբերայ աղուէս տաճիկը։

Հետևեալ առաւօտը շատ վաղ վեր կացայ և գնացի ժողովուրդի մօտ։ Բնակարանիցս մինչև այնտեղ ընկած երկար ճանապարհը ինձ չափազանց կարճ թուեցաւ, որովհետև խորասուզված էի հաղարաւոր մտքերի մէջ։ Քարւանի տէրերը իրանց քօռ ընկերի հետ գրաստները բերին և սկսեցին բեռները բարձել։ Ես վաղօրօք պատուիրել էի, որ նախ՝ բոլոր բեռները բարձուին, գրաստներով գնացողները տեղաւորուին, ապա այսպէս կազմ ու պատրաստ ժամանակ բոլորին հարեմ, ճշտեմ և յետոյ ճանապարհուին. բայց ինչպէս յիշեցի այս դէպքում խիստ անիրաւաբար վարուեցին մեզ հետ։

Այն միջոցին, երբ ես զբաղուած էի մէկի ու միւսի խնդիրը, գանգատը, պահանջը լսելու, գրաստատէր տաճիկները բեռնաւորում են անասուններին և ճանապարհ ձգում։ Այդ բանը նկատումէ Յովհաննէսը և իսկոյն ինձ յայտնում։ Սմբատին շուտով ուղարկեցի որ առաջ գնացողներին, յետ դարձնէ. իսկ այն աստիճանաւորին որ պէտք է սրանց հետ գնար, ասացի որ թոյլ չտայ և ոչ մէկին առաջ ընկնելու։ Իսկ քարւանբաշիները (քարւանի տէրերը) այդ ձևով կամեցան իրանց խորամանկութիւնն առաջ տանել։ Նը-

նրաց այդ դէպքում գլխաւոր աջակիցն էլ, ինձ համար օգնական նշանակուած փոլիսն էր, որի անունը Աւդլա էր։

Տեսայ որ բեռների մեծ մասը դեռ մնում էին թափուած հարցնում եմ, ուր են ձեր անասունները։ Պատասխանում են թէ նրանք բոլորն արդէն բարձուած են, և առաջեն ձգել։

—Հապա այսքան հիւանդները, մանուկները, պառաւները ինչպէս պիտի գնան, հարցնում եմ ես։

«Այդ մեր պարտքը չէ», պատասխանում են նրանք, «թող ոտով գնան»։

Սակայն նրանց խարեբայութիւնն արդէն բացուել էր։ Մեր պայմանով իւրաքանչիւր եզան վրայ պիտի 8 պուդ բեռը բարձուէր, իսկ աւանակի վրայ 6 պուդ, բայց նրանք խարել էին և իւրաքանչիւրի վերայ բարձել էին միմիայն 3 փութ. այլ և 150 դրաստի փոխարէն բերելէին ընդամէնը 100 դրաստ։ Այդ իսկ պատճառով նրանք կամենում էին բարձուածները շուտով առաջ ձգել, որպէս զի խարեբայութիւնը մենք չնկատենք։ Իսկ եթէ մնացեալ բեռները բարձելու համար 50 դրաստ ևս պահանջէինք, դրանց համար էլ ուրեմն առանձին վարձ պիտի տայինք։

Այդպէսի անիրաւութիւնից սաստիկ վրդովուած կանչեցի «քոռ» քարաւանբաշուն և ասացի. բեր այս ըոպէին խոստացած քարտանդ։

Նա մի արհամարհական հայեացքով նայեց ինձ

ու պատասխանեց. «գլուխս մի ցաւեցնել, բաւական է, որքան բերել եմ»։

Նորա պատասխանը փառաւոր ապտակն էր. ապտակ, որի նմանը դուցէ նա կեանքումը երբէք չէր տեսել։

Նապմբէյը, այդ միջոցին որ փոքր ինչ հեռու, իւր ոսկեթոյը նժոյգի վերայ նստած դիտում էր այս բոլորը, իմ բարկութիւնը տեսնելով. մօտ եկաւ, առաւ մտրակը և մօտեցաւ «քոռին» «այս ինչ դալմադալ է, ինչ անիրաւութիւն է, որ դու անում ես». այս ասելով մտրակի հարուածները հասցրեց նրա գլխին, երեսին ուսերին և աւհասարակ ինչպէս հասնում էր. ապա դառաւ փօլիս Աւդլլային. «Դո՜ւ անիրաւ» գոռաց նա. «ինչ ես չնիկի պէս մէջ տեղ ընկել, պոչ խաղացնում. լէրը, անզգամ, այս բոպէիս փոշի կ'դարձնեմ քեզ»։ Այս ասելով մտրակը շարժեց. բայց աղուէս Աւդլլան տրդէն այդ նախազգալով, յետ էր քաշուել։ Իսկ Մահմէդ Էֆենդին, որ գաղթականների ուղեկցող զինուորների գլխաւորն էր, և ըստ արտաքինին բարեբարոյ անձնաւորութիւն, իսկոյն հրամայեց բարձած կրաստները յետ դարձնել, ամէնքի բեռները վերցնել և ապա բոլորին արձակել։ Այսպէս էլ եղաւ։ Եւ երկու օր քարւանի պատճառով ուշացանք։ Ցաճիկ պոլիցիականի անիրաւութեան շնորհիւ ժողովուրդի տրտունջներից ու հազար մի բարբանջանքներից չէի ազատւում. այդ երկու օրնէլ ցերեկները բնակարանս չ'գնացի, այլ դրեթէ կիսաքաղցած, ծարաւ, սաստիկ

վարանման մէջ անցկացրի գաղթականների մօտ։ Վերջապէս որոշեցի դիմել փաշային։ Երեկոյեան գնացի նորա մօտ։ Բաքիր աղան և Նաղմբէյրն էլ այդտեղ էին։ Իսկ Մահմադը արդէն ամէն ինչ պատմել էր փաշային։ Ես ասացի «Փաշա՛, եթէ մի օր էլ աւելի մնաց ժողովուրդը, իմացէք, որ Բայազէդը սով կնկնի. որովհտև նրանց հացը սպառուելու վրայ է. այլ և խնդրեցի իրաւունք տալ այդ երկու պարոններին, աջակցելու ինձ քարվաններ վարձելում և գաղթականներին հանդիստ ճանապարհ ձգելում։ Նա համաձայնուեց և մենք միասին վերադարձանք բնակարանս այդ մասին խորհելու։

Վերադառնալուն պէս կանչեցին այդ անզգամ փոլիսին և խստիւ հրամայեցին՝ որ այլ ևս չ՛խառնուի ոչ մի բանի մէջ և նոյն ըոպէին շտապէ բոլոր քարւանբաշիներին մեզ մօտ կանչելու։ Քարւանբաշիները եկան և պայմանաւորուեցինք, որ 170 եղներ ու աւանակներ բերեն 500 ռուբլի վարձատրութեամբ։ Հետևեալ օրը բոլոր իրերը կշռեցինք, որոշեցինք ամբողջ քանակութիւնը. համեմատեցինք դրաստների թուի հետ և ճշտելով, որ այլ ևս նեղութիւն չի կարող լինել, գաղթականներին էլ միամտացնելով և հանգստացնելով, ճանապարհուիլը թողեցինք միւս օր առաւօտեան։

Բայց որպէս զի այդօրն էլ սպարդիւն չ՛անցնի, Բաքիր աղայի միջոցով փաշայից իրաւունք առանք և գնացինք Բայազէդի բերդը տեսնելու։

Անառիկ բերդի պատերի վերայ դեռ նկատվում էր թնդանօթի հասցրած հարուածները, բայց գեղեցիկ քանդակները տակաւին վկայում էին հինաւուրց գեղարուեստի նրբութիւնը։ Բերդը մտնելով, առաջ՝ գնացինք բանդապետի մօտ, որ մեզ ընդունեց սիրով և հրաւիրեց իւր սենեակը սուրճ խմելու։ Այդ հրաւէրն ընդունելուց և փոքր ինչ հանգիստ առնելուց յետոյ Բաքիր աղայի և բանդապետի օգնականի հետ դուրս եկանք այս և այն կողմերը շրջելու։ Դեռ սկզբում հանդիպեցինք բերդապահ զինուորներին, որոնց թիւը հասնում է 200-ի։ Ամէնքն էլ առոյգ, զուարթերես մարդիկ էին. թէպէտ և նիստ ու կացի պայմանները շատ անգոյն էին։ Այսպէս զօրանոցում նրանք ապրում էին դետնին փռուած փրսիաթների վերայ կեղտոտութիւնը հօ աննկարագրելի է, սակայն ուտելիքի կողմից մենք ինչ որ տեսանք, հակառակ էր մեր լսածներին։ Գուց է այդ օրը բացառութիւն էր, որովհետև խոհանոցն այցելելով, մենք տեսանք, որ նրանց համար եփում են լաւ միս և մինչև անգամ փլաւ։ Այդտեղից անցանք, մտանք մզկիթը, բարձրացած մինարէթի գլուխը։ Այդ բարձրութիւնից մարդուս սարսափ է պատում նեղքև նայելիս. աստիճաններից իջնելիս համարեցի մօտ 100 աստիճան, իւրաքանչիւրը $^3/_4$ արշին բարձրութեամբ։ Մինարէթից իջանք, անցանք մզկիթի գլուխը, որտեղից ամբողջ Բայազէդը երևում էր բոլոր տներով, որոնք այնքան սղմուած էին իրար, որ բոլորի կտուրները կարծէս

միացած մի ընդարձակ տարածութիւն էր կազմում։ Եւ առհասարակ Բայազէդը մի չնչին գիւղի տպաւորութիւն է թողնում։ Հեռւում երևում է Արակածի մի մասը, որտեղից և մշտապէս փչում էին կենարար զեփիւռները։ Առհասարակ Բայազէդի օդը, ջուրը, եղանակները հրաշալի են։ Քաղաքն էլ իրրև բերդ ունի ընութիւնից տուած մեծ յարմարութիւններ։ Ռուսական պատերազմից առաջ քաղաքի բնակիչների թիւը հասնում էր 6,000-ի. իսկ այժմ ընդամէնը 600 խարխուլ տուն է մնացել. կէս հայ և կէս թուրք բնակիչներով։ Քաղաքի պաշտօնեաները բացառապէս թուրքեր են։

Ներկայումս օտարազգիների մանաւանդ հայերի վերայ նայում են խէթ աչքով։ Տեղական հայերի դէպի մեզ ունեցած սառնութիւնն էլ վերջը իմացանք՝ որ երկիւղից է այդպէս. որովհետև խիստ աչքով են նայում այն հայի վերայ, որը մի առանձին սէր ցոյց կ'տայ իւրայիններին ևս առաւել օտարականներին։ Վերոյիշեալ Գասպար Էֆէնդին, որ սկզբում մեզ օգնում էր քարաւաններ վարձելու, այլևս չերևաց։ Եւ իւր Նազմբէյի տանը, նրան պատահելով, յայտնեցինք մեր նկատողութիւնը. նա ասաց որ նախ՝ իրան կանչեցին և արգելեցին մեզ՝ մօտենալ. երկրորդ՝ որ ինքը ոստիկանական հսկողութեան տակ է, որ դժուարէ իրան աջակցել մեզ։ Իսկ այդ հսկողութեան ենթարկուել է ինչ որ դարտակ ազգասիրութեան համար։

Այդ օրը ճաշի ժամանակ մեզ հետ ի միասին

Նազմբէյի մօտ հրաւիրուած էր նաև Դասպար Էֆէնդին։ Այդ տղնիւ սպան, Նազմբէյը, որ սկզբից այնքան սերտ սիրով տրամադրուած էր դէպ մեզ. այդ օրն էլ փառաւոր պատրաստութիւն էր տեսել։ Խմելիքներ ունէր կոնեակ և մաստիքայ ասուած օղին։ Թէ Նազմբէյը և թէ բարիր ազան սկսեցին քաղցրալիր խօսակցութիւնների խիտ և կենացներ առաջարկել. համառօտ ճառեր խօսել և կրկին ու կրկին իրանց աւ մեզ և առ բոլոր հայերն ունեցած անկեղծ սէրն ու համակրութիւնը յայտնել։ Առ որ ես բաժակ առնելով դարձայ նախ՝ Նազմբէյը հետևեալ խօսքերով։ «Բէյ դուք վերին աստիճանի մարդասիրաբար վերաբերուեցիք թէ դէպի ինձ և թէ դէպ՝ ինձ յանձնուած հօտի հետ. ձեր վարմունքի իւրաքանչիւր քայլը վկայում է ձեր սրտի ազնուութիւնը. ձեր բոլոր շարժմունքը ի հարկ է արդիւնքի այն կրթութեան, այն դաստիարակութեան որ դուք ստացել էք ձեր ընտանիքում։ Օրհնուի այն ընտանիքը, որ ձեզ պէս անդամ ունի. Օրհնուին այն ծնողները՝ որ ձեզ պէս սերունդն պատրաստում. Դուք, յարգոյ Նազմբէյ, պէտք է իմանաք, թէ ինձ, թէ ուղեկիցներիս և թէ բոլոր գաղթականների համար միշտ անմոռանալի պիտի մնաք։ Հաւատացէք, որ ձեր արածը երբէք չի կորչիլ. բարի սերմը մացառների մէջ կանաչ ոստերով է աճում։ Դուք հարիւրապատիկ էք, կ՝աղօթեմ Աստծուն, որ շուտով հազարապատիկ դառնաք, ապա զօրաւոր և աւելի բարձր աստիճանաւոր. կ՝ինդրեմ որ այսուհետև

ես չ'մոռանաք հայ ժողովուրդին. նրանք ձեր հարազատներնեն. նրանք էլ նայում են նոյն երկնքին՝ որին նայում են բոլոր ազգերը. մեր կրօնը մեզ հրամայում է բոլոր մարդկանց հաւասար աչքով նայել. բոլորին էլ սիրել հարազատ եղբօր նման. եթէ չեմ սխալվում Ղուրանի իսկական դաւանանքն էլ այդ է. միայն անբաղդաբար ձեր հոգևորականներից շատերը սխալ են քարոզում այդ միտքը։ Ես մեծ յոյս ունիմ, որ դուք ձեր ազնիւ բնաւորութեամբ եղբայրաբար կվերաբերուիք ամենքի հետ, ինչպէս վերաբերուել էք մինչև այժմ. անչափ շնորհակալեմ ձեզանից»։

Իմ խօսքերը մանրամասն թարգմանեց Գասպար Էֆենդին. առ որ Նազմբէյը պատասխանեց. «ընդհակառակն ես չ'կարողացայ իմ սրտի ուզածի պէս օգնել այդ անբաղդ գաղթականներին, այլ և չկարողացայ Քէշիշ Էֆէնդիին յարգել իրան արժանի ձևով. իմ արածները կատարեալ ոչինչեն, շատ շնորհակալ եմ ձեր մաղթանքների համար։ Միշտ իմացէք, որ ինձ համար հայերը սիրելի են հարազատների և այն էլ անկեղծ հարազատների նման»։

Ապա առաջարկեցի Բաքիր ագայի կենացը, առ որին դարձայ հետևեալ խօսքերով. «Բաքիր ագա, դուք մեր երկրացի էք և ես ձեզանով շատ ուրախ եղայ. մանաւանդ ուրախացայ՝ տեսնելով ձեր դէրը և այն խորին մտերմութիւնը, որ ունիք դուք Փաշայի հետ. դուք շատ լաւ էք հասկացել և ըմբռնել. տալ զկայսերն կայսեր զԱստուծոյն Աստուծոյ։ Ձեզ ինչ-

պէս ճանաչեցի, ինձ այժմ թուում է թէ՝ եթէ Համիդէի ամբողջ զօրաբանակը ձեզ յանձնեն, այնուհետև այս երկրում խսպառ կ'վերջանայ խղճութիւնը, խաբդախութիւնը և արդարութիւնը կատարելապէս կ'վերականգնի, շատ շնորհակալեմ ձեզանից, երբէք չեմ մոռանալ ձեզ։

Կենացները տեղի տուին զանազան խօսակցութիւնների և իսկոյն անցանք դէպի գաղթականները, որ մաղթեցինք նրանց բարի ճանապարհ և երկար առողջութիւն։ Ապա խօսեցինք քարվանների մասին, որ հետևեալ օրը պիտի օրինաւոր կերպով բարձուին և այս երկու պարոնների աջակցութեամբ հեշտութեամբ ճանապարհուին դէպի իրանց ծննդավայրերը —դէպի Վան։

Հետևեալ առաւօտեան, հինգշաբթի Յունիսի 11-ին շատ վաղ շտապեցի ժողովուրդի մօտ։ Ժամը 6-ից քարաւանները բարձեցին և ուղիղ ժամը 7-ին ամէնքին ժողովեցի շուրջս հրաժեշտի ողջոյնս տալու։ Գնացէք—ասացի նրանց. Գգուեցէք ձեր քաղցրալիր վաթանը և վերջ դրէք աստանդական լինելուն. ամէնքդ էլ մի տուն, մի ընտանիք դարձէք. ամէնքդ էլ սերտ սիրով կապուեցէք, հարազատ քոյր ու եղբայր եղէք և միշտ օգնեցէք իրար. տեսաք ինչպիսի սիրով Բաղեայ հայերը ձեզ պահպանեցին և ինչպէս ճանապարհ ձգեցին, չմոռանաք Բաղուեցիներին. . . .»։

Խօսքս չ'վերջացրած ամէնքն էլ միաբերան օգը դղրդացրին«կեցցէ» բաղուն, կեցցեն բաղուայ հայերը։

Ապա «ՏԷՐ ուղղեան» ասացի, վերջը պատպանի-չով օրհնեցի նրանց. իսկ երբ կամեցայ ասել «մնաք բարև» այլ ես անկարող եղայ արտասուքս զսպել, շատերը նոյնպէս արտասուեցին։ Նորից օրհնեցի և յիշեցի Փրկչի խօսքերը «ես ինչպէս ձեզ արարի, նոյն պէս և դուք առնիջիք միմեանց». ապա խնդրեցի որ ամենքն էլ իրանց բեռներին ուշ դաշձնեն, ան-տէր չ'թողնեն։

Այդ բոլորից յետոյ սկսեցին մնացեալ զրաստ-ները բեռնել և տկարներին նրանց վրայ տեղաւորել։ Այստեղ այդ ժամանակ բարձրացաւ սարսափելի խառնաշփոթութիւն. աղմուկ, ճիչ, աղաղակ, գոռում գոչում՝ զրզրգում էր ամեն կողմ։ Ամէն մէկը շտա-պում էր իւր իրերը պնդացնել, մինչև անգամ առողջ-ներից շատերը սուտ հիւանդ էին ձևանում՝ անասուն-ներից մէկը հեծնելու։ Նեռումէի այս և այն կողմը, նեռում էին և ընկերներս սակայն չէինք կարողա-նում հանդստացնել։ Մէկը գոռումէ «ինչի կիրակոսի կինը կըյդիանայ*) և ես կը հեծնի, իմ կինը չի յդի-անալ և ես չի հեծնիլ»։—Ինչի Արթինը սուտ հիւանդ կ'ձևանայ, գոռում է մի ուրիշը և աւանակ կ'նստ է ու ես ոտով կ'գնամ։ Եւ իսկապէս շատերը խաբում էին, բայց 800 մարդու հետ ինչպէս վարուիս, ինչ-պէս կարգադրես, այնուամենայնիւ տարաձայնութիւն պէտք է անպատճառ լինէր և ահա ես իմ ընկերնե-

*) Իսկապէս ցոյց տուին Կիրակոսի կնոջը, որ շորերով բարձրացրել էր փորը՝ թէ յդի է հարևան կինը համարձակուեց մեր ներկայութեամբ բար-կութեամբ մօտենալ և նրա շորերը բարձրացնելով հանել թագցրած շորերը։

բիս օգնութեամբ մի կերպ հանգստացրի. մի հարիւր ռուբլի էլ տուի մի քանի առաջաւորներին, որ առաջիկայ դիւղերից մէկում, եթէ իսկապէս հարկ լինի անասուն վարձելու, այդ դումարով վարձեն, ապա ճանապարհ ընկնել Այդ իսկ բոպէին էլ մի քանիսը բռնեցին իմ փեշերից և մի քանի ռուբլի էլ առնելով հեռացան։

Քարւանը ճանապարհ ընկաւ. ես ընդդիմամբ հայեացքս առի երկնքին, բարի ժանապարհ մաղթեցի և սրտագին օրհնելով երիցս տեառնազրեցի ու երբ քարւանն հեռացաւ և այլևս չ'երևայ, վերադարձայ քաղաք և ուղղակի գնացի Փաշայի մօտ, շնորհակալութիւնս յայտնեցի և սիրալիր «գնաք բարեներն» առնելով դուրս եկայ։ Սրտաշարժ մնաս բարեւներով բաժանուեցինք Նագմբէյից և Բաքիր աղայից։ Ամէնքիս էլ միատեսակ թւում էր թէ տարիներից 'ի վեր կապուած բարեկամներից էինք բաժանւում։ Ապա ընակարանիս տէր այրի կնոջն էլ փառաւոր վարձատրելուց յետոյ, բազմեցինք կառքը և ճանապարհ ընկանք դէպի Իգդիր։ Ղարաբուլաղում մեր գրաւն ստանալով, ճանապարհը շարունակեցինք և Զինգիլլիի սահմանագլխում ժամը 4-ին մեր ծանօթ երկու պարոնների մօտ նախաճաշ վայելելով, ճանապարհ ընկանք և գիշերւայ ժամը 11-ին հասանք Իգդիր։

Առաւօտեան որոշեցի գնալ պ. Գաւառապետի մօտ. նախ՝ շնորհակալութիւնս յայտնելու և ապա խնդրելու՝ որ կարգադրէ գաղթականներին առ ժամանակ չշտապեցնելու. որովհետև տաճկաց կառաւարութիւնը ընդդէմ էր առանց անցագրի այլ ևս ոչ մի գաղթականի չնդունել և ընդամին յայտնելու նաև այն, որ սոյն կարգադրութիւնը մնայ, մինչև որ Վեհափառ Հայրապետը այդ մասին կ'բանակցի թէ՝ նախարարութեան և թէ Կովկասու կառաւարչապետի հետ։ Բայց Գաւառապետը Իզմիրում չէր, պաշտօնական գործով գնացել էր ապահանք —Կողբ գիւղը։ Եւ որովհետև ցանկութիւնս էր անպատճառ տեսնել գաւառապետին, ուստի որոշեցի գնալ Կողբ։ Ցաւ ի սիրտ գաւառապետը Կողբումն էլ չէր։ Եւ որպէս զի մեր նեղութիւնը բոլորովին ապարդիւն անցած չլինէր, վճռեցինք հանգամանքից օգտուել և Կողբ գիւղը իւր հռչակաւոր աղահանքով լաւ աչքի անցնել։ Այս Կողբը իմ նախահայրերի հայրենիքն ևս է։ Մեր Ղազախսու գաւառի մէջ գտնուող Կողբը, սորա անունով է հիմնուած։ Նորա ժողովուրդի նախնիքը 300 տարի առաջ այստեղից են գաղթել և Ղազախին մօտ նոր գիւղ հիմնելով, Կողբ անուններն տուել նորան։ Ներկայումս սոյն երկու (գիւղացիք) կողբացւոյ բառբառները միատեսակ են։ Եւ Ղազախի կողբացիք իրանց բառբառով միշտ տարբերումեն, իրանց շրջապատող գիւղերի բնակիչներից։

Յովհաննիսի և Սմբատի հետ որոշեցինք իջնել

տեղական քահանաներից՝ մէկի տանը։ Կառապանը կառքը քշեց դէպի մի քահանայի տուն. բայց քահանային տանը չ՝գտնելով, լաւ համարեցինք կառքը առ ժամանակ թողնել եկեղեցւոյ մօտ և ոտով գնալ դէպի աղահանքերը։

Եկեղեցւոյ մօտով անցնելիս՝ մի երեխայ մօտեցաւ մեզ ու հարցրեց. «ունէք ուզում, Տէր հայր. մեր տէրտէրին, ահա այսէ նրա տունը». այս ասելով երեխան ցոյց տուաւ մի տուն, որի դուռը բաղխեցին, դուրս եկաւ մի փոքրիկ աղջիկ և մեր հարցին քաղաքաւարութեամբ պատասխանելով յայտնեց թէ, տէրտէրը տանն է և իսկոյն կ՝կանչ է նրան։ Նա գնաց և բոպէ չ՝անցած դուրս եկաւ քահանայի հետ։

Քահանան մեզ ներս հրաւիրեց։ Մենք յատնելով մեր անունը՝ նրան և նա-Հայր Եղնիկը նորից սեղմեց իմ ձեռը, ուրախութեամբ յայտնելով և առարկելով, որ ինձ դեռ չ՝տեսած էլ լաւ է ճանաչում։ Նա իսկոյն պատմեց իւր հօրեղբայը հայր Տէր-Յովսէփի մասին, որը յայտնի քահանայ էր այդ կողմերում. վիճակի գործակալն էր և որի հետ դեռ 16 տարի առաջ Ղազախում իմ տանը բարեկամանալով, երկար ժամանակ նամակագրութիւն ունէինք, Իսկ այժմ նա վաղճանուել է, որպիսի կորուստը այժմ սաստիկ զգալի է Կողբայ վիճակի համար։ Հայր Եղնիկը մեզ լաւ հիւրասիրելուց յետոյ, պատրաստականութիւն յայտնեց առաջնորդելու մեզ դէպի աղահանքերը և մեծանուն, երջանկայիշատակ Եղնիկ Կող-

բացու գերեզմանը։ Սոյն մատենագրի գերեզմանը տեսնելով, արտասուքից և զայրութից ճնշուեցի։ Մի անշուք դամբարան, ընկած կեղտոտութիւնների մէջ տեղ, որի հետքը, գուցէ դժուարին չէ գուշակել, որ մի օր պիտի անհետանայ, եթէ այդպիսի անխնամ դրութեան մէջ մնայ։

Սրտագին համբոյրս դրոշմելով սուրբ գերեզմանի սառած քարերին, տխրութիւնս սրտիս խորքում ճնշելով, ուղեկիցներիս հետ անցանք Կողբ գիւղը, որի բնակիչների կեանքը Հայը Եղնիկը շատ տխուր գոյնով էր նկարագրում։ Ծոյլեն, ասում էր նա, պղերգ, տղամարդիք օրուայ մեծ մասը գինետներումն են անցկացնում և հէնց այդ է պատճառը՝ որ գիւղում ընդհանուր աղքատութիւն է տիրում։ Տեսանք նաև աղահանքերը և իսկապէս մարդ պէտք է անձամբ այցելէ և տեսնի թէ ինչ մեծ քանակութեամբ աղ կայ։

Մի քանի տեղեկութիւններ ևս առնելուց յետոյ Հայը Տէր-Եղնիկին մեր շնորհակալիքը յայտնելով, վերադարձանք Իգդիր և իջևանեցինք մեր վաղածանօթ Սուրէնի տանը։ Այդ օրը պիտի մկրտէին Սուրենի նորածին եղբօրը, և ես նրա լաւութիւնների փոխարէնը հատուցանելու համար, խնդրեցի որ թոյլ տան ինձ կնքահայր լինելու։ Առաջարկութիւնս սիրով ընդունեցին և մկրտութիւնը տեղական քահանաների ձեռամբ կատարելուց յետոյ անունը դրինք Աբգար, ճաշեցինք, ապա շնորհակալիք յայտնելով պ. Սուրէնին, իւր հայը Կարապետին և բոլոր Իգդիրցւոց, ուղևորուեցինք դէպի Ս. Էջմիածին։

Ս. Էջմիածին հասնելուն պէս նախ՝ շտապեցի համբուրել Սրբազնագոյն Հայրիկի ս. աջը և զեկուցանել ճանապարհորդութեանս բոլոր մանրամասնութիւնները։ Այս անգամ էլ Վեհափառ Հայրապետն ինձ ընդունեց նորակառոյց թանգարանում։ Այդտեղ յանձնեցի Նորին Սուրբ Օծութեանը՝ այն գրութիւնը, որ տուել էր ինձ Բայազետի Փաշան – Վեհին հասցնելու։ Այդ գրութեամբ Փաշան յայտնել էր թէ 800 գաղթական ողջ և առողջ հասել են Բայազետ։ Ապա որ ինքը կարգադրեց մեզ վերադառնալ Ռուսիա և որ այսուհետև այլ ևս ոչ մի գաղթականի թոյլ չի տրուիլ Ցաճկաստան անցնել, եթէ չ՝ունենայ օրինաւոր անցագիր։ Վեհափառը շատ ցաւեց ինձ վերադարձնելու համար, իսկ աւելի վերջին կարգադրութեան. սակայն ինչ կարող էր անել. ճակատագիրը այդչան բաժին է հանել թէ Վէհի և թէ գաղթականների համար։

Վեհափառը յայտնեց, որ միւս օրը գնում է Բիւրական և ինձ հրամայեց, որ Էջմիածնում սպասեմ մինչև իւր գալը։ Յովհաննիսին և Սմբատին էլ ընդունեց Ս. Հայրապետը, տուեց նոցա իւր սուրբ օրհնութիւնը և դուրս եկանք այդտեղից։

Յովհաննէսը գնաց Երևան, իսկ ես սպասեցի Վեհափառի վերադարձին, որ իսկապէս երկու օրից վերադարձաւ Ս. Էջմիածին։ Վերադարձած օրը գնացի ս. աջը համբուրելու, օրհնութիւնն առնելու և վերադառնալու Բագու, կամ նախ՝ Ղազախի Կողբ գիւղը, որտեղ ամբողջ դերդաստունս գրէթէ սպասումէին

ինձ արցունքով. որովհետև նրանք արդէն համոզուած էին, թէ ինձ հետ արդէն պատահել է սրեէ անբաղ-տութիւն և այդ իսկ պատճառով մի շարք հեռագիր-ներ էին ուղարկել Ս. Էջմիածին, Երևան, Իգդիր. տակայն այդ օրը Վեհափառը մի կարևոր յանձնարար-ութիւն տուեց, որ պարտական էի շտապել Զամախի։ Սուրբ Հայրապետն օրհնեց ինձ և այդտեղ շնորհեց աւագ քահանայութեան աստիճանի Սրբատառ կոն-դակը, որ քաղցը յիշատակի համար, գետեղումեմ գրքիս մէջ առաջիկայ երեսում։

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Արժանապատիւ Տէր-Արգար քահանայի Տէր-Յարութիւնեան Միաբանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Բաղու քաղաքի, հարազատի Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն։

Զանձնանուէրն քո հոգածութիւն և անկեղծաւոր ջանս որ ցուցեր տարագիր գաղթականաց 'ի բաղում ժամանակաց հետ է որպէս տեսաք անձամբ թէ 'ի լինելն մեր ի Բաղու և թէ 'ի Մայր Աթոռոյս, որ որպէս Հայր գթառատ սփոփեցեր զնոսա և առաջնորդեցեր 'ի սահմանս երկրի իւրեանց, պարտիս 'ի վերայ Մեր զնեն որպէս Հօր հասարակաց սովին Հայրապետական Կոնդակաւ վարձահատոյց լինել Քեզ։ Ուստի և ի տրիտուր ջանից քոց և վաստակոցդ Մեք շնորհեմք քեզ զպատիւ աւագութեան, լիայոյս զոլով զի հետ այսու ևս առաւել ունիցիս յարատեւել յայդմ օրինակելի և 'ի քրիստոնէական պարտիսդ զոր Տէրն ուսոց իւր հաւատացելոց։

Ողջ լինել ցանկամք Քեզ ընդ երկայն ամս։ Ամէն։

'ի 17 Յունիսի 1898 ամի և ըստ տոմարիս ՌՅԾԿԷ 'ի Հայրապետութեան Մերում Ե, ամի յԱրարատեան-Մ. Աթոռ Ս Էջմիածնի 'ի Վաղարշապատ. թ. 760.

Մ. Կ. Ա. Հայոց.

Այստեղ պէտք է ասել, որ գաղթականների. պատկանեալ դրամները չտուի իրանց անձամբ տանելու, երկիւղ կրելով թէ ճանապարհին կ'կողոպտեն նրանց. ուստի ամէնքից հաւաքեցի և ամէնքին էլ ապահովագիր տուի. խոստանալով Երևանից ուղարկել Վանայ Ռուսաց հիւպատոսին։ Եւ ահա Ս. Էջմիածնից Երևան գալով, նախ շտապեցի դէպի փոստատուն իմանալու թէ ինչ միջոցաւ կարողեմ ուղարկել Վան, 170 օսմանեան լիրայ։ Փոստատանը յայտնեցին որ դրամական ծրարով չի ունդունուիլ, այլ կարելի է մի կապոց շինել և գնահատել 1600 ռուբլի. և այնպէս ուղարկել։ Այդպէս էլ արինք և այդ կապոցը Կ. Պոլսի վրայով ուղարկեցի դէպի Վան։Միայն 120 ռուբլի թղթադրամ ընդունեցին Վան ուղարկել դրամական ծրարով։ Այդ կարգադրութեամբ ուրախացած, մի գրութիւն ուղարկեցի Վանայ Ռուսաց հիւպատոսին, խնդրելով՝ որ այդ դրամները նեղութիւն կրէ ցուցակի համաձայն բաժան է տէրերին. մի գրութիւն էլ Վանայ առաջնորդական փոխանորդին գրեցի, որ դրամները բաժանելու ժամանակ ներկայ գտնուի։ Ապա հեռագրեցի վանայ առաջնորդական փոխանորդին, որ գաղթականների մասին մի տեղեկութիւն հաղորդէ. հեռագրի պատասխանն ստացայ, որ ամէնքն էլ ողջամբ հասելեն Վան։ Ուրախութիւնս կրկնապատկուեց։

Երկու օր Երևանում պ. Տէր-Մարուքեանցի տանը անցկացնելուց յետոյ՝ ուղևորուեցի դէպի Աղստափայ և այնտեղից էլ շտապեցի Շամախի։ Այնտեղ էլ հինգ

օր մնալով, վերադարձայ Բաքու, ուր տասը օր անցկացնելուց յետոյ միայն կարողացայ վերադառնալ դէպի Ղազախի Կողբը, ընտանիքիս այցելելու։

Սակայն չնայած որ տանջանքներից և յոգնածութիւնից դեռ վերստին չէի կազդուրուած և տնա եր կու ամիս անցած, Երևանից նամակ եմ ստանում, որ դէպի Վան ուղարկածս շիրակները նորից վերադարձել է Երևան։ Եւ յուզմունքը նորից տիրեց իմ սրտիս մէջ, նորից վարանումներն ու անհանգստութիւնը տանջեցին ինձի. որովհետև բոպէաբար աչքիս առաջ եկան դաղթականները և բոպէաբար ճնշեց ինձ այն միտքը թէ՝ նրանք կարողեն կասկածանքով յիշել ինձ թէ... ինչպիսի վիշտ. կարողեն մտածել, որ ես չեմ ուղարկել...։ Ուստի նոյն օրը դիմեցի քաղաքիս փոստատան կառուարչին ներկայացրի Երևանի փոստատան տուած ստացականները և խնդրեցի ըստ կարելոյն շուտափոյթ ինձ վերադարձնել այդ դրամները։

Լիրաները ստանալուն պէս, պ. Հ. Մելիքեանի դրասենեակի կառուարիչ և հաշուապահ պ. Փ. Մարդանեանի օգնութեամբ վերածելով ռուսական դրամների, Պօլսոյ դեսպանատան միջոցաւ ուղարկեցինք Վան՝ Ռուսաց հիւպատոսին, որ մի ամսից յետոյ յայտնեց մեզ դրամների ստանալու և բաժանելու մասին, այլ և ստացանք ապահովագրերը, որոնք ես տուել էի դաղթականներին՝ դրամներն առնելու ժամանակ։ Իսկ մինչև այդ դրամներն ստանալը թէ որքան էր յուզ-

ուած ժողովուրդը, դորա ապացոյցը՝ մի շարք նամակներ էին, որոնք լի էին անվերջ գժգոհութիւններով. մինչև իսկ սպառնալիքներով ուղարկում էին ինձ։

Դրանցից միայն մարդկանց կարճամտութիւնը բնորոշելու համար զետեղումենք այստեղ, միայն երկու նամակ, որոնք ստացել եմ Վանայ առաջնորդական տեղապահից։

Առաջնորդարան Հայոց Վանայ համար 533

Բարեշնորհ Տ. Աբգար Առաք քահանայ
Տէր-Յարութիւնեանց

Ի Բազու.

Ստացաց եմ Ձեր վերջին մի գրութիւնը։ Հակառակ Ձեր ըրած կանխահոգութեանց՝ գաղթականաց դրամն տակաւին տեղը չ՝հասաւ և թշուառ գաղթականք ամեն օր արիւն արցունք թափելով մեզ կ՝դիմեն և կհարցանեն. ինչ եղաւ մեր դրամը։ Պատասխան չեմք կարող տալ այդ խեղճերուն. հիւպատոսարան կ՝ղրկեմք, այնտեղ ալ պատասխան չեն կարող տալ։ Ի՞նչ եղաւ արդեօք այդ դրամները, այստեղ ոչոք տեղեկութիւն չունի, երկինք եղաւ արդեօք, ինչ եղաւ։ Այսչափ միայն գիտեմ, որ Ձեր տուած տոմսակներն կեղծ դրամի պէս, խեղճերու ձեռք կ՝փայլին։

Ջանացէք շուտով գտնել այդ դրամն ուր որ կը գտնուի և ղրկել տալ տեղս. և եթէ կորսուած է գոնէ տեղեկութիւն տուէք, որ գաղթականք այլ ևս մոռանան և գլխնուն ճարը տեսնեն։

Կմնամ աղօթարար՝ Առաջնորդ տեղապահ Վանայ

1898 Հոկտ. 7
Առաջ. Վանայ

Ստեփան վարդապետ Աղազարեանց։

Յ. Գ. Այս մասին բանիցս ռուսական հիւպատոսարանին գիմած և պատասխան ստացած ամէն անդամ թէ տէղեկութիւն չունիմ։ Նոյն

Առաջնորդարան Հայոց Վանայ
համար 601

Բարեշնոր Տ. Սրբազան Առաք քահանայ Տէր-Յարութիւնեան նոր մեծ ս. Համբարձումի Մեղիքեան
Ի Բագու։

Գաղթականաց գրամի համար առ Զեզ ուղղածս հոկտ. 7 թուակիր գրութիւնդ յետոյ, տեղս հասաւ վերջապէս նոյն գումարն և ռուսական հիւպատոսարանի ձեռամբ տէրերուն տրուեցաւ և անոնց ձեռք եղած ընկալագիրներն առնուեցան, որք Զեզ պիտի ղրկուին հիւպատոսարանի միջոցաւ։ Միայն Բաղիշեցի Համբարձումի 8 ոսկի գրամն մնացած է, իր տեղն հեռու լինելու պատճառաւ, տակաւին կարող եղած չէ գալ և գրամն ստանալ, երբ որ վճարուի, անոր ընկալագիրն ալ պիտի ղրկուի Զեզ։

Գաղթականք մեծ ուրախութեամբ ստացան իրանց սեպհական գրամները և երախտագիտութեամբ օրհնեցին զՁեզ։ Թէև գումարի յապաղումն բաւական յուսահատեցոյց գաղթականները և մեզ ալ առիթ տուաւ ուղղելու Զեզ հոկտ. 7 թուակիր գրութիւնը, որոյ համար ներողամտութիւններ կ'խնդրեմք, սակայն գումարները ստացած ժամանակ մոռացան նախկին մտատանջութիւնները և յուզումները և նորէն վերսկսան Ձեր Ազնուութեանց մասին նոյն գովեստներ

և օրհնութիւններ, զորս իրենց վերադարձին 'ի վեր յեղյեղելու սովորեն երախտագիտական պարտաւորութեամբ։

Երկու ամիսէ ի վեր տեղոյս ռուսական հիւպատոսարանն կ'գտնուի Ձեր ղրկած 266 օսմ. լիրայի մի գումարն, որոյ գործածութեան մասին բանմը գրած չլալնուդ, մինչև յարդ անձեռնմխելի կմնայ, մանաւանդ որ ռուսական վսեմ հիւպատոսն յարդ բացակայ կըգտնուէր քաղաքէս։

Արդ կխնդրուի, որ նոյն գումարի գործածութեան մասին բարեհաճիք շուտով յայտնել Ձեր կամքը, թէ՝ արդէօք ինչ տեսակով կուզէք, որ գործածուի նոյն գումարն, միմիայն վերադարձող գաղթականաց բաշխիլ կ'կամիք, թէ՝ ընդհանուր բոլոր կարօտելոց։ Մեր կարծիքով ընդհանրապէս բոլոր կարօտելոց բաշխիլը աւելի բանաւոր պիտի լինի։

Կը յուսամ, որ որչափ կարելի է կ'հաճիք փութացնել Ձեր պատասխանը. վասն զի երկրի մէջ այն ստիճանի կարօտութիւն և յուսահատութիւն կ'տիրէ, որ շատեր մի պատառ հացի համար կը պարտաւորին հեռանալ իրանց մայրենի եկեղեցւոյ ծոցէն. ինչպէս որ արդէն մինչև յարդ յաւօր սրտիւ լրագիրների մէջ կարդացած էք, և եթէ Ձեզպիսի մարդասէր անձինք շուտով օգնութեան չ'հասնեն յառաջիկայ ձմրան մէջ խիստ շատեր անօթութիւնից պիտի մեռնին։

Սպասելով Ձեր պատասխանին, կխնդրեմ ընդունել նաև մեր խորին երախտագիտութիւնը Ձեր անձ-

նուէր ծառայութեանց համար, զորս անչափ վեհանձնութեամբ մատուցիք գաղթականաց։

Կմնամ ողջոյնիւ և օրհնութեամբ

Առաջնորդական տեղապահ Վանայ

1898 Նոյեմբ. 25 ՍՏԵՓԱՆ Վարդապետ Աղազարեանց։
ՅԱՌՄՋ Վանայ

Ցաւ ի սիրտ պէտք է ասել, որ գաղթականներից շատերը՝ աշնանը դարձեալ պարսից սահմանով վերադարձան Բազու, այդքան նեղութիւն և տանջանք կրելուց յետ. ի հարկէ մեծ մասամբ Վանայ Դզա գիւղից և Գաւառից, որոնց սովորութիւնն է Բոշայական կեանք վարելու։ Նոյնիսկ եթէ նոցա բոլորովին ևս ապահովել, դարձեալ չեն մոռանալ իրենց սովորական թափառումն մի քաղաքից—միւսը։

Իմ վերադարձնալուցս յետոյ, նախ իմ բոլոր գործադրած գրամների հաշիւ ներկայացրի պ. Մելիքեանին և ապա իսկոյն հրաժարականս տուի՝ Զամախսոյ վիճակային Ատենին, ազատ կացուցանելու ինձ Աղքատանոցի կառավարչութիւնից, որը՝ տարուոյս հազիւ թէ Դեկտեմբեր ամսում յանձնուեց Նորընծայ Արժ. Գարեգին քահանայ Ղուկասեանցին և մինչև Հայր Ղուկասեանին յանձնելը, հսկում էր պ. Աստուածատուր Կաճկաճեանցն, որը՝ իւր հայրական ջերմեռանդ հոգւով հսկում էր թէ աղքատանոցում մնացած հին աղքատներին և թէ նորեկ վերադարձող գաղթականներին. մինչև որ նա ևս համոզուեց տեսնելով այդ անշնորհք, ծոյլ թափառական գաղթականների վատ

սովորութիւնները, որոնք մեծամասնութեամբ գաղթականներ չէին կազմում, այլ թափառական մի խումբ. այնու ամենայնիւ նա չէր խնայում իր հոգատարութիւնն այդ դժբաղդ հայերի վերաբերմամբ առանց յուսահատութեամբ օգնումէր, խտրութիւն չդնելով լաւին և վատին. հետեւելով աւետարանի քաղցր խօսքերին—«Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»։ (Մատթ. Ե. գլ. 7 համար)։

5547
5548

0001495

2013